



ՓԱՐԱՎՈՐ ՏԱՄԱՐՅԱԿ



338.1
Բ-24

ՄՅԱՅԻԿՅԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ „ԿՈՄՈՒՆԻՄ“ ՔԵՐՔԻ ՀՐԱՄԱԿԳՈՒԹՅՈՒՆ

3381
Կ-24
46

ՓԱՌԱՎՈՐ ՏԱՍՆԱՄՅԱԿ

1010-1042
41899

ԺՈՂՈՎ ԱՌՈՒ
ՄՅԱԾՆԻԿՑԱՆ ՌԱՅՈՆԻ
ՏԱՄԱԱՄՑՈՎԻ ԱՌԹԻՎ



ՄՅԱԾՆԻԿՑԱՆ ՌԱՅՈՆԻԿԱՆ
ՀՀ. 4 ՄԱԿԱՐԵՎԻ ԿՈՍՏՈՎԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ

1937

28 AUG 2013

30.020

28 AUG 2013

30.020



ՆԱՄԱԿ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ՄՅԱՍՆԵԿՅԱՆ ՌԱՅՈՆԻ
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՐԱՋԱՏ, ՄԻԹԵԼԻ ԻՈՍԻՖ ՎԻՄԱՐԻՈՆՈՎԻԶ

Ամբողջ խոնրդային յերկրին այժմ ուրախություն է պատել: Ամբողջ խոնրդային ժողովուրդը տնօուս և նոր Կոնսիստուցիայի հաստատումը, վորի ստեղծողը յեզ ներշնչողը հանդիսացել է դուք, քանի կազմին ընկեր Ստալին: Չեր դեկավարությամբ նվաճել ենք սոցիալիզմի այն մեծամասն հաղթանակներ, վորոնք գրված են մեր Կոնսիստուցիայի եջերուս, վորոնք մեր մեծ հայրենիքի ժողովուրդներին բերին յեշանկություն, ուրախ, հիանալի կյանք:

Պրոլետարական նեղափոխության մեծագույն հաղթանակներից մեկն այն է, վոր նա դարավոր ստրկությունից ազատեց նեւզած ազգություններին, ջարդութեաւ արեց դարերով գոյություն ունեցած յեզ այժմ ել կապիտալիզմի յերկրներում գոյություն ունեցող ցեղային յեզ ազգային անհավասարությունը, ազգամիջյան թշնամությունը յեզ յերկառակությունը, վոր հրամրում եյին սիրող դասակարգերն իրենց շահագործական նպատակներով:

Պրոլետարական նեղափոխության հաղթանակը նախկին ճարտահարված ժողովուրդներին դաւրս բերեց ազգային ազատ զարգացման լուսավոր նանապարհի վրա ժողովուրդների բարեկամական ընտանիքում, վարտեղ նրանք ստեղծում են մի ընդհանուր գործ, ստեղծում են նոր սոցիալիստական նասարակություն:

Մեծ են յենինյան-ստալինյան ազգային հաղաքականության հաջողությունները: Վիթխարի յեն ազգային



հանրապետությունների, մարզերի յեվ ու այսների տարած հաղթանակները բոլցեվիկյան կուսակցության դեկավուրությամբ։ Համաժողովրդական տնտեսմքության այս ուերում Ազգ-Մեծովյան յերկրամասի Մյասնիկյան ռայոնի հայ բնակչությունը նույն է մի նշանավոր տարերիվ— իր ազգային ռայոնի կազմակերպման 10-ամյակը։

Ծանր յեվ տիուր ե յեղել մեր անցյալը։ Հայերը, ինչպես յեվ վուս ազգությունները խեղդվուն ելին ժողովուրդների բանում — ցարական Ռուսաստանում։ Ցարիզմի նվաճողական բաղադականությունը դուրս բեց մեր նախնիքներին Դրիմի թերակղզուց, ուր երանէ Թուրքիայից դուրս մղվելով բնակվել ելին, յեվ երանց բնակեցրեց Դռնի անծայրածիր՝ այն ժամանակվա կուսական տափաստաններում։ Մեր անցյալը, մինչեւ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունը, լցված եր ազգային նույնան, որու յեվ հայ կալվածատերների, կապիտալիսների յեվ հոգեվորականության արտասովոր շահագործության կույնարային եղերով։ Երավագրեկությունը, իշխանությունների ծանրը, ցույքը, սովոր, աղքատությունը յեվ անկուտուրական նուրբյունը — մեր տիուր կյանքի մշտական ուղեկիցներն ելին։

Միայն Լենինի-Սալինի կուսակցությունն իրականություն դարձեց մեր դարավոր յերազը հոդի մասին, միայն նաև կարողացավ վերջ տալ մեր աշխատավոր գուղացիության մշտական կարիքին, ազատել նրան ըդրաներից, կուլտակային-կալվածատիրական սորկությունից։ Նայեցե՛ այժմ մեր Մյասնիկյան ռայոնին։ Մեզ մոտ այլիկս չկալիօս մի մենատնիսն, մենք բոլորս — աշխատավոր գյուղացիությունը — միացել յեվ կազմել ենք կոլխոզներ, վարոնք հողն սացել են առհավետ յեվ ձրի ոգագործման համար։ Կուլտակների յեվ կալվածատերների նախկին հոդերի վրա, մեր նախկին չնշին հողաքածինների վրա, վորտեղ յուրաքանչյուր թիզ հողը վոռողված եր մեր բարենկով յեվ արցունով, այժմ ծաղկուս են ունեվոր կոլխոզային տնտեսություններ։ Տրակոնրներն ու կոմբայնները, կոլխոզային բարեխիղն աշխատանքը, տարեցտարի բարձրացնում են մեր դաշտեր բերքավորությունը։ Նույնիսկ կիմայական տեսակերպ անբարենպատ ներկա տարում մենք կարողացանք կրկնապատկել բնակչայի ռայոնում ազգայի առաջատար տարբերակ լրացնելու մասին օրենքը ունենալու համար։

Կուլտուրաներից սիջին նաև սահմանվ 11-ական ցեղաներ քերք ամեն մի հեկտարից։ Ռայոնի կոլխոզային ականավոր բրիգադներ՝ Կ. Յե. Քոսյանը, Պ. Չումայանը, Գարեգին Խիյանը յեվ ուրիշ տարեր հավաքեցին ամեն մի հեկտարից 25—28-ական ցեղաներ աշնանացուեն, 15-ական ցեղաներ գարնանացորեն։ Մեր ռայոնի կոլխոզները լիովին կատարելով իրենց պարտականությունը առաջ, իրենց հաջի պակեցուիից կոռպերացիային վաճառեցին 140.000 փութ հաջ։ Ստացած փողով կոլխոզներն արդեն ձեռք են բերել 19 բեռնակիր ավտոմետենաներ յեվ ահազին բանակությամբ շինանյութեր։

Մենք հարուս ենք վաչային հացով։ Մեզանում յուրաքանչյուր կոլխոզ ունի կարնապրանակային, վոչխարապահական, խոզապահական յեվ բոշնապահական մերմաներ։ Տարեց տարի մենք գերակատարում ենք անասնապահության զարգացման տարեկան պլանը։ Մեզ մոտ չկան կովազուրկ կոլխոզնիկներ։ Յուրաքանչյուր կոլխոզնիկները ունի վոչխարեներ, խոզեր յեվ տնային բոշուներ։

Ունեվոր ենք ապրում մենք, կոլխոզնիկներ։ Հեծանիվները, պատեմոնները, ժամացույցները, կոժիկները յեվ վոտնամանները՝ նախկին տեխնիների փոխարեն, գեղեցիկ բանկարժեքներ զգեստները, մետաքս տարեր մեր կոլխոզային զյուղում գարձել են ամենույա գործածության առարկա։

Առաջ մեր ծողովուրդն անգրագես յեվ անկուտուրական եր։ Ռէինակ, 1905 թվին, գյուղական ժողովում 640 ներկա գտնվածներից կարողացել են սուրագրել միայն 35 մարդ, իսկ մեացած 605 անգրազեների փոխարեն «սուրագրել ե Համբարձում Բառայաներ»։ 20 հազար հայ բնակչություն ուներ ընդամենը 5 յեկեղեցական-ծխական դպրոց ունեվոր բնակչության յերեխաների համար։ Այժմ մեզ մոտ անգրազեներ նամարյա չկան, 17 դպրոցներում սովորում են բոլոր դպրոցահասակ յերեխաները, վորոնիք ննարավորություն ունեն առանց ռայոնից գուրս գալու միջնակարգ կրթություն սահման։

Մեր ռայոնում, մինչեվ հեղափոխությունը, կար միայն յեկու բուժակես։ Այժմ մենք ունենք մի ռայոնական յեվ յեկու գյուղական հիվանդանոց, իսկ յուրաքանչյուր գյուղ ունի իր ամբուլատորիան։

Բոլոր գյուղերում կան սոցկուլտուրայի տներ, կոլխիզային ակումբներ: Կառուցված են ռայոնական յերկինարկանի ակումբ՝ հնչուն կինո թատրոնով, վորոն իր գեղեցկուրյամբ յեվ ծափառվ չի զիջու բաղաբային շատ ակումբներին ու թատրոններին; Ավարտվում է 11 կոլխոզների լրիվ եղեկտրականացումը, իսկ 1937—1938 թվին եղեկտրականցում են ռայոնի մեջած 9 կոլխոզները:

Իսկ մեր ամենազլիավոր նվաճումը, մեր ամենաաժեքավոր կապիտալը, —դրանք կուսակցության անեցրած մարդիկն են՝ սախանովականները, կոլխոզային գյուղացիության առաջապնդներն ու դեկավարները: Մեր փառապանծ տրակտորներ Անդրանիկ Կուռուզյանը, Զաբար Կոլրիքայանը, բրիգադիր Մարտիրոս Սարաբաշյանը պարգևատրված են Լենինի շքանշաններով. բացի դրանցից, կան գյուղատնտեսության տասնյակ խնամակ խնամակ ստախանովականներ, վորոնք տալիս են աշխատանքի ռեկորդային չափեր, բարձրացնում են բերքը:

Շարքային կոլխոզնիկների միջից անել են կոլխոզային կյանքի տաղանդավոր կազմակերպիչներ, կուսակցական յեվ անկուսակցական բոլցեվիկներ: Մենք ունենք մեր նոր ինտելիգենցիան, վոր դուրս են յեկել գյուղացիական աշխատավորական միջավարից յեվ այժմ աշխատում են մեզ մոտ վորպես բժիշկներ, ուսուցիչներ, գյուղատնտեսներ:

Աննանաչելիութեն բարձրացել յեվ կուլտուրավեսութանականացես անել են յերեւնի հնչուած հետամնաց մեր կանայք: Կոլխոզային կանանց միջեվ շատ կան աշխատանի խնամակ հեռոսունիներ—տրակտորների բառացյան Աղավնին, կոլխոզնիկունի Մրգունի նոր-Արեվիանը, ողակավարներ Եղիզյան Աղավնին, Խայիքաւայն Մարգարիտը, կթվոր Վարսենիկ Խարլամաջանը, ուսուցչունի Վարսենիկ Խաչկինայանը, գյուղատնտերդի նախագան Ցեղիսարեր Սուխարյանը, կուսկազմակերպիչ Մարիամ Մարգարյանը յեվ շատ այդ կանանցով, վորոնք կարող են ծնվել միայն խորհրդային հասարակակարգում, կոլխոզային կարգերում, միայն ձեր, հայրական հազարարությամբ յեվ դեկավարությամբ, ընկեր Սավին:

Սոցիալիզմի կարգը մեր ամենամեծ նվաճումն են: Վոչ վոյքի բույլ չենք սա վոտնակություն երա դեմ: Զայրույթով յեվ ատելությամբ են բորբովում մեր ժողովրդի սրբեան իրենց սոր թեմասիների՝ տրակտուսական - զինվյեվյան բանդիսների խմբի, հետապոյի: այդ զործակալների յեվ աջ հերձածողների դեմ: Արմատախիլ անելով այդ նզմված սողունի բոլոր մեացողները, սենք կուսակցության առաջին կոչին ամեն ըսպե պատրաստ ենք հետ մեր իսահարությանը խանգարելու ֆաշիսների ամեն սի փորձը: Դոնի յեվ Կուրանի կազակների հետ միասին, բոլոր աշխատավորների հետ սիամին մենք դուրս կգանք կրծքով պահպանելու մեր գեղեցիկ, սիրելի հայրենիքը:

Շնորհակալություն Չեզ, ընկեր Սավին, յերշանիկ, ազատ, ուրախ կյանքի համար, ժողովուրդների բարեկամության համար, նոր Կոնսիստուցիայի համար:

Թող ապրի՝ մեր հարազատ կոմունիստական կուսակցությունը, Չեր—բոլոր աշխատավորների ամենասիրելի առաջնորդի, նոր յեվ բարեկամի—զիսավորությամբ:

ՆԱՄԱԿ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ ՌԱՅՈՒՄ
13.194 ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՌԱՅՈՆԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՌԱՅՈՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԹՄՁԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԹՄՁԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Նշել, վոր Մյամիկյան (հայկական) ռայոնը վերջին տարիներս մի շաբթ հաջողություններ ե ձեռք բերել տնտեսական և կուլտուրական շինարարության ասպարեզում:

ա) ռայոնում ավարտված ե համատարած կոլեկտիվացումը.

բ) գյուղատնտեսական աշխատանքների հիմնական տեսաների մեքենայացումը հասել ե 79 տոկոսի.

շ) 1935 թվին «ՍՏՀ» մի տրակտորը՝ վերածելով փափուկ վարի, հերկել ե 817 հեկտար, ամեն մի կոմբայն հավաքել ե 405 հեկտար բերք.

դ) ժամկետից առաջ ե կատարված պետական հանձնումների բոլոր տեսակների պլանը Հաջողությամբ կատարվել ե անամնապահության կարգացման պլանը և վերացված ե կոլխոզնիկների կովազդիությունը.

յե) ծավալված ե հասակավոր բնակիչների կիսագրագիտության վերացման դպրոցների լայն ցանց, լավացել ե դպրոցների և հիվանդանոցների, նախադպրոցական հիմնարկների աշխատանքը.

զ) անց ե կացված 10 կոլխոզների, ՄՏ կայանի, կաթնաապրանքային ֆերմաների և ռայոնական կենտրոնի ելեկտրիֆիկացման հիմնական աշխատանքը.

2. Այս հաջողություններին զուգընթաց ռալգործկոմի աշխատանքում կան խոշորագույն թերություններ.



ա) ցածր ե բերքատվությունը, առանձնապես յեզիպ-տացորենի, արևածաղկի և վարսակի բերքատվությունը.

բ) անբավարար ե անասունների տեսակները լավացնելու և անամսապահության մթերատվությունը բարձրացնելու աշխատանքը.

գ) միանգամայն անբավարար չափով ե զարգացած տեղական արդյունաբերությունը.

դ) անբավարար ե ռայոնում ֆինանսական բյուջետային աշխատանքի դրությունը.

յե) անբավարար ե ակումբների, խրճիթ-ընթերցարանների, գրադարանների և ռադիո-հանգույցի դրությունը և աշխատանքը.

զ) վատ ե բարեկարգված ռայոնական կենտրոնը, ինչպես նաև բացակայում ե ռայոնական իննտրոնի հեռախոսային կապը բոլոր գյուղական խորհուրդների հետ:

3. Պարտավորեցնել Մասնիկյան ռայզործկոմին 1936 թվին ապահովել հետեւյալը:

ա) ռայոնական ակումբի և խրճիթ-ընթերցարանի կառուցման ավարտումը և սարքավորումը՝ ծախսելով 40 հազար ռուբլի:

բ) ռայոնական գրադարանի և շարժական գրադարանի կազմակերպումը, ռադիո-հանգույցի և կուսկաբինետի սարքավորումը, ծախսելով 60 հազար ռուբլի:

զ) Զալթրում արտեղյան ջրհորի և բաղնիքի կառուցումը:

4. Առաջարկել Ազով-Սևովյան Յերկր գործկոմին՝

ա) 1936 թվին ավարտել Մասնիկյան ռայոնի բոլոր գյուղխորհուրդների հեռախոսացումը:

բ) ձեռնարկել ռայոնական կենտրոնում դպրոցի կառուցմանը՝ գյուղական դպրոցական շինարարության միտի հաշվին:

5. Ըստ շինարարության և ռայոնական արդյունաբերության ձեռնարկությունների վերակառուցման լիմիտների, Մասնիկյան ռայոնում աղյուսի, կղմինդրի, կերի արտադրությունը զարգացնելու համար հատկացնել 100 հազար ռուբլի, հանձնարարելով Ազով-Սևովյան Յերկր գործկոմին, Մասնիկյան ռայզործկոմի հետ միասին մի ամսվա ընթացքում մշակել տեղական շինանյութերի վերոհիշյալ տեսակների արտադրության պլան:

6. Առաջարկել առողջապահական ժողկոմ ընկեր Կամինսկուն Առողջապահական ժողկոմատի ֆոնդից Մյասնիկյան ռայոնին հատկացնել 50 հազար ռուբլի՝ հիվանդանոցի վարակիչ հիվանդությունների բաժանմունքի համար շենք հարմարեցնելու և սարքավորելու համար:

7. Մյասնիկյան ռայզործկոմի բյուջեյի համաձայն լրացրցիչ կերպով հատկացնել 100 հազար ռուբլի ռայոնական կենտրոնի և ռայոնի լավագույն գյուղխորհուրդությունների բարեկարգության համար:

Սուածարկել ֆինժողկոմատին շրջանառության հարկի տոկոս սահմանելիս այդ գումարը զեղչել Ազով-Սևովյան յերկրամասին:

8. 1936 թվին Մյասնիկյան ռայզործկոմին հատկացնել 1 բեռնատար ավտոմեքենա, 1 մեքենա շտապ ռզնություն կազմակերպելու համար և մի մարդատար ավտոմեքենա:

9. Առաջարկել Մյասնիկյան ռայզործկոմին վճռականապես լավացնել ռայոնում ֆինանսական բյուջետային աշխատանքը ղեկավարելու գործը, ապահովելով ընակչության և պետական յեկամուտների միջոցների մոբիլիզացիան, ինչպես նաև ֆինանսական բյուջետային դիսցիպլինայի խստագույն պահպանումը:

10. Պարտավորեցնել Մյասնիկյան ռայզործկոմին ուժեղացնել ռայզործկոմի և գյուղխորհուրդների աշխատանքը՝ բերքատվությունը բարձրացնելու, անասնապահության մթերատվությունն աճեցնելու, ռայոնի կոլխոզնիկների և աշխատավորների կուլտուրական կենցաղային կարիքներն սպասարկող նիմնարկների աշխատանքը լավացնելու համար, հայկական աղբային ռայոնի կազմակերպման առաջիկա տառնամյակն ոգտագործելով ռայոնի տնտեսական և կուլտուրական շինարարության ասպարիզում ավելի լավ ցուցանիշներ նվազելու համար:

ՌԱՖԻՆ. ԺԱՂԱՄԽՈՐԵԲ նախագահի տեղակալ՝

ՌԱՖԻՆ. ԺԱՂԱՄԽՈՐԵԲ գործերի կառավարիչ՝

Ի. ԳԵՐԱՍԻՄՈՎ,

ՊԱՅՔԱՐԻ ՅԵՎ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏԱՍ ՏԱՐԻՆ

Սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակից հետո
տարվա ընթացքում և Ալեքսանդր Ֆյոդորովիչ Մյասնիկյանի
անվան հայկական ռայոնի կազմակերպման 10 տարվա ընթաց-
քում ռայոնի բնակչության տնտեսական կենցաղաձևում և կյան-
քում այնպիսի պատմական փոփոխություններ են կառարգել և
այնպիսի հաղթանակներ են ձեռք բերվել վորոնք իրավունք են
տալիս կոլխոզնիկներին և ամրող բնակչությանը ռայոնի կազմա-
կերպման առնակատարության:

Առաջին խոսքը և կոլխոզային շնորհակալությունը ռայոնի
բնակչությունն արտահայտում և սոցիալիստական հաղթանակ-
ների մեծ կազմակերպիչ, հայր, բարեկամ և ուսուցիչ ժողովուրդ-
ների առաջնորդ Ընկեր Ստալինին, նրան գրած նամակում: Ռա-
յոնի՝ անցյալում հարստահարված հայ աշխատավորները, ինչպես
և մեր մեծ սոցիալիստական հայրենիքի բոլոր աշխատավորները,
սոցիալիզմի շինարարության մեծագույն հաղթանակի համար
պարտական են նրան — յերջանիկ, ունեմոր կյանքի ճարարա-
պեսին:

Այժմ, յերբ լինինյան-ստալինյան ազգային քաղաքականու-
թյունը հաղթանակ տարավ, յերբ «Խորհրդային Միության ժո-
ղովուրդների միջև յերեմնի անվտանությանը վաղուց արդեն
վերջ և տրված, յերբ անվտանությանը փոխարինել և լիակատար
փոխադրձ վստահությունը, յերբ Խորհրդային Միության ժո-
ղովուրդների միջև յեղած բարեկամությունն աճում և ամրանում
է» (Ստալին), հենց այժմ, յերբ հայերը, կազմակները և ռայոնի
ուրիշ բնակիչները, վորպես միասնական ընտանիք, հաղարսության
միենույն զդաշմունքով տոնում են ազգային ռայոնի կազմա-
կերպման տառնամյակը — հետաքարձ հայացք ձգելով՝ նրանք
հիշում են հայ աշխատավոր գյուղացու կյանքի անիծությունը:

յայլի մղձավանջային եջերը ցարական Ռուսաստանում — ժողո-
վուրդների այդ մոայլ բանտում:

* * *

Իայոնում այժմ բնակություն հաստատած հայերի նախնիք-
ները, հալածվելով թուրքական ֆեոդալներից, հայտնվեցին Ղրիմի
թերակղզում, յերբ թուրքերը 13—14 դարերում ջախջախեցին
հայկական ֆեոդալական պետությունը:

Միապետական Ռուսաստանը Ղրիմի թերակղզին նվաճելու
նպատակով, վրայեսզի իրեն ամրացնի այդ համալիք բնակչությանը՝
հայերին, հույներին, վրացիներին և այլ ժողովուրդներին Ղրիմի
թերակղզուց վտարելու քաղաքականությանը: Այդպես, Յեկա-
տերինա Հայութի «Վողորմած հայանգով» 1779 թվին հայերը
Ղրիմի թերակղզուց տեղափոխվեցին Դոնի կուսական տափաս-
տանները: Ներկա Ռուստով քաղաքի շուրջը կազմվեցին հայկական
հինգ գյուղեր՝ Չալթը, Թոփտի (Ղրիմ), Մհեծ-Սալա, Սուլթան-Սալա,
Նիսվիթա: բնակավայրերի մի մասն ել հաստատվեց Ռու-
ստովի մոտը (Նոր Նախիջեվանը և հայկական վանքը):

Հայ հոգեվորականությունը և կալվածատերերը, Յեկատերի-
նայից նվեր ստանալով ահագին հողամասեր, արտահայտելով
իրենց հավատարիմ հպատակության ստրկամտությունը ռուսա-
կան միապետությանը, դաժանորեն շահագործում եյին հայ աշ-
խատավոր գյուղացիությունը, վորպեսզի հարստանան և հարս-
տացնեն ցարական գանձարանը:

Շերունիներն ատելությամբ են հիշում Խալիբի անունը, վորն
իր դաժան շահագործությամբ առաջացրել եր ագրարային ալե-
կոդումներ հայ գյուղացիության միջև: Նրան — Խալիբին, վորը
հանդիսանում եր ցարական Ռուսաստանի հայ կալվածատերերի-
և հոգեվորականության ներկայացուցիչը հայ աշխատավոր ժո-
ղովրդի հարստահարման գործում, պատկանում են հետեւյալ թե-
քավագոր խոսքերը: «Ձեզանից կքամեմ ամեն բան, վորպեսզի հնա-
բագորություն չտամ ձեզ ունենալու նույնիսկ սոխի ցողունից
հյուսած գոտի»:

Ավելի հեղափոխականորեն տրամադրված գյուղացիները միա-
նում և կտղմում եյին կտրիճների խմբակներ: Մեծ Սալայում,
Թոփտիում, Չալթը և այլ գյուղերում մի քանի տասնյակ
ձիավորներ — կտրիճներ, հարձակումներ եյին կատարում կալվա-

ժատերերի ագարակների վրա, վորոնք իրենց ձեռքն եյին վերցրել արգավանդ հողերի մեծ տարածությունները Խալիքի և այլ կտվածատերերի հավատակության մատնությամբ, ուսւական ցարն ուղարկում եր ուսւական զինվորների պատժի շօկատները։ Այդ ջոկատների անկարգություններն ու գաժանություններն այնպիսի անջնջելի տպավորություն եյին թողնում, վոր մինչեվ մոտիկ անցյալը գեղջկուհի մայրն իր մանկանը հանգուտացնելու համար շնչում եր նրա ականջին ։ Հոգի, թե չե կգա կուցի — սոլդաթը (վոր նշանակում եր եկզեկուցիոն զինվոր)։

Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը սովորագիտությունը և հետամնացությունը հանդիսանում եյին ուսունի հայ աշխատավոր գյուղացիության մշտական ուղեկիցները։

Գյուղական ժողովներից մեկում 1905 թվին ներկա եյին 640 տղամարդ, ժողովի համախոսականի տակ կա 35 մարդու ստորագրություն, իսկ հետո այսպիսի գրություն։ «Վերևում թված 605 մանգրագիտա քաղաքացիների և իմ փոխարեն ստորագրեցի Համբարձում Բարացյան»։

Հինգ խոշորագույն գյուղերում, վորտեղ ապրում եր մինչև 20 հազար հայ բնակչություն, կային ընդամենը հինգ յեկեղեցական ծխական դպրոցներ, վորտեղ սովորում եր դպրոցահասակ յերեխաների 10—15 տոկոսը և այն ել համարյա բացառապես կուլակների և ունեոր բնակչության յերեխաները։ Զալթրում 1904 թվի ընթացքում յեկեղեցական-ծխական դպրոցների խնամքի համար տարեկան նախատեսվում եր 250 ոռորլի, բուժակի համար, վորը նաև ծաղիկ պատվաստող եր և սափրիչ, — 70 ոռորլի տարեկան, թերթերի և որենքների բաժանորդագրության համար — 15 կան, մինչեւ մաղթանքների, յեկեղեցու խնամքի համար — 320 ոռորլի, մինչեւ մաղթանքների, համար կա 15 կան, առաջուրապետների և տասնապետների համար — 1694 ոռորլի տարեկան։

Ռուսական ցարիքն անցկացնելով ազգային ճնշման քաղաքականությունը, հայկական գյուղերում վարչական պաշտոնների վրա նստացնում եր ուսւական զինվորների և ամեն կերպ արգելում կայ կայական ազգային կուլտուրայի զարգացմանը։ Վորպես այդ անցյալի ժամանակակիցների և այն վոր ուսունի հայերը չեն տիրապետում հայկական գրական լեզվին և տեղական հայկական արարաբառում կան թուրքական, թաթարական, քրդական և արարաբառբառում կան թուրքական, թաթարական, քրդական և արարաբառ կան լեզուների տարրեր, վորոնց մեջ զգալիորեն գերակշռում են ուսւական բառերը։

Բարբարոսային շահագործման և ազգային ճնշման գեմ յեղած պայքարում աւայոնի ճնշված հայերի ծոցում կոփկեցին այնպիսի հեղափոխական բոլցեկներ, ինչպես Ալեքսանդր Ֆյոդորովիչ Մյասնիկյանը և Սերգեյ Լուկյանովիչ Լուկաշինը։

Գյուղական ժողովների կենդանի սասնակիցները պերճախոս կերպով պատմում են բոլցեկների կուկաշինի և մենշևիկներ Պաւրայան Գրիգորի ու Տերտերյան Համբարձումի միջև յեղած ընդհարումների մասին հիմնադիր ժողովի ընտրությունների ժամանակ։

Շատերը դեռ հիշում են Բարանովի սպիտակզվարդիական պատժիչ ջոկատի բանությունները քաղաքացիական պատերազմի տարիներին, հիշում են, թե ինչպես գնդակահարում եյին կարմիր բանակայիններին, բարձրացնում եյին կախաղաններ, ծեծում եյին չքավորներին և միջակներին սպիտակ բանակում ծառայելուց հրաժարվելու համար։ Սովորության Յեղիան, Ղազարյան Գաբրիելը, Բաղիկյան Լուսեղենը, Սիմավոնյան Լուսեղենը և ուրիշ գյուղացիներ այդ ժամանակ մեռան զազանացած սպիտակ ավազակախմբերի ծեծից։ Հենց նույն ժամանակ բնակչության ունեվոր մասից քիչ մարդիկ չիյին գտնվում, վորոնք կամավոր կերպով ծառայում եյին սպիտակզվարդիական ջոկատներում, որինակ՝ Բարյան Մարտիրոսը, Այգինյան Թաղեվոսը, Թիքիջյան Գասպարը, Նորլուսինյան Խաչերեսը, Ցավրույան Ղեղինդը, Տարասյան Մարգարը և ուրիշները։

* * *

Սպիտակների ջախջախումից անմիջապես հետո չկազմակերպվեց ներկայումս գյուղերուն ունեցող Մյասնիկյան ազգային ուսունը, և ո կազմակերպվեց միայն 1926 թվին։

Ռայոնի կազմակերպմանը համառորեն դիմադրում եր Գաճյանների բացահայտ հականեղափոխական ավազակախումբը։

1925 թվի ոգոստոսի 26-ին Դոնի Գործադիր Կոմիտեն վորոշում կայացրեց Աքսայի ռայոնից առանձնացնել Զալթը, Թոփտի, Մեծ-Սալա, Սուլթան-Սալա, Նիսվիթա և Մյասնիկավան հայկական գյուղերը, վորոնք գտնվում են իրար մոտ Ռոստովի շուրջը, ավելի քան 20 հազար բնակչությամբ, և կազմակերպել վորպես հայկական ինքնուրույն ռայոն։ Այդ վորոշմանը կատաղի գիմազությունը ցույց տվին և. Գաճյանը, վորն աշխատում եր վորոշման կա 14(բ) և Աքսայի ռայոնից քարտուղար, նրա հայր Մ. Գաճյանը, վորն աշխատում եր Դոնի շրջանային Վերահսկիչ համաժողով. հանդիպուղական անդամության մեջ և նշանց նման հականեղա-

փոխականները, վորոնք կարողացել եյին թափանցել մեր կուսակցության մեջ, դրավել պատասխանատու պաշտոնները և խօսակազմները, նպատակ ունենալով կողոպտել, անկյունից սպանել հասարակական աշխատող զյուղթթակիցներին և ամեն կերպ արգելել կյանքում կիրառելու լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը:

1925 թվի սեպտեմբերի 11-ին Խ. Գաձյանը ՀԿ(բ)Կ Աքսայի ռայկոմի բյուրոյում անց ե կացնում հետևյալ վորոշումը.

«Հայկական հատուկ ռայոնի առանձնացման վերաբերյալ հարցի առաջքաշումը համարել աննպատակահարժար», Այդ վորոշումով ՀԿ(բ)Կ ռայկոմը խնդրում է կուսակցության Դունի կոմիտեյին փոխել Դունի Գործկոմի ոգոոտոսի 26-ի վորոշումը, պատճառաբանելով, վոր ազգային ռայոնի կազմակերպման հարցը դրվում ե «Հայկառակ գյուղական կազմակերպությունների և իրեն բնակչության կամքի ու ցանկության»:

1925 թվի հոկտեմբերի 3-ին Գաձյանների հականեղափոխական խմբակը հավաքեց հայկական գյուղերի կոմունիստների և կոմյերի իտականների միացյալ ժողով, վորտեղ ներկա եյին 94 մարդ (ի դեպ ասած այդ կոմունիստների և կոմյերի իտականների մեծամասնությունը դեռ 1921 թվից սկսած կազմել եր քրեական և քաղաքական բանդիտների խմբակ) և վորտեղ կայացրած վորոշումով հագանություն եր տալիս հայկական ռայոնի կազմակերպման դեմ բողոքող ՀԿ(բ)Կ Աքսայի ռայկոմի վորոշմանը:

Անցավ ելի 6 ամիս և այդ ժամանակամիջոցում հայկական գյուղերում դասակարգային պայքարի սրման հետևանքով (գյուղթթակից Բայան Դրիգորի, կոմունիստ հասարակական աշխատող Բողաթյան Հակոբի սպանությունը Գաձյանների կողմէց, մի շարք կողապուտներ և անասունների գողացումներ, դարձյալ Գաձյանների կողմից կատարված), միացյալ Պետքաղվարչության մարդինները հայտաբերեցին, մերկացրին, վերացրին և վոչնչացրին գաձյեվշինան, վրապես քաղաքական բանդիտիզմի խմբակ:

Ազտովելով Գաձյանների ավագակախմբի ազդեցությունից և սպառնալիքներից, բնակչությունն ազատորեն խոսեց և իր պահանջը ներկայացրեց ազգային ռայոնի կազմակերպման անհրաժեշտության մասին, դպրոցական ցանցի, հիվանդանոցների, ակումբների, լայնացման մասին և ամբողջ կուլտուրական մասնայական աշխատանքը հայերեն լեզվով անցկացնելու մասին:

1926 թվի մայիսին Համառուսական կենտրոնակումը հաստատեց հայկական ինքնուրույն ռայոնի կազմակերպումը՝ Սորհուրդների ռայոնական առաջին համագումարը միահամուռ վորոշում ընդունեց իր նոր կազմակերպված ազգային ռայոնին տալ բոցվածքը բոլշևիկ Ա. Ֆ. Մյասնիկյանի անունը:

* * *

Կուսակցության և կառավարության ցույց տված տնտեսական ոգնությունն աշխատավոր գյուղական բնակչությանը, ղըպցական ցանցի ընդարձակումը, բոլոր գյուղերում խճիթ-ընթերցարանների կազմակերպումը և կուլտուրական-մասսայական անցկացվող ուրիշ աշխատանքները, ձեռվ ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի մուտքը, կյանքի կոչեցին չքափուների և միջակների մասսայական շարժումը՝ միանալ և կազմել կոլեկտիվ տնտեսություն և այդ հիման վրա վերացնել կուլակությունը վորպես դասակարգ:

Մեր ռայոնի կոլխոզները գուրս չնացին դասակարգային կատաղի պայքարի ասպարեզից:

Մինչև վերջ չջախչախված կուլակային տարրերը, մտնելով կոլխոզները, ոգտվելով կոլխոզների, խորհուրդների և ռայոնի ղեկավարության գլխին կանգնած մի շարք կոմունիստների դասակարգային կուլտությունից, առց եյին կացնում իրենց քայքայիչ աշխատանքը կոլխոզի ներսում, վասարարությամբ անողոքաբար գոչնչացներով լծկանը, գործիքները, հացը:

Բավական և ասել, վոր 1931 թվից մինչև 1933 թվի փետրվարը ռայոնի կոլխոզներում գոչնչացվեց 2162 ձի, 2360 յիզ։ Մնացած լծկանն այնքան ուժապառ եր յեղեւ վոր կեսից ավելին չեր մասնակցում գարնանացանի անցկացմանը, իսկ կոլխոզներում յեղած սերմացույի քանակը բավարարում եր 1933 թվի գարնանացանի պլանի միայն 17 տոկոսը։

Կուլակության կողմից կազմակերպված սարոտաժի հետեանքով կոլխոզները ըրկվեցին սպասվելիք առատ բերքից։

Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ ՄՏ կայաններին կից ստեղծված քաղբաժինները կարողացան արագորեն բոլշևիկաբար իրենց շուրջը համախմբել կոմունիստներին, կոմյերիտականներին և կոլխոզային անկուսակցական ակտիվին, սրել նրանց դասակարգային գահարարությունը՝ որպատկարագային թշնամուն ճանաչելու և նրան կուլտուրային վեհականի համար։

Փառագր տասնամյակ — ՀԱՅՀ-ՕԾԲ Ա.

Վճռականորեն մաքրելով կոլխոզները դասակարգային անհարազատ տարբերից, քաղբաժնի աշխատողները կոլխոզներում ծավալեցին մասսայական ահագին աշխատանք, կոլխոզնիկների գիտակցությանը հասցնելով կուսակցության առաջնորդ ընկեր Ռտալինի լոգունդը՝ «բոլոր կոլխոզները դարձնել բոլցեկցիան, իսկ կոլխոզնիկներին ունեվոր»։

Կուսակցության և կառավարության ցույց տված ահագին ոգնությունը տրակտորներով, սերմացույով և պարենեղենով հնարավորություն տվեց կազմակերպել կոլխոզնիկներին, հաջող կերպով անցկացնել բոլոր գյուղատնտեսական աշխատանքները և ժամկետից առաջ կատարել հացամթերությունների պետական պարտավորությունները 1933 թվին և հետագա տարիներին։

Կուլակության կողմից կազմակերպած սաբուտաժի ջախջախումը հետո, 1933 թվից սայոնի կոլխոզներն սկսեցին անշեղ կերպով կազմակերպչորեն և տնտեսապես ամրանալ։

* *

Դաշտավարությունը հանդիսանում է ույոնի տնտեսության առաջատար ճյուղը՝ Ներքեռումը բերվող թվերը բնորոշում են, թե ույոնի կոլխոզներն ինչպես են կատարում կառավարության և կուսակցության առաջարգած կենտրոնական խնդիրը գյուղատնտեսության ասպարեզում, բերքատվության բարձրացման խնդիրը։

Մյասնիկյան ռայոնի հիմնական զյուղատնեսական կուտարանների բերքատվությունը (ցենտրով մի հեկտարից)

	1926 թ.	1929 թ.	1933 թ.	1934 թ.	1935 թ.	1936 թ.
Աշխանացան հաճար	4,4	5,9	7,5	8,2	6,7	11,2
» ցորեն	5,9	4,4	5,8	5,7	7,0	20,6
Քարնանացան ցորեն	5,9	5,9	7,5	5,4	6,5	9,1
» գարի	5,9	8,1	11,0	5,2	8,6	9,9
Վարսակ	6,9	7,4	2,3	6,6	7,9	12,8
Կորիկ	7,4	5,9	4,2	0,5	1,5	2,0
Ցեղիպացարեն	8,1	3,8	10,7	5,8	2,5	8,7
Արեածալիկ	5,1	4,4	5,0	4,0	3,0	9,2

Հայտնի յեւ, վոր 1934, 1935 և 1936 թվականները կոլխայական տեսակետից անբարենպաստ տարիներ եյին բարձր բերք ստանալու համար, հատկապես 1936 թիվը (ապրիլի 20-ից մինչև հունիսի 12 սայոնում բարորովին անձրեներ չտեղացրին), բայց և այնպես կոլխոզները տարեցտարի ստանում են բարձր բերք։

Թայոնի կոլխոզների բերքատվության անընդհատ բարձրաց ման հիմնական պայմանները հանդիսանում են՝ կոլխոզիվ աշխատանքի կազմակերպումը, մեքենացման աճումը, վորը կրծառում և դյուղատնտեսական աշխատանքների ժամկետները, ագրոտեխնիկական միջոցառությունը, սոցմրցման աճումը, հարգածայնությունը, ստախանովականների շարքերի բազմապատկումը և կոլխոզնիկների նյութական դրության լավացումը։

Վերջինս իր հերթին չեր կարող չփոխել կոլխոզնիկների վերաբերմունքը դեպի կոլխոզային աշխատանքը և կոլխոզային սեփականությունը։ Յուրաքանչյուր աշխատունակ կոլխոզնիկի աշխարհերի միջին քանակը կազմում եր 1931 թվին—102, 1932 թվին—125, 1933 թվին—160, 1934 թվին—186, 1935 թվին—231, իսկ 1936 թվի 9 ամիսների ընթացքում—230 որ։

* * *

Ընկեր Միկոյանի անվան ՄՏ կայանը, վորն սպասարկում եռայոնի բոլոր 20 կոլխոզները, կազմակերպվել եր 1931 թվին։ Հազիվ թե անհամեշտ լինի խոսել այն ահագին դերի մասին, վոր խաղաց ՄՏ կայանը մեր կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամրացման գործում։

Ահա թվի, վորոնք ցայտուն կերպով բնորոշում են տրակտորների, կոմբայնների և այլ մեքենաների արտադրողականության աճումը։

Քոլխաններ	Քառակտորներ	Կոմբայններ	Գիգերներ	Ավտոմեք.
Քառակտորներ	Համարմել հավաքված լավագությամբ և հակառակ պարագաներում	Համարմել հավաքված լավագությամբ և հակառակ պարագաներում	Բարդաբարձրացնելու համար բարերար բարակացնելու համար անդունությամբ և հակառակ	Ավտոմեքների ընթացքում 1,5 տոննի ընթացքում աշխատավայրում առևտնության մեջ
1931 թ.	48	10896	227	—
1932 թ.	32	20493	640	2
1933 թ.	45	24525	545	13
1934 թ.	70	34709	550	13
1935 թ.	76	63438	834	16
1936 թվի 10 ամիս	10	75000	735	24
			12574	526
			526	11
			780	71
			6,3	90635

Այդպիսով վեց տարվա ընթացքում ՄՏ կայանի տրակտորային պարկն աճել է ավելի քան յերկու անգամ և ներկայումս կոլխիզային գյուղացիական հատվածի ընդհանուր քաշող ուժի հաշվելիքում է 50,3 տոկոս 1931 թվի 18 տոկոսի դիմաց:

Այս տարի տրակտորներով կատարած վարը կազմում է 98 տոկոս, գարնանացանք՝ 82 տոկոս, աշնանացանք՝ 100 տոկոս: Բերքահավաքը կորայնաներով կազմում է 50,5 տոկոս: Գյուղատնտեսական աշխատանքների ժամկետների կրծատման, հետեապես բերքատվության բարձրացման գործում վճռականը—դատրակտորների, կոմբայնների և ուրիշ մեքենաների արտադրողականության բարձրացումն է ըստ տարիների:

Այդ մասին պերճախոս կերպով ասում են յուրաքանչյուր տրակտորի կատարած աշխատանքի վերաբերվող թվերը: 1931 թվին՝ 227 հեկտար, 1935 թվին՝ 834 հեկտար: Յուրաքանչյուր կոմբայն 1933 թվին հավաքել է 42 հեկտար, իսկ 1936 թվին՝ 526 հեկտար: Պետք են նկատել, վոր տրակտորի և կոմբայնի միջին աշխատաչափը մեր ռայոնում բարձր է յերկրամասի և Միության միջին աշխատաչափից: 1935 թվի գյուղատնտեսական տարվա վերջում տրակտորիստները, կոմբայնագորները և ՄՏ կայանի բանվորները տոնելով ՄՏ կայանի կազմակերպման հնդամյակը, ընկեր Միկոյանից ստացան հետեւյալ վոլոշույնի հեռագիրը.

«Չալթը, Ազով-Սևվծովյան յերկրամասի Մյասնիկյան ռայոնի Միկոյանի անվան ՄՏ կայան»:

Կոմբայնավարներին, տրակտորիստներին, Չալթըի ՄՏ կայանի վերանորոգիչ բանվորներին վողջույն և ցանկություններ, վոր 1936 թվին լինեք բերքատվության ստավենյան արշավի առաջին շարքերում: Ցանկանում եմ ձեզ բոլցենիկորեն պայքարել կոլխոզային շաշտերում իրականացնելու համար կուսակցության առաջնորդ ընկառավինի լոգունդը՝ 7—8 միլիարդ փուլի հացի մասին: Ա. Միկոյան»:

Ազրոտեխնիկական միջոցառությունը, վորոնք ծառայել են վերջին չորս տարիները բարձր և կայուն բերք ստանալուն, պետք են ընդունել այն փաստը, վոր մենք 1934 թվից հաստատորեն մոցրինք ցանքարշանառությունը, դադարեցրինք ծանծաղ վարը, կրծատեցրինք գյուղատնտեսական աշխատանքների ժամկետները, լուրջ պայքարը տարածությունում դեմք, հերկեր արինք և մշակեցրինք, աշնուարը հասցըինք այն չափին, վոր 1936

թվին ամերող գարնանացանը ցանեցինք աշնանավարի տարածություններում:

Այդ բոլոր ազրոտեխնիկական միջոցառությունները հնարավորություն ավիին մեզ տարեցտարի անշեղորեն բարձրացնել կոլխոզային գաշտերի բերքը:

Սակայն կուլտուրաների միջին բերքը և աշնանացան ցորենի համեմատաբար բարձր բերքը 1936 թվին վերջին սահմանը չե և հետեաբար չի կարող մեզ բավարել: Մեր ռայոնի կոլխոզներն ընկեր Ստալինի լոգունդը՝ 7—8 միլիարդ փուլի հաց ստանալու մասին կյանքում կիրառելու համար 1937 թվին առնվազն պետք է ստանան 15—17 ցենտներ միջին բերք ամեն մի հեկտարից:

Այդ խնդիրը մենք կարող ենք գլուխ բերել, վորի լուծումով արդեն զրադված են ռայոնի ամերող կուսակցական կազմակերպությունը, խորհուրդները և հասարակայնությունը: Դաշտավարության հետ զուգընթաց ռայոնում անասնապահությունը հանդիսանում է տնտեսության զարգացած ճյուղ:

Թե ռայոնն ինչպես եր պայքարում անասնապահության խընդիրը լուծելու համար, վորպեսզի «1934 թիվը դառնա և կարող ե դառնալ ամբողջ անասնապահական տնտեսության վերելքի բեկման տարի» (Ստալին), ցույց ե տալիս ներքեվում բերվող աղյուսակը.

	1933 թիվ	1934 թիվ	1935 թիվ	1936 թիվ
Անառունների աեսակները	Համայնքը՝ դաժ	Կոլխոզների: անհատ ու առագրծման	Համայնքը՝ դաժ	Կոլխոզների: անհատ ու առագրծման
Կովեր . . .	1156	2757	1321	2825
Մանր յեղջերավոր անասնաներ . . .	1336	530	1796	2127
Ցեղներ . . .	1129	—	1185	—
Զիեր . . .	696	—	779	—
Քուսականներ . . .	30	—	84	—
Վայիսարներ . . .	3297	157	3908	402
Խողիեր . . .	362	33	303	301
Քաջուններ . . .	3922	—	7135	—
			10163	—
				16563

Աղյուսակից յերեվում ե, թե ինչպես տարեցտարի անասունների բոլոր աեսակներն աճում են: Չորս տարվա ընթացքում մեղերավոր անասունների աճումը կազմում է 96,9%, վոչխարնե-

րինը—150,8%, խողերինը—445,8%, ձիերինը—110,2% և հավերինը թոշնապրանքային ֆերմաներում—322,3%:

Չսայած ձիերի զգալի աճմանը, բայց և այնպես ձիերի վորակական և քանակային աճը շարունակում է մնալ անասնապահության հետ մնացող տեղերից մեկը:

Համայնացված սեկառորդ անասունների քանակի աճման դուրընթաց աճել են անհատական ոգտագործման անասունները: Միայն 1935 թվին ույայոնում կովազրկությունը վերացնելու հարգով կոլխոզներին տրված ե 319 գլուխ հորթ ու կով, 220 գոչիսար, 96 խոզ և այլն: 1936 թվի ընթացքում տրված ե 276 հորթ ու կով, 2182 գոչիսար, 607 խոզ:

Ռայոնն իր տասնամյակին գալիս ե վոչ միայն կոլխոզների կովազրկությունը վերացրած, այլ և նրանով, վոր կոլխոզները ձեռք են բերել մանր անասուններ և մեծ քանակությամբ թուջուններ:

Քիչ աշխատանք չե կատարված անասունների տեսակները լավացնելու և կաթնատվությունը բարձրացնելու համար, «Ազատություն», Միկոյանի անվան, «Հեղալիք» և «Աշխատանք» կոլխոզների անասունների մինչև 80 տոկոսը կազմում են զերմանական կարժիք ցեղի կովերը և մատղաշները: Վոչիսարների տեղական պակաս արժեքավոր տեսակներն արագործն դուրս են մըղովում պրեկոս ցեղի կողմից:

Միայն այս տարի ույայոն ե բերված 1000 գլուխ գտարյուն պրեկոս: Զվարեր հավերը (լեբճորն), վորոնք ստացվում են ույոնի սեփական ինկուբացիոն կայանում, կոլխոզային թոշնաֆերմաներում և կոլխոզների մոտ, դուրս են մղել հավերի նվազարժեք տեսակներին:

Անասնապահության զարգացման պետական պլանի կատարման դուրընթաց, անասունների բոլոր տեսակները հետագայում ավելի լավացնելու, անասնապահությունն արդյունավետ հիմքերի վրա փոխադրելու հարցերը, կերպ հենակետի լուծումը—հանդիսանում են որվա հրատապ հարցերը, վորոնց իրականացման համար մենք դեռ քիչ չպետք ե աշխատենք:

* * *

Կոլխոզների տնտեսության մեջ բանջարանոցային տնտեսությունը զաշտավարությունից և անասնապահությունից հետո պակաս կարելոր նշանակություն չունի: Բանջարանոցային տըն-

տեսության ընդհանուր բերքը 1936 թվին քանակի տեսակետից կազմում ե 29,136 ցենտներ: Ռայոնի մոտիկությունը յերկրածասի մայրաքաղաքին անհրաժեշտ պահանջ ե առաջացնում հետագայում լայնացնել բանջարանոցային տնտեսությունը:

Բանջարաբուծության զուգընթաց ակտուալ խնդիր ե գառնում հատապտուղ կուլտուրաների արմատավորում՝ յելագ, մորի, հաղարջ և այլն, պտղատու և խաղողի այգիների տնկումը: Այդպիրծության այդ չափազանց արդյունավետ կուլտուրաները ույոնում համարյա չկան: Մոտակա 2—3 տարում նրանք պիտք ե առատորեն լինեն և կինեն: Դա իր հերթին կնպաստի մեղվաբուծության ուժեղ զարգացմանը: Հենց այդ տարիներում մենք կհասնենք մեղվաբուծության այնպիսի զարգացման, վոր մեր կունզներում կլինի մեղրի առատություն:

* * *

Մենք անսպառ հնարավորություններ ունենք տեղական արդյունաբերության զարգացման համար, գլխավորապես շինանյութեր արտադրելու տեսակետից: Մինչդեռ 1935 թվին արտադրվել ե միայն 240 հազար խորանարդ մետր ավագ, 10 հազար տոնն քար, 1000 տոնն կիր և մեկ ու կես միլիոն հատ աղյուս:

Ույայոնում կա 3 գլանավոր ալյուրաղաց, վորոնց որական, արտագրողականությունը 6500 ցենտներ հացահատիկ ե: Կատպարան և այլ ձեռնարկություններ:

Չսայած ՌԽՖՍՀ Ժողկոմիորնի հատուկ վորոշմանը մեր ույայոնի մասին, մենք դեռ լուրջ առաջխաղացում չունենք տեղական արդյունաբերության զարգացման գործում:

Արժեք արդյոք ապացուցել, վոր մեր հնարավորությունները և պահանջները հրամայողաբար թելտգրում են ամեն կերպ արտգացնել տեղական արդյունաբերության զարգացումը:

* * *

Թե ույայոնն իր տասնամյակին ինչքան առաջ ե քայլել վոր պես ցուցանից կարող ե ծառայել այն, վոր այժմ ավարտվում ե 10 կոլխոզների լրիվ ելեկտրավորումը, բացի «Աշխատանք» կոլխոզից, վորն ելեկտրավորված ե դեռ 1934 թվից: Ելեկտրավորված են ՄՏ կայանը, ՄՏ արհեստանոցը, տպարանը, ույյոնական հիվանդանոցը և բոլոր ույյոնական հիմնարկներն ու ձեռնարկությունները: Ելեկտրավորման ծախսերի ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 700 հազար ոուրլի:

* * *

Ընկեր Ստալինը դեռ 1920 թվին ազգային հանրապետությունների կոմունիստների առաջ խնդիր դրեց... «Կոմունիստները պետք եւ այստեղ անցկացնեն ընդհանուր կրթություն, անհրաժեշտ եւ զարգացնել տեղական ազգային դպրոցը, ազգային թատրոնը, ազգային լուսավորական հիմնարկները, բարձրացնել ծայրամասերի ժողովրդական մասսաների կուլտուրական մակարդակը, քանի վոր հազիվ կարիք լինի ապացուցել, վոր տգիտությունն ու խավարը—խորհրդային իշխանության ամենավտանգավոր թշնամիներն են»:

Առաջնորդի այդ ցուցմունքը կյանքում կիրառելու պայքարում մեր ազգային ռայոնն իր տասնամյակին ունի հետևյալ ցուցանիշները.

Ժողովրդական կրության ասպարեզում

Տ-ըրե-թիւրը	Դարպոցնե-րի քանակը	Դասարանների քանակը	Սովորողների քանակը	Նրանցից ծղան Ազգիկ	Մանկավարժ. քանակը	Սովորել են անդր.
1926-27	9	65	2865	1600 1295	65	148
1935-36	17	136	4434	2052 2352	155	1928

Այդ թվերը փայլուն կերպով ցույց են տալիս, թե ինչպես անշեղորեն կյանքում կիրառվում եւ առաջնորդի ցուցմունքն ընդհանուր պարտադիր կրթության անցկացման մասին։ Մենք արդեն դըմրոցներում լիովին ընդգրկել ենք դպրոցահասակ յերեխաներին։ Հստ վորում յեթե մենք 1926-27 ուսումնական տարում ունեինք միայն տարրական դպրոցներ, ապա ռայոնի տասնամյակին մենք ունենք 11 թերի միջնակարգ դպրոցներ և մի միջնակարգ դպրոց-քացի այդ, կառուցվում ե յերկրորդ տասնամյա դպրոցը։

Եսթե մինչև հեղափոխությունն արական բնակչության միայն 23 տոկոսն եր գրագետ, իսկ կանանցից միայն յեղակի անհատ-ներ եին գրագետ, ապա ներկա ժամանակ մեղանում համարյա անդրագետներ չկան։

Միայն 1936 թվին ժողովրդական կրթության վրա ծախս-էում ե 970.300 ռուբլի, վորը կազմում ե ռայոնի ընդհանուր բյուջեյի 52,4 տոկոսը, այսինքն ժողովրդական կրթության ծախս-ները 1926-27 տարվա հատկացումների համեմատությամբ աճել են 14 անգամ։

1936 թվին վերակառուցվեց ռայոնական ակումբը (կառուցվեց ամբողջ յերկմորդ հարկը), վորի դահլիճն ունի 900 տեղ, 1695 քառ. մետր ընդհանուր ոգտակար տարածությամբ։ Ակումբն իր ծավալով և ճարտարապետական ձեւվագրմամբ հետ չի մնում քաղաքային շատ ակումբներից։ Ունենք գյուղական 7 և կոշխողային 10 ակումբներ, մի հնչուն կինո, 2 շարժական կինո, մի ռայոնական և 13 գյուղական ու զպրոցական գրադարաններ, չհաշվելով բրիգադային փոքրիկ գրադարանները, վորոնք կան համարյա բոլոր դաշտավարական, անամնապահական, տրակտո-րային և բանջարանոցային բրիգադներում։

Ռայոնում արդեն վեցերորդ տարին ե հայերեն լեզվով հրատարակվում ե «Կոմունար» թերթը։ Կան 136 պատի թերթեր, վորոնցից 85 հրատարակվում են կոլխոզներում և կոլխոզային բրիգադներում։

Կառուցված ե ռայոնական ռադիոհանգույց։ Հեռախոս և անցկացված բոլոր գյուղակուրդներում և ռայոնական կենտրոնում, հաստատված ե կիսաավտոմատ հեռախոսակայտան։ Ռադիոն, պատեփոններ, չութակը և այլ յերաժշտական գործիքներ սովորական յերեվույթ են դարձել կոլխոզնիկների մեծամասնության ոճներում։

Ճիշտ ե, ռայոնի ամբողջ բնակչությունը դեռ չի տիրապետում հայերեն գրական լեզվին, սակայն մենք այդ ասպարեզում ել ունենք ահագին առաջինացում։ Ուսուցիչների բանակը կրթություն ստանալով մաքուր հայերեն լեզվով, այդ լեզուն արմատավորում ե բնակչության միջև յերեխաներին սովորեցնելու միջոցով, մեծահասակների անգրագիտությունը և կիսագրագիտությունը վերացնելով և կուտուրական դաստիարակչական աշխատանք անցկացնելով բնակչության միջեվ։

Գյուղատնտեսական աշխատանքների շրջանում յուրաքանչյուր տարի նախագլուխոցական հասակի մինչեվ 2000 յերեխաներ ընդգրկվում են մանկապարտեզներում և մանկահրապարակներում։ Ռայոնում չկան անապաստան և անխնամ յերեխաներ։

Անցկացված գյուղական և ռայոնական ոլիմպիադները ցույց տվին կոլխոզային մասսաների ինքնագործունեյության ահագին աճումը։ Համարյա բոլոր կոլխոզներում և բրիգադներում կամ կամ թատերական, կամ յերգեցիկ, կամ յերաժշտական և կամ ուրիշ խմբակներ։ Պահանջանան չի հանդիսանում զլատոցական յերեխաների ինքնագործունեյության աճումը։

Աճում են նայել կոչխողային ակսնակ, յերիտասարդ գրողները, վորոնց աշխատանքների մի մասը հրատարակվում են ներկա ժողովածույթում: Նրանք համարյա բոլորը հանդիսանում են սկսնակ գրողներ: Կարդալով նրանց առաջին և հետագա աշխատությունները, աչքի յե ընկնում յուրաքանչյուրի աճումը: Նրանց միջեվ առանձնապես նկատելի յեն թերդոր ֆոնի (Սահակյանի), Յեղիսարեթ Հայլամազյանի, յեկ ուրիշների աշխատանքները:

Ուայոնի տեղիտորիայում մինչև նրա կազմակերպումը կային միայն 3 բուժակետեր, վորոնց ընդգրկումը և աշխատանքը բոլորովին չեր ապահովում բնակչության սպասարկումը բժշկությամբ: Բժշկական յերկու շրջաններում (Չալթըի և Մեծ-Սալյայի) կային միայն 5—6 ական մահճակալներ:

Ուայոնի կազմակերպմամբ առողջապահական գործին տրվեց անհրաժեշտ նշանակություն և աճում:

Միայն վերջին հինգ տարիների ընթացքում առողջապահության բյուջեն աճել և ավելի քան յերեք անգամ և 1936 թվին գումարում և 450 հազար ռուբլի կամ ուայոնի բյուջեյի 21,5 տոկոսը, այսինքն՝ բնակչության մի շնչին համար և 20 ռուբլի՝ 1931 թվի 2 ռուբլի 95 կոպեկի և 1917 թվի 49 կոպեկի դիմաց:

Ներկայումս մենք ունենք 1930 թվին կառուցված ուայոնական հիվանդանոց 40 մահճակալով, ուայոնական բուժաբան, հինգ հատուկ կաբինետներով լաբորատորիա և նոր կազմակերպվող ռենտգենյան կաբինետ, ուայոնական վեներաբանական կետ, և այս տարի կառուցվում ե ուայոնական հիվանդանոցի մի նոր բաժանմունք: Ունենք 2 յենթառայոնական հիվանդանոց 25 մահճակալներով, 2 կոնսուլտացիա կաթնախուանոցներով՝ կանաց և յերեխաների համար, 6 բժշկական - ամբուլատորային տեղամասեր և 4 բուժակետեր:

Ուայոնի բուժական ցանցն սպասարկում են թվով 18 բժշկներ և 35 մարդ՝ բժշկական միջին անձնակազմին պատկանող:

Հայոնուն ծավալված և մանկամսուրային ցանցու Յեթե մինչև ուայոնի կազմակերպումը մանկամսուրային հիմնարկներ առաջարակ չկային, իսկ առաջին մանկամսուրը 30 մահճակալով բացվեց 1926 թվին, ապա 1936 թվին գործող մանկամսուրները



Բայոնուր լուսացի և մոր և մանկան հոգառարության գրծը: Կուլտուրայի մարդկան աղջական կուլտուրայի կուլտուրայի լուսացությունը: — Երեւան: Սովոր և 36 կուլտուրայի կուլտուրայի լուսացությունը: Կուլտուրայի լուսացությունը: Երևան: Վալեն էլեկտրոնայի կուլտուրայի լուսացությունը: Երևան: Վալեն էլեկտրոնայի կուլտուրայի լուսացությունը:

25 Եյին, վորոնք ընդգրկել Եյին մանկամսուրային հասակի յերեխաների 81 տոկոսը:

Սանիտարական նախազգուշական աշխատանքի անցկացման հետևանքով՝ ույոնում զգալիորեն պակասել եւ սուր վարակիչ հիգինդությունների տոկոսը՝ Դաշտային բրիգադներում կազմակերպված են 86 սանիտարական կետեր, վորոնդ աշխատում են հենց վարժված կոլլսոզիներից 86 խինավորիչ-սանիտարական բանակայիններ:

Մայոնի դպրոցների, հիվանդանոցների, ակումբների շինարարության, եղեկտրավորման թափը ևս ակներենորեն ցույց է տալիս, թե ինչպես և ընթանում քաղաքի և գյուղի հակադրության վերացման պրոցեսը: Բայց և այնպես այդ բոլորը հանդիսանում են կուլտուրական վերելքի միտքն սկիզբը: Կոլլոզիները, վորոնք իրենց աշխարերի դիմաց ստանում են բարձր յեկամուտ, ունեն իրենց կովը, մասր անառուները և անսահմանափակ քանակությամբ թուշուններ, ներկայացնում են և ներկայացնելու յեն բարձր պահանջներ իրենց կուլտուրական կարիքները բավարարելու համար: Քիչ և ունենալ լավ կումբներ, գրադարաններ և այլ կուլտուր կենցաղային հիմնարկներ: Հարկավոր և այնտեղ աշխատանքն այնպես կազմակերպել, վոր կարելի լինի բաֆարարել մասսաների աճող կուլտուրական պահանջները: Ժողովրդական կրթության ասպարեզում, նաև առողջապահության ասպարեզում ահազին աշխատանք եւ կատարված, բայց առաջիկայում պետք եւ կատարել ավելի մեծ աշխատանք:

Մեծ է կուստկցության և խորհրդային իշխանության հոգատարությունն աղքային ույոնների, վորոնց թվում և Մյամիկ յան ույոնի նկատմամբ: Կուսակցությունն ու կառավարությունը ձեռք են առնում ամեն մի միջոց՝ նախկինում հետամնաց աղքային ույոններն առաջ մղելու Միության առաջավոր ույոնների շարքը: Հենց այդ նպատակն եւ հետապնդում ՌԵՖՍՀ ժողովրդի ոյն տարվա ապրիլի 11-ի վորոշումը՝ «Ազով. Սկզբունք յերկրամատի Մյամիկյան ույոնի տնտեսական և կուլտուրական շինարարության մասին»:

Այդ վորոշումը, վորն ընդունված է ույոնի անտեսական և կուլտուրական շինարարության հետագա վերելքի բոլոր պահանջների հաշվառումով, մի նոր խանգավառություն առաջացրեց ույոնի աշխատավորության մեջ, վորի արդյունքներն արդեն իսկ նկատելի յեն:

կինայան Վարսենիկը, գյուղխորհրդի նախագահ Սուխարյան Յեղիսաբեթը, կոլխոզի նախագահ Չուվարյան Վարդուհին, կուկազմակերպիչ Մարգարյան Մարիամը, ՀԿ (բ) Կ ռայկոմի հրահանդիչ Յեղիսաբեթ Պետրոսյանը: Ռայոնի այլ և այլ շատ կանանց անուններն ու գործերն ուրախություն են առաջացնում և որինակելի հարվածային աշխատանքի որինակ են ծառայում:

Մենք ունենք ստախանովականների հարվածայինների հազարանոց բանակ: Աճել են տնտեսավարների և կոլխոզային արտադրության կազմակերպիչների հիանալի կադրեր՝ կոլխոզների նախագահներ, բրիգադիրներ և ողակավարներ: Նրանցից շատերն ունեն 4—5 ամյա աշխատանքի փորձ:

Պակաս չեն մեղանում տաղանդավոր ուսուցիչներ—հասարակական աշխատողներ, բժիշկներ, գյուղատնտեսներ, հաշվապահներ, խորհուրդների նախագահներ, կոմյերիտական և կուսակցական կազմակերպիչներ: Այդ նշանավոր մարդկանց անունների սոսկ թվարկումը մի ամբողջ գիրք կկազմեր:

Կադրերի ստեղծման և աճեցման ինդրի լուծման համար անխոնջ կերպով աշխատել են աշխատում և ուսուցիչների կուսակցական կազմակերպությունը, ղեկավարվելով ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի ցուցառներով այն սասին: Թե «կադրերը վըճում են ամեն ինչ»:

Զգեստք ե մոռանալ, վոր մինչև ռայոնի ստեղծումը կուսակցական կազմակերպությունը՝ վորպես այգափին՝ գոյություն չուներ: Այն ժամանակվա «կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունները» բաղկացած եյին կուլակային հականեղափոխական բանդիտային տարրերից, վորոնք կարողացել եյին թափանցել կուսակցություն և կոմյերիտամիություն՝ Գաճյանների գլխավորությամբ:

Նրանց գործունեյությունը միմիայն այն եր, վոր ամեն կերպ արգելք հանդիսանալով ազգային ուսուցիչ կազմակերպման, զրադվեցին կողոպուտով, հասարակական աշխատողների սպանությամբ, հետ մղեցին և կուսակցության ու կոմյերիտմիության շարքերը չընդունեցին չքավորներից ու միջակներից այն անձնավորություններին, վորոնք նվիրված եյին կուսակցության և խորհուային իշխանության գործին:

Կուսակցական կազմակերպությունն ստեղծվեց Գաճյանների ավազակախմբի ջախջախումից և ուսուցիչ կազմակերպումից հետո:

Կոլեկտիվացման տարիներում կուսակցական կազմակերպությունը ղեկավարվելով իր առաջնորդ ընկեր Ստալինի ցուցանքով այն մասին, թե «կուսակցությունն այժմ ունի և իր ձեռքն առնի կոլխոզների ղեկավարությունը, իր վրա ակետք և առնի աշխատանքի պատասխանատվությունը և ոգնի կոլխոզներին առաջ տանելու նրանց տնտեսությունը գիտության և տեխնիկայի տվյալների հիման վրա» (Ստալին), չկ (ո) և կենտրոմի և թերկումի ղեկավարությամբ ուղղելով թույլ տված սիսակները, քաղբաժնների ոգնությամբ կարողացավ զլխավորել կոլխոզային մասաներին և նրանց առաջ տանել:

Կոմունիստները և կոմյերիտականները գութանի, տրակտորի, շարքացանի, խուրձկապիչի վրա, դառնալով ողակավարներ, բրիդագիրներ և կոլխոզների նախագահներ, իրենց համառ աշխատանքով անձանք որինակ են ցույց տվել անկուսակցականներին, զլխավորելով նրանց, գորպեսզի «առաջ տանին կոլխոզային առնեսությունը գիտության և տեխնիկայի ավանդների հիման վրա»:

Լենինի շքանշաններով պարզեվարված Մ. Սարաբաշյանը, Զ. Կուրիկայանը հանդիսանում են լենինյան կոմյերիտմիության անդամներ, կոմրայնի աշխատանքի ամենաօճճառ չափը տվին կուսակցության թեկնածուներ Յավույան Հակոբը, Ա. Բարաշյանը և Քիլավյան Արշակը:

Դաշտավարական բրիգադների մրցման և բարձր բերքի ստացման նախաձեռնող հանդիսացել ե կուսակցության թեկնածու Փուդեյան Գրիգորը:

Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ անցկացված աշխատանքը կուսակցական փաստաթղթերի ստուգման և փոխանակման վերաբերյալ, ստեղծեցին բոլոր պայմանները կուսակցական լիարյուն կյանքի համար, ամրացրին ուայոնի կուսակցական կազմակերպության մարտունակությունն ու բոլշեկոյան զգաստությունը, ոկսեց աշխուժանալ կուսակցական կյանքը և կոմունիստը դարձավ կուսակցատանքի կենտրոնը:

Ցարիկմի ժամանակ կապակների շրջապատկան առաջնորդ հայոնի հայնակությունն առեն քայլափոխում իրեն խորթ եր զգում, չունենալով իր հայրենիքը, հալածքած և զատապարտված եր խավարի ու աղքատիկ գոյության: Պրոլետարական միծ հեղափոխությունը, լենինի-Ստալինի կուսակցությունն աշխատավոր հայերին, ինչպես և բոլոր ազգային փոքրամասնություններին, դարձրին մեր

մեծ սոցիալիստական հայրենիքի իրավահավասար քաղաքացիներ: Ազգային թշնամությունը փոխարինվել ե ժողովուրդների հոկական բարեկամությամբ: Այժմ մեր ուայոնի հայ աշխատավորությունն աննկարագրելիորեն ուրախ ե և հպարտ, վոր համերշիորեն ապրում ե և աշխատում Դոնյան կոլխոզային փառավոր կազակության հետ:

Ստալինյան կոնստիտուցիայում, վորտեղ մեր մեծ աշխատավոր ժողովուրդը վեր և լուծում իր նվաճումների արդյունքները և սահմանում ե սոցիալիստական համայնակեցության որենքը, հրե տառերով զրված ե ժողովուրդների նվաճած բարեկամությունը և քաղաքացիների իրավահավասարությունը, անկախ ազգությունից ու ցեղից:


Յեթե ֆաշիստական վոհմակը փորձի վոտնճգության յինթարկել մեր նվաճումները, մեր սահմանների անձեռնմխելությունը, ապա մեր ուայոնի աշխատավորությունը, խորհրդային կազակության հետ միասին, բոլոր աշխատավորների հետ միասին պաշտպան կկանգնի մեր ջերմագին սիրելի հայրենիքին:

Ամբողջ աշխատավոր մարդկության առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությունը և հայրական հոգաւարությունը ապահովեցին մեզ համար յերջանիկ, ունեվոր կյանք:

Սարլինը մեր պայքարի և հաղթանակների դրոշն եւ: Ստալինը մեղնից յուրաքանչյուրի սրտումն եւ:

Ստալինի հետ մենք անհաղթ ենք:

ՃՐԱՆՑԱԿԻՐՆԵՐ



Շքանշանակիր ընկեր ՍԱՐԱԲԱՇՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԸ

ՄԱՐՏԻՆԸ

Վաղ առավոտ եր: Ազը սովորականից ավելի խաղաղ եր: Քամի չկար: Խապան: Հողերում կանաչին եյին տալիս գարնանային խոտի առաջին ծիլերը: Աշնանացանը մախմուրի պես փթթել ու փռվել եր դաշտի վրա: Տեղահղութեան գեռ չհալված ձյաւնի կառաներ՝ ժպտում եյին ձնծաղի կները:

* * *

Տրակտորիստների գիշերային հերթը, կատարելով վերջին հերկապտույտը, կանգ առավ: Գիշերվա և շխատանքն ավելի դյուրին ե, յիթե կապույտ յերկնակամարը մոռայլված չե, և փայլում է կաթնափրփուր լուսինը: Բայց դժվար ե ու անտանելի այդ աշխատանքը. յեթե յերկինքը խավար ե, և փչում ե արևելյան սառը քամին:

Յերբ գիշերային հերթը պառկեց հանգստի, հեռվից արդեն լսվում եր տրակտորների միալար փնչոցը: Բրիգադիթը, վորին ուղղակի անունով եյին կանչում, մի լայնաթիկունք յերիտասարդ եր: Խոսելու և հրամաններ տալու մեջ այնքան ել վարպետ չեր Մարտինը: Շատ հաճախ խոսքերի փոխարեն նա ուղղուի կատարում եր տվյալ վործն ու հետն ել ավելացնում միայն այսքանը. «Այո, եսպես պետք ե անել»: Յերբ հարկավոր եր վորեն արակտորիստի գովասանական խոռք ասել, զրա փոխարեն նա ժողոտալից կապույտ աչքերով նայում եր ուղղակի նրա զեմքին և վորպես վերջակետ իր գոհունակության, կոշտացած ձեռքերով թիթեակի խփում եր տրակտորիստը ուսին ու հետն ել ավելացնում»: «կեցցես»:

Կոլխոզների կազմակերպման առաջին իսկ որից Մարտինը վայր չի իջել տրակտորի ուսից: Իր աչքի լույսի չափնա սիրում ե տրակտորը: Ավելին. զեռ մանկությունից ե նա սիրել տրակտորը: Շատ հաճախ և պատահել, վոր յերկար գիշերներով նա

գլուխ և ջարդել այն մտքի վրա, թե այդ ինչպես և, վոր տունց
ձիւրի ու յեզների կարողանում և շարժվել տրակտորը:

Ցերք նա գիշերային հերթը տեղավորեց հանգստի և շրջեց
գիշերը հերկած ամբողջ հողամասը համոզվելու, թե ամօն ինչ կար-
դին և կատարված և խոտան չկա, կրկին վերադարձավ տրակտո-
րակայանը: Թեթևակի աչքի անցկացրեց եր բրեգազի համեստ
կարողությունը, յերկաթե ձողով չափեց տակառում յեղած նավթի
Ստախանովական տրակտորիստների խոսակցությունը զերեցիկար կտեղի, սակայն արդեն ժամանակն եր հանգստի պասկելու, նրանք այնպես ել յերեք որ չեյին հանգստացել:

* * *

Դեկտեմբերի 22-ին Անդրանիկն արդեն գտնվում եր Մոսկվայում: Եատ բարիքներ տեսավ Անդրանիկը Միության կենտրոնում և այդ բուրն այնպես տպավորվեցին նրանում, վոր նա յեցիք չի մոռանա այդ սքանչելի տպավորությունները:

— Եես անշափ յերջանիկ եյի զգում ինձ գտնվելով Մոսկվայում, — մեծ գոհանակությամբ պատմում ե Անդրանիկը: — Այստեղ յես շատ նոր ու հետաքրքիր բաներ տեսա, վորոնք ավելի հարստացըրին իմ գիտելիքները, իսկ վոր զիշմազորն ե, սեփական աշխերովս տեսա մեր յերկը և ժողովուրդների առաջնորդ սիրելի Ստալինին:

Անսահման գոն ե Անդրանիկը Մոսկվայի ընդունելություններից, թատրոններից և Մետրոյից:

Սակայն իր կյանքի ամեն, երջանիկ՝ որն Անդրանիկը համարում ե այն որը, յերբ «Պրավդայում» կարգաց կենտգործկոմի վորոշումը և դտավիր ազգանունը Լենինի շքանշանով պարզեատքած հարյուրավոր տրակտորիստների մեջ: Դա 1935 թվի գեկտերի 30-ին եր:

— Մենք արդեն գիտելինք, վոր մեղ պետք ե պարզեվառքն Միութենական շքանշաններով: այդ մասին մեզ հայտնեցին խորհրդակցության վերջին նիստին, — պատմում ե Անդրանիկը: — և գեկտեմբերի 30-ին առավոտյան արթնանալուն պես ուզզվեցինք ուզոց «Պրավդա» ճարելու: Իմանալով այն մասին, վոր յերեք

ել պարզեատրվում ենք. Լենինի շքանշանով, շնորհավորեցինք իրար և, զգալով այդ սեծ զնահատականի նշանակությունը, վորոշեցինք աշխատել Ել ավելի լավ որինակ ծառայել սայոնի մյուս արակառիստներին:

Հունվարի 4-ին յերեկոյան կենտգործկոմի նիստում Անդրանիկն առաջին անգամ իր կյանքում իր ձեռքն առավ արդեն ընդմիշտ իրեն պատկանող Լենինի վոսկեզո՞ծ շքանշանը և կպցը եց այն իր կրծքին:

Ստանալով շքանշանն Անդրանիկն զգաց, վոր դա վոչ միայն իրավունքների, այլ նաև պարտավորությունների նշան և, նա զգաց, վոր շքանշանը պարտավորեցնում և հետագայում աշխատել Ել ավելի արդյունավետ ու տալ արտադրանքի բարձր վորակ: Անդրանիկը պարտավորվեց 1936 թվին իր արակտորով յերկու հերթում առաջ 2000 հեկտար ու տնտեսել աշխատանքին անհրաժեշտ վառելանութիւ 20 տոկոսը:

— Իմ պարտավորությունները յես կկատարեմ, — վստահացնում ե աշխատանքի հերոս Անդրանիկ Կուռուղյանը և սիստեմատիկությունը:

Իսկ Մեծ Սալան, վոր Անդրանիկի հայրենիքն և հանդիսանում, հաղարտանում ե նրանով, վոր Լենինի շքանշանակիր Անդրանիկ Կուռուղյանն ապրում ու աշխատում ե իր զբկում:



Շքանշանակիր ընկեր ԿՈՒՂԲԻՔԱՑԱՆ ԶԱՔԱՐՅ

ԶԱՔԱՐ ԿՈՒԼԲԻՔԱՅԱՆ

Շատ եր մտածում Գաբրիելն իր ընտանիքի յեվ նրա գոյության մասին։ Նրանք վոչինչ չունեյին իրենց տնտեսության մեջ՝ բացի աշխատավոր բազուկներից, վորը հաճախ ծախում եյին հենց իրենց գյուղի կուլակներին մի փոք հացի գնով։

Դժվար եյին անցնում որերը յեվ տխուր։ Գաբրիելն աշխատում եր արշալույսից մինչ ուշ իրեկնամուտը, բայց ելի վոչինչ գուրս չեր գալիս, կուլակ Աղամի Համբարձումն այնպես եր շահագործում այդ խեղճերին, վոր նրանք իրենց կատարած աշխատանքի համար ստանում եյին չնչին վարձ, վորը հազիվ նպաստում եր ընտանիքի գոյության պահպանմանը։

Հաճախ ել պատահում եյին դեպքեր, յերբ որվա ուտելու հացն ել տանը չեր հերիքում, յեվ Գաբրիելն ստիպված եր լինում գնալ իր աղա Համբարձումի մոտ պարտքով հաց առնել, վոր հետեվյալ որն աշխատի ու տեղը գուրս գա։ Իսկ աղան ել, թեպետ նազուտուզով, բայց տալիս եր, վորովհետև մեծ ոգուտ ուներ Գաբրիելի նման նվիրված բատրակներ ունենալուց։

Ցեվ ահա, մի որ ել ուժի մեջ մտավ այդ սեվ որերից մեկը։ Նրանց տանը հացի հոտն անդամ չմնաց, Գաբրիելը դանդաղորեն դուրս յեկավ տանից, գլխին դրեց դեռ հորից ժառանգություն մնացած իր հնամաշ, կեղտից փայլող գլխարկը յեվ ուղղվեց դեպի կուլակ Համբարձումի տունը։

— Հը... ի՞նչ կա, Գաբրո, ի՞նչ ես ուզում, — արհամարհական տոնով յեվ աչքերը խոժոռելով դիմավորեց աղան Գաբրիելին։

— Վոչինչ, աղա ջան, խնդիրք ունեմ, — գլխարկը հանելով ու վիզը փորը կծկելով ասաց Գաբրիելը։

— Ի՞նչ խնդիրք, ի՞նչ ե պատահել...

— Վոչինչ, աղա, ալյուր եմ ուզուի, հաց չկա, յերեխեքը քաղցած են մացել...

— Հա... Տո եղ ինչ շատ հաց եք ուտում, յերեկ եր 5 ֆունտ ալյուր աաըար...

— Հինգ Փունտն ինչ ե վոր, աղա ջան, ընտանիքս մեծ ե, չի հերթում. հետո ել բացի հացից ուրիշ բան չկա...

— Լավ, լավ, շատ մի յերկարացնի. գնա ջաղացն ու ասա թող քեզ մի որվա ալյուր տան, իսկ եզուց գիշերը կաշխատես դրա փոխարեն:

Դժվար եր համաձայնվել գիշերն աշխատելու, այնպես ել վողջ որն աշխատում եր Գարբիելը և բազուկներում ուժ չկար, բայց ուրիշ հնար ել չկար, Յերեխանիքն սովոր փրկելու համար պետք եր համաձայնել: Մի փոքր միտք անելուց հետո Գարբիելը վորոշեց կատարել աղայի պահանջը:

— Դե, ինչ ես կանգնել, թե չես ուզում ավել աշխատել...

— Գնում եմ, աղա ջան, գնում եմ, — շնչաց Գարբիելը յեկ հետ դարձավ գետի տուն, վորպեսզի մի բան վերցնի այսուը մեջը լցնելու համար: Սակայն հազիվ տուն հասած նա իսկույն պառկեց անկողին: Նրա մարմինն ամբողջովին թուլացել եր, նա ուժասպառ եր յեղել յեկ այլեվս շարժվել չեր կարող:

Գարբիելն այլեվս չբարձրացավ անկողնուց: Ընդամենը յերեք որ տեսեց նրա հիվանդությունը յեկ նա ընդմիշտ բաժանվեց իր ընտանիքից ու էր կյանքը հողին հանձնեց:

Դա 1914 թվին եր, պատերազմի տարին:

* *

Այն տարին, յերբ մահացավ Գաբրիելը, Զաքարը դեռ նոր եր ծնվել, այնպես վոր հոր մահը նրա վրա ամբողջովին չազդեց: Եայց դրա փոխարեն տանջանքի մեջ եյին ընկել նրա ավագ յեղին Արամը, քույրը յեկ մայրիկը: Հոր մահը մի կողմից, իսկ բայց մեջ եյին առել նրանց ու քամում եյին վերջին արցունքների մեջ եյին առել նրանց ու քամում եյին վերջին արցունքների: Սակայն Արամը չեր հուսահատվում և իր քրոջ հետ միասին աշխատում ու պահպանում եյին իրենց ընտանիքի գոյությունը:

Յեկ այդպես շարունակում եր իր չարքաշ կյանքը հանգուց յալ Գաբրիելի ընտանիքը, մինչև վոր Զաքարն ել մեծացավ ու դեռ 9 տարեկան չլրացած սկսեց աշխատել, ոգնելով իր յեղորդն ու քրոջը:

Արամն ու Զաքարն իրենց գյուղի հովիվներն եյին: Նրանք արշալույսից մինչեվ վերջալույս դանվում եյին հետո դաշտում

անձրկի ու արկի տակ և արածացնում ու գերացնում եյին իրենց խնամքին հանձնված անասունները:

Հովկություն եր անում Զաքարը մինչեվ 1927 թիվը, յերբ գյուղիորհուրդն սգնություն ցույց տվեց նրանց ընտանիքին ու հնարավորություն ստեղծեց Զաքարի համար դպրոց մտնելու:

* * *

Մինչև կոլխոզ մտնելը Զաքարը սովորում եր դպրոցում, իսկ յերբ կարմիր Ղրիմում ձեռնարկվեց կոլխոզի կազմակերպման գործը, Զաքարինց ընտանիքն առաջինը կրվեց կոլխոզ: Այդ որվանից նոր պայմաններ ու հնարավորություններ ստեղծվեցին Զաքարինց համար. բացվեց նրանց կյանքի գարունը, և նրանց սկսեցին աշխատել ամբողջ յեռանդով ու նվիրվածությամբ: Արամն արդեն սովորել եր արակտորի վրա աշխատել վորպես արակտորիստ, իսկ Զաքարն սկզբում, վորպես ոժանդակ բանվորական ուժ, ապա վորպես փոստատար:

Փոստատար յեղած ժամանակ Զաքարն իր բոլոր ազատ ժամերն անց եր կացնում իր յեղորդ Արամի հետ արակտորի մոտ: Զաքարն անչափ սիրում եր տրակտորը, հետաքրքրվում նրանով յեկ չնպատակ եր դրել անպատճառ սովորել արակտոր վարել: Արամն ել գոհ եր, վոր յեղբայրն այդպես հետաքրքրվում և արակտորով, ուստի ընդառաջ եր գնում Զաքարին յեկ հետզհետե սովորեցնում նրան արակտորի վրա աշխատել:

— Տրակտորի հիմնական յեկ շուտ փշացող մասը՝ դա առանցքակալն ե, — բացատրում եր իր յեղորդ Արամը, — պետք ե միշտ հետևել նրան, վորպեսզի նա շուտ չմաշվի կամ չճաքի, վորովհետե նրանից կարող ե վիթարանք առաջ գալ:

— Հասկանում եմ, հասկանում, — ասում եր Զաքարը և ուշի ուոով լսում եր յեղորդ բացատրությունները: Որպավուր Զաքարի գիտելիքները արակտորի մասին ավելի ու ավելի հարստանում եյին և նա հաճախ ինքնուրույն վարում եր արակտորը Արամի հանգստի ժամերին:

Զաքարի այդ հետաքրքրությունը դեպի արակտորը շուտով նկատելի դարձավ: Բախտը ժպտաց նրան. ՄՏ կայանի դիրեկտորը հիմքուային աշխատանքներից ու փոխադրեց հիմքերորդ արակտորային բրիգադը հաշվետարի պաշտոնով, իսկ յերկու ամսից հետո Զաքարը հաշվի առնվեց վորպես պահատի արակտորիստ:

Նատ քիչ եր վիճակվում Զաքարին աշխատել տրակտորի վրա՝ իսկ յերբ նրա ձեռքն եր լնկնում տրակտորը, նա այնքան վոգեգորփած ու յեռանդուն եր աշխատում, վոր իրենց բրիգադի տրակտորիստները զարդանում եյին նրա վրա, իսկ շատերն ել ուղղակի նախանձում նրա հաջողություններին:

— Կեցցե, Զաքար, — մեծ գոնունակությամբ ասում եր բրիգադիրն աշխատանքն ընդունելիս, — քեզանից լավ տրակտորիստ դուրս կգա:

— Այո, յես սիրում եմ տրակտորը և վորոշել եմ 100 տոկոսվ տիրապետել նրան, — ժպիտը գեմքին վստահորեն պատահանում եր Զաքարը:

Անցնում եյին որերը և յուրաքանչյուր անցած որը նոր գիտելիքներ եր բերում Զաքարին տրակտորի նորագույն ասպարիգում: Յերիտասարդ տրակտորիստը, վոր 18 տարին հազիվ եր լրացրել, միայն պրակտիկ աշխատանքով չեր սահմանափակվում, նա հետաքրքրվում եր նաև տեսական գիտելիքներով, նա տրակտորի մասին գրականություն եր ձեռք բերել ու իր ազտ ժամերին կարդում և ուսումնասիրում եր այն:

1934 թվի աշնանը Զաքարին ուղարկեցին տրակտորիստաների վերապատրաստման յեռամսյա կուրսերը, վարտեղ նա իր լավ առաջազիմության շնորհիվ ձեռք բերեց մեծ համբավ: Զաքարն ավարտեց կուրսերը վերազանց լավ գնահատականներով և տրակտորը վարելու պաշտոնական իրավունք ստացավ:

— Ես արդեն իսկական արակտորիստ եմ, մայրիկ, — պարծենում եր Զաքարն իր մոր առաջ՝ տրակտորիստների կուրսերն ավարտելուց հետո: — Այսուհետև յես ել Արամի չափ կաշխատեմ յեվ կապրենք ունեսոր կյանքով:

* * *

1935 թվի ձմեռը շատ արագ անցավ Զաքարի համար: Վրա հասավ բոլշեվիկյան գարունը. տրակտորները, գութաններն ու մարդիկ նորից կյանք տվին ձմեռային քնից արթնացած հողին, և աշխատանքը դաշտերում սկսեց յեռալ:

Դարնանային զով առավոտ եր: Գիշերն անցել եր յեվ տեղի ավել պայծառ որվան: Գյուղի փողոցներն արդեն լի եյին մարդկանցով. բոլորն ել դաշտ եյին շտապում աշխատանքի:

Դաշտ եր շտապում նաև Զաքարը: Այսոր իրենց ընտանիքում նա իր մորից ել շուտ արթնացավ, իսկույն հագնվեց, լվաց-

վեց, նախաճաշեց տանը ունեցած բարիքներով ու առաջին անգամ վորպես լիակատար տրակտորիստ դուրս յեկավ տանից և ուղղվեց գեղի Մարտին Սարաբաշյանի տրակտորային բրիգադը:

Բրիգադում դեռ վոչ վո՞ք չկար, բացի Մարտինից: Մարտինը միշտ ել բոլորից շուտ եր գալիս աշխատանքի, ստուգում եր արակտորները, կազմում եր որվա պլան-առաջադրանքը յուրաքանչյուր տրակտորիստի համար և հենց վոր արակտորիստները գալիս եյին, նա իսկույն աշխատանք եր տալիս նրանց ունրանք առանց ժամանակ կորցնելու անցնում եյին գործի:

Զաքարը դեռ հեռվից նշարեց, վոր բրիգադում տրակտորների մոտ մի ինչ-պոր մարդ ե յերեկում: «Բայց ով կարող ե լինել այդ պահին», — մտատանջվեց յերիտասարդ տրակտորիստը: «Ֆերի կուլակներ են, զասարարություն են ուղում անել», — մտածեց նա և ավելի արագացրեց իր քայլերը: Սակայն յերբ մոտեցավ բրիգադին, նա իսկույն ճանաչեց Մարտինին յեվ բարձր ձայնով «Բարի լույս» հաղորդեց նրան:

— Բարե, բարե, — ուրախությամբ պատասխանեց Մարտինը, վորն այդ պահին զննում եր № 51 տրակտորը:

Զաքարը տեսավ, վոր Մարտինն զբաղված ե, չուզեց խօնդարել նրան և ինքն ել սկսեց քննել այդ նույն տրակտորը, փորձելով նրա յուրաքանչյուր մասի աշխատունակությունը:

— Ե՛, ինչպես ե... լավ տրակտոր ե, — հարցրեց Մարտինը.

— Ո՛, շատ լավն ե, — պատասխանեց Զաքարը:

— Ինչ սիստեմի յե, գիտես, — հանաքով հարցրեց Մարտինը:

— Ինարկե, գիտեմ — «ՍՏԶ», մերն ե, խորհրդային:

— Այո, մերն ե յեվ լավը, շեշտեց Մարտինը, — դու այս տրակտորի վրա պետք ե աշխատես. տես, չիայտառակես մեր բրիգադը:

— Անհոգ յեղիք, սիրելի Մարտին, յես կարդարացնեմ ինձ, ինչ ել վոր լինի:

— Խոսակցությունը Մարտինի ու Զաքարի միջեվ յերկար չեր կարող տիկել: Որի արդեն բացվել եր, բրիգադի տրակտորիստները յեկել և սպասում եյին բրիգադիրի կարգադրությանը աշխատանքն սկսելու մասին:

Դարնանային առաջին բանվորական որը Մարտաշյան Մարտինի բրիգադում սկսվեց: Տրակտորիստներն ստացան իրենց որվա առաջադրանքները, սարքեցին իրենց պողպատե ձիերը և քեցին դեպի լայնարձակ գալաք:

Զաքարը նույնպես առանց վայրկյան անգամ կորցնելու հեծավիր «ձին», իր ուժեղ ձեռքերով բռնեց զեկը, սեղմեց պեղադներ և դանդաղ ու համաշխատիրեն առաջ սլացավ զեպի դաշտ, պայքարելու իր որվա առաջապեսքի կատարման համար:

Դեղ տեսնեմ, — կանչեց Մարտինը դիմելով Զաքարին ու ինքն ել ուղղվեց դաշտ՝ տրակտորիստների կատարած աշխատանքի վորակն ստուգելու համար:

Վարի հենց առաջին որը ցույց տվեց, վոր Զաքարը լավ է տիրապետել տրակտորին և վարպետորեն ե զեկում այն: Առաջին որը Զաքարն աշխատեց առանց վորեւե կանգառումի և նորմայով նախատեսված 3,60 հեկտարի դիմաց վարեց 4,5 հեկտար, թեվ տրակտորը հանձնեց իր հերթափոխ Խաթլամաջյան Ավետիսին մաքուր ու սարքավորված վիճակում:

Մարտինին շատ գուր յեկավ Զաքարի այդ որբինակելի աշխատանքը և նա ավելի մեծ հոգատարությամբ ու սիրով սկսեց վերաբերվել Զաքարին: Բրիգադում Զաքարի համար ստեղծվեցին բոլոր պայմանները, աշխատանքի արտադրողականությունն ել ավելի բարձրացնելու համար: Զաքարն ել չեր սահմանափակվում իր նվաճումներով և որ որի վրա ձեռք եր բերում նոր հաղթանակներ:

— Մեր բրիգադը պետք է առաջավոր լինի, — ասում եր Զաքարը, — վորովհետեւ մենք կոմյերիտականներ ենք: — Ենք որական 3,60 հեկտարի դիմաց վարում եր 6—7 հեկտար:

Բերքահավաքի ժամանակ նույնպես Զաքարն իր առաջնությունը չեր զիջում: Նա որական հնձում եր 24—26 հեկտար, այն ժամանակ, յերբ համաձայն նորմայի, յուրաքանչյուր տրակտոր 10 ժամքա աշխատանքի ընթացքում պետք է հնձեր 17 հեկտար, Այդպիսով միջին հաշվով, նա իր հերթում միայն իր տրակտորով մշակեց 1507 հեկտար հող: 1935 թվին գյուղատնտեսական բոլոր տեսակի աշխատանքները կատարելու ժամանակ Զաքարն որական տնտեսում եր 7—8 կիլոգրամ վառելանյութ, իսկ վողջ տարվա ընթացքում նա տնտեսեց 1922 կիլոգրամ վառելանյութ:

— Իսկ ինչպես ես դու տնտեսում այդքան վառելանյութ, — հաճախ հարցում եր Զաքարից իր հերթափոխ Ավետիսը:

— Այստեղ վոչ մի գժվարություն չկա, — ասում եր Զաքարը, — նախ և առաջ պետք է այնպես կազմակերպել աշխատանքը, վոր գործարկված տրակտորը վոչ մի վայրկյան անաշխատանք չմնա, տրակտորը պետք է անդադար աշխատի, այս-

պես, ինչպես ժամացույցը: Բացի դրանից, յես ուշի ուշով հետեւում և կարգավորում եմ ջրի ու ողի խառնուրդը վասելանյութի հետ, դա շատ մեծ զեր ե խաղում թե տրակտորի աշխատանքի և թե վառելանյութի տնտեսման գործում:

— Իսկ յես աշխատում եմ վորքան կարելի յե ջրի և ողի խառնուրդը շատ տամ, վարպեսզի վառելանյութ խնայեմ, բայց ելի բան գուրս չի գալիս, — ասում ե Ավետիսը:

— Իհարկե բան դուրս չի գա, պետք ե զգուշորեն կարգավորել այդ պրոցեսը. ողի և ջրի թե մեծ քանակը և թե վակասը խախտում են տրակտորի նորմալ աշխատանքը:

Միշտ այսպես բացատրում եր Զաքարը թե իր հերթափոխ և թե իրենց բրիգադի մյուս տրակտորիստներին ու աշխատում եր ընդհանրացնել իր փորձը:

Իր վողջ տարվա աշխատանքի ընթացքում և վոչ մի որ Զաքարի տրակտորը չկոտրվեց ու կանգ չառավ: Տրակտորի ամենապատասխանագույն մասերը՝ առանցքակալները, վոր հաճախ վթարանքի պատճառ եյին հանդիսանում ուրիշ տրակտորիստների մոտ, Զաքարին յերբեք չեյին անհանգստացնում, վորովհետեւ նա միշտ ստուգում եր նրանց աշխատունակությունը և հարկ յեղած դեպքում զեռ առանց կոտրվելու փոխում նրանք, վորպեսզի կանխի վթարանքը:

Զաքարն իր աչքի լույսի պես մաքուր եր պահում տրակտորը. նա ամեն որ աշխատանքից հետո լավ մաքրում եր այն, յուղում բոլոր մասերը, և ապա հանձնում հերթափոխին: Իսկ յերբ զալիս եր աշխատանքի և ընդունում եր տրակտորն Ավետիսից, մսնրամասն զննում ու քննում եր տրակտորի բոլոր մասերը, նամանականդ առանցքակալները, և ապա ընդունում:

Մարտինը սիրում եր Զաքարին վոչ միայն վորպես լավ տրակտորիստի, այլ նաև բարեխիղճ և նվիրված աշխատողի, որինակելի կոմյերիտականի:

— Զաքարը յերբեք վոչինչ չի խնայում բրիգադի պլանները լրիվ կատարելու համար, — ասում եր բրիգադիր Մարտինը, — նա աշխատում ե ամբողջ յեռանդով, ահա դա յե նրա հաղթանակեների աղբյուրը:

Աշնան ամենայեռուն աշխատանքների ժամանակ, յերբ յերեք տրակտորիստներ բաժանվեցին Մարտինի տրակտորային բրիգադից ու գնացին կարմիր բանակ, բրիգադի աշխատանքը վոչ մի վայրկյան կանգ չառավ, իսկ Զաքարն սկսեց աշխատել յերկու հերթ:

Որական 10 ժամ նա աշխատում եր արակտորի վրա, իսկ մասցած ժամերին հանգստանում և միևնույն ժամանակ տանում հաշվետարի աշխատանքը, թեպետ և դժվար եր այդպես աշխատեր, բայց դժվարությունների առաջ Զաքարը կանգ չեր առնում:

— Մենք պետք ե կատարենք բրիգադի առաջադրանքը, ահա ոլուավորը, — ասում եր նա ու աշխատում նոր յեռանդրվ:

* * *

Յերկար ժամանակ Զաքարը տուն չեր յեկել, մայրն այնքան եր կարոտել նրան, վոր այլիս չկարողացավ համբերել ու մի որ, մի փոքր կափոց ձեռքին, դիմեց իր վորդու աշխատավայրը:

Այն մոմենտին, յերբ մայրը հասավ այնտեղ, Զաքարինց բրիգադում ճաշի ընդմիջում եր: Տրակտորիստները վոմանք մեջքմիջքի ափած, վոմանք կիսաթեք, վոմանք ել տրակտորների շվաքում նստած ճաշում եյին: Իսկ Զաքարն արդեն ճաշել և նրանցից քիչ հեռու պառկել եր իր տրակտորի ստվերում ու հանգտանում եր:

— Բարե ձեզ... — յերկարացնելով դիմեց մայրը տրակտորիստներին:

— Բարե... մայրիկ, — նույն յեղանակով պատասխանեցին տրակտորիստները:

— Մեր Զաքարն ուր ե, տղերք ջան, — հարցրեց մայրը:

— Ահա այնտեղ հանգստանում ե, — պատասխանեցին տրակտորիստները, ցույց տալով Զաքարի պառկած տեղն ու ձայն տվին Զաքարին:

Զաքարն իսկույն վեր թռավ տեղից և տեսնելով մորը, վազելով մոտեցավ նրան: Մայրն ու վորդին գրկախառնվեցին և նետոնուեցին խոսելու:

— Դե, լինչպես ես, բալիկս, պատմիր:

Զաքարը կարճառոտ կերպով պատմեց իր և իրենց տրակտորային բրիգադի աշխատանքների մասին, իսկ վերջն ել ավելացրեց:

— Լովի եմ, մայրիկ, շատ լավ եմ, բայց ներիր, վոր հիմա խոսելու ժամանակ չունեմ, պետք ե աշխատել, ընդմիջումն արդեն գերջացավ:

Լովեց զանգի ձայնը, և տրակտորիստները գործի անցան:

Զաքարն ել մեծ դժվարությամբ բաժանվեց մորից և վազեց դեպի իր տրակտորը, նստեց նրա վրա ու շարունակեց աշխա-

տանքը: Մայրիկը վերադառնալիս մտավ Զաքարենց վագոնիկը, իր ձեռքի կապոցը, վորով սպիտակեղեն եր բերել Զաքարի համար, զրեց վորդու անկողնու վրա և դանդաղ քայլերով, բայց գոհ տուաջ շարժվեց դեպի տուն:

* * *

Աշնանային աշխատանքները շուտով վերջացան: Զաքարը մի քանի որով տուն վերադարձավ: Ցեղ հետո կնաց ՄՏ կայան իր տրակտորը վերանորոգելու:

Դեկտեմբերի 13-ին Սարաբաշյանի բրիգադի բոլոր տրակտորներն ել արդեն վերանորոգված եյին և աշխատանքի պատրաստ:

— Ապրեք, — ասաց ՄՏ կայանի գիրեկտորը, իմանալով այդ մասին և իրավունք տվեց վողջ բրիգադին մի քանի որ հանգըստանալու, ապա ունության գալ մյուս բրիգադներին:

Այդպես ավարտվեցին 1935 թվի աշխատանքները Սարաբաշյանի բրիգադում, վորտեղ աշխատում եր №51 «ՕՏԶ» տրակտորի վրա տրակտորիստ Զաքար Կուլբիքայանը:

* * *

Դեկտեմբերյան ցուրտ որերից մեկն եր: Զյուն չկար, բայց այնպիսի սաստիկ ու փոշեխառն քամի յեր փչում, վոր մարդ հազիվ եր վորդի վրա կանգնում:

Զաքարը սովորականից ուշ եր վերկացել: Խոր քնի մեջ մռացել եր, վոր այսոր պետք ե անցագիր ստանալու գնար, և շապում եր, վորպեսպիս չուշանա: Այսոր նա հագավ իր մաքուր շոբերը, սանրվեց, ոճվեց անուշահոտ յուղերով և արագ քայլերով գնաց դեպի միլիցիատուն:

Դեռ նոր եր վորդը միլիցիատան շեմքին դրել, յերբ հան կարծ լսեց իր յեղանը արտասովոր կանչը՝ Զաքար: Զաքարը կանգ առավ միլիցիատան առաջ և զարմացած սպասեց, մինչև վոր յեղը այսը մոտենա իրեն:

Արամը ժպիտը գեմքին հեղինել մոտեցավ Զաքարին, պարզեց նրան իր ձեռքը և ուրախ ձայնով արտասանեց:

— Շնորհավորում եմ, Զաքար ջան...

— Ի՞նչ ե պատահել իմնչ ես շնորհավորում... — ապշած հարցեց Զաքարը:

— Ի՞նչ կտաս, վոր ասեմ...

— Ի՞նչ պետք ե տամ, դե ասա, շուտ արա...

— Զե... Զե... խստացիր, հետո...

— Լավ, ասա, ինչ վոր ուզես, կտամ:

— Անմիջապես վերադարձիր տուն և պատրաստվիր. Հովհաննեսյանն ասաց, վոր գու՝ Մոսկվա յես գնալու, տրակտորիստներէ խորհրդակցությանը:

— Ցերբ...

— Հենց այսոր...

Զաքարն ուրախությունից չիմացավ ինչ անի. նա գրկեց յեղորը, համբուրեց նրան և հետո առանց միլիցիատուն մատնելու յերկու յեղբայրներն ուղղվեցին դեպի տուն՝ Մոսկվա գնալու պատրաստություն տեսնելու համար:

Իսկ հետեվյալ որը, դեկտեմբերի 21-ին, Զաքարի մայրը, քույրը և յեղբայրն ամուր սեղմեցին նրա ձեռքը, համբուրեցին ճակատը և ճամբու դրին դեպի կարմիր մայրաքաղաք — Մոսկվա:

* * *

Առաջին անգամ գտնվելով վողջ աշխարհի պրոլետարիատի հայրենիքի մայրաքաղաքում, Զաքարը հիացավ և մեծ տպագորություններ ստացավ: Կրեմլի հսկա աշտարակն անջնջելի մնաց նրա հիշողության մեջ: Մեծ տպագորություն թողեցին Զաքարի վրա նաև Մետրոպոլիտենը, մեծ թատրոնը, հեղափոխության թանգարանը և վողջ Մոսկվան իր բոլոր հարստություններով ու սովորություններով:

Իսկ ամենագլխավորն այդ բոլոր տպագորություններից, դա այն է, վոր Զաքարը, ինչպես և հարյուրավոր իր նման տրակտորիստներ, բախտ ունեցան խորհրդային իշխանության դեկավարների և մեծ ՍՏԱԼԻՆԻ հետ նստել մի դահլիճում և խորհրդակցել տրակտորիստների աշխատանքների մասին: Այդ փայլուն դեպքը յերբեք չի մոռանա Զաքարը, վորովհետև դա նրա 22 տարվա կյանքի տնմենայերջանիկ որն և յեղել:

1936 թվի հունվարի 4 նույնպես անջնջելիորեն գամվել է Զաքարի հիշողության մեջ: Այդ օրը նրա կյանքում մի նոր եղբացվեց, նրա կուրծքը զարդարվեց լենինի շքանշանով, վորին անշուշտ արժանի յեր Զաքարը:

Բացի լենինի շքանշանից, Մոսկվայից Կարսիր Ղրիմ բերեց Զաքարը նաև մի հեծանիվ, մի ժամացույց և մի ջութակ:

Տղերքը զարմանում եյին նրա վրա, յերբ նա 126 ուրեմի տվեց ջութակին:

— Ինչի՞դ ե պետք, — ասում եյին նրան:

— Ինձ շատ պետք ե, յես նաև ջութակահար եմ դառնալու:

Յեկ Զաքարը հենց գնած որվանից սկսեց նվագել ջութակ ու հետզետե տիրապետել նրա տեխնիկային ներկայումն նա նվագել և սովորել և իր ազատ ժամերն ոգտագործում ե այդ ուղղությամբ: Զաքարը շատ և մտածում իր կենցաղը կուլտուրապես կազմակերպելու մասին, վորոշել և անպատճառ պատեֆոն ևս ձեռք բերել:

Հոգատար վերաբերմունք ե ցուցաբերում դեպի Զաքարը նուև ՄՏ կայանը: Նրան տվել են նոր տուն՝ կահավորանքով: Առաջ Զաքարենց տանը չկար վոչ մի կահավորանք, իսկ ներկայումն նա ունի ճաշակով կահավորած տուն:


Զաքարի գիտական մակարդակն ավելի բարձրացնելու համար նրան ամրացված ե ուսուցչի վոսկանյան թեոդորը, վորը աշխարհագրություն, մաթեմատիկա և ուսւաց լեզու յե զասավանդում Զաքարին:

Հետաքրքրվում ե Զաքարն ուսումով և ուսուցչի տված առաջարանքները կատարում ե ժամանակին ու բարեխիղճ, վորի համար ստանում ե «լավ» և «գերազանց» գնահատականներ:

— Յես սովորում եմ տրակտորն ավելի լավ և հմտորեն վարելու և հետագայում աշխատանքի ել ավելի բարձր ցուցանիշներ տալու համար:

Կասկածից գուրս ե, վոր կոմյերիտական-շքանշանակիրը դեռ շատ բերգեր կզբավի, ինչպես դա հատուկ ե մեր յերկը և միայն մեր յերկը յերիտասարդությանը:

ԱՅՑՈՒԻ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԴԻԿ



Խայտնի դաշտավարական բրիգադի հին և ականավոր ըրեղազիր ընկեր
ԶՈՒՄԱՅԱՆ ՊԵՏՐՈՍՅ ՀՀ-Ի ՀՆԴԱՄԺԱԿ Կոլխոզից:

ՍԱՐԳԻՍԸ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԸ

Առավոտյան վաղ նիսվիթայում տիրում եր անսովոր իրարանցում: Դաշտավարական յերկրորդ բրիգադում, դեռ չլուսացած, բոլորը վոտքի վրա եյին: Գոմերում յուրաքանչյուր յեզապահ ցույց եր տալիս իր շնորհքը և ուժը:

Յազները մաքուր եյին ու իրարից համաշափ հեռու ուտում եյին առատ կերը: Գոմը մաքուր ավլած եր, իսկ կեղան ամբողջովին դուրս թափած:

Ավագ յեզապահը նորից շարունակում եր իր չանասեր աշխատանքը, նա կարգադրում եր մյուս յեզապահներին, վոր կարգի բերեն և գոմի բակը:

Այդ որը յերկրորդ բրիգադի բրիգադիր Հուդույան Սարգիսն ավելի լուրջ եր ու պահանջկոտ, ամեն անզամ, յերը անցնում եր լծկանների գոմը, մանրամասն ստուգում եր յեղներին և ամբողջ գոմի մաքրությունը: Նա զիտեր, վոր իր բրիգադն այդ որը պետք ե առանձնահատուկ քննություն տա: Որվա այդ հրատապ խնդիրն անհանգստացրել եր Սարգսին, նա շրջում եր բրիգադի գոմում, բակում և կամ մոտենում եր վորեւ կոլխոզների, խստությամբ ստուգում եր ամեն մի «մանրուք»: Անցնելով յեղների մոտից՝ Սարգիսը հանում եր իր սպիտակ թաշկինակը և նրանով մաքրում եր յեղների մեջքը. ու միայն այն ժամանակ, յերը մաքուր թաշկինակը չեր փոշտում, նա իրեն զգում եր հանգիստ:

— Կեցցեք, տղերք, մաքուր ե... Մի անզամ ևս ստուգեք ձեր լծկանն ու ամբացված լծկանը, կարգի բերեք այն... Մեր խնդիրն ե առաջ լինել մեր մրցակցից: Ամոթ և մեզ, յեթե մենք մեզ հետ մըցող Զափրոսյանի բրիգադից առաջ չկինենք:

— Նրանց դեռ շատ բան կա մեզ հասնելու: Առաջնությունն այսուհետև մենք պետք ե գրավենք, — վճռական տոնով պատահանեց հարվածային յեզապահ՝ Սատուրը:

* * *

Հունվարյան ցուրտ որ եր. գյուղի կենտրոնական մասում հավաքվել եր Վարոշի լովի անվան կոլխոզի ամբողջ յերկրորդ ըրիգառը։ Այդ որը բրիգադ եյին յեկել բրիգադի բոլոր կոլխոզնիկները և հարևան բրիգադից շատերը։ Ծածկատեղերից բրիգադի բակն եյին դուրս բերված նաև գյուղատնտեսական (գարնանացանի) մեքենաները, վորոնց վերանորոգումը բրիգադում ավարտվել եր դեռ գելտեմբերին, իսկ վորակի հարվածային տեսուչ Հակոբյան թորոսը մի քանի անգամ եր ստուգել այն։

Ցուրաքանչյուր շարքացանի, գութանի, փոցիչչի մոտ գտնվում եր նրան ամրացված կոլխոզնիկը. բրիգադի խոհարար՝ Խաչարյան Աշխենը ևա՛ խոհանոցի կահկարասիները կարգի բերած՝ սպասում եր ստուգատեսին։

Բոլորի հայացքն ուղղված եր գեղպի ճանապարհը, դեպի յերեք սահմակները, վորոնք հնգական մարդով մոտենում եյին գյուղին։ Բրիգադիր Սարգսին թվում եր, վոր այդ որն ստուգատեսին պետք ե սասնակցեն միայն իր հետ մրցող Զափրոսյանի բրիգադի պատգամագորները, բայց յերբ բրիգադին մոտեցան յերեք սահմակները, նա յեկորների մեջ տեսավ բացի իր հետ մրցող բրիգադից, նաև ուայոնի առաջավոր հինգ բրիգադների պատգամագորներին։

Ստուգող հանձնաժողովին դիմավորեց կոլխոզի նախագահ՝ Խարագյուղյանը և սրիգադիր՝ Սարգիսը. Սարգիսն անձամբ մոտեցավ բրիգադիր Զափրոսյանին և յեղբայրաբար սեղմեց նրա ձեռքը։ Յերկու մրցակիցների աչքերում նկատելի յեր և՛ փոխադարձ հարգանք, և՛ խանդ։

* * *

Գործն սկսվեց այն հարցից, թե հարվածային կոլխոզնիկների Համամիութենական յերկրորդ համագումարին պատգամագոր ուղարկելու իրավունքը ուայոնից ով պետք ե նվաճի։

— Զեզ հայտնի յե, վոր փետրվարի 10-ին Մուկվայում բացվելու յե հարվածային կոլխոզնիկների համագումարը, — հայտնից կուսահանգչուհի ընկեր Պետրոսյանը, — համագումարին մեր ստյոնից ուղարկելու յենք մեկ բրիգադիր պատգամագոր և այդ պատգամը իրավունքը նվաճելու յե այն բրիգադը, վորն այսոր լավագույն ձեռվ պատրաստ ե գարնանացանին։ իսկ թե մվ և այդ պատգամը իրավունքը նվաճողը, դա դեռ հայտնի չե։ Այժմ

ույսոնում սկսվել ե առաջավոր բիզաղների փոխադարձ ստուգատեսը... այսոր մեր հատուկ ստուգող հանձնաժողովը, «26 կոմիտարներ» կոլխոզի Զափրոսյանի բրիգադի ներկայացուցիչների մասնակցությամբ, վորոնց հետ դուք մըցում եք, պետք ե սկսի ստուգումը նաև ձեր կոլխոզում։

— Համաձայն ենք, — համարյա միասին բացականչեցին վորչիլովցիները։

Սկսեց ստուգումը։ Վորոշիլովցիները վաղուց եյին սպասում այդ ժամին։ Բոլորը լարված հետեւում եյին հանձնաժողովի և մըցող բրիգադի ներկայացուցիչների ստուգմանը։ «Չլինի թե մի վորնե բան աչքաթող ե արված, և այդ անմիջապես նկատի մըցող բրիգադը»։

— Չե, չե, զատկավոր իրավունք նվաճողը մենք ենք լինելու. — այդ եր արտահայտվում վորոշիլովցիների հայացքներից, յերբ նրանք նայում եյին միմյանց։

Ստուգող հանձնաժողովի անդամները մեկը մյուսի հետևից մտնում են անսառունների գոմերը։ Մրցակից բրիգադիր Զափրոսյանը շոշափում ե յեղների վզները, վատները, բաց ե անում նրանց բերանը ու, հիանալով լծկանի ինսաքով՝ մոտենում ե Սարգսին, կամաց խփում ե նրա ուսին և հայտնում ե մտերմարար. — Կեցցես, Սարգիս, յեղները մաքուր են և լավ կազդուր ված։

Բացի բրիգադիր Զափրոսյանից, ստուգման մասնակցող ուայոնի մյուս առաջավոր հինգ բրիգադիրներից ամեն մեկն աշխատում եր մի վորնե թերություն գտնել բրիգադում։ «Ի՞նչպես կարող ե պատահնել, վոր Սարգսի բրիգադն իրենցից առաջավոր էինի», — մտածում եյին նրանք. Բրիգադիր Խըլիկյանը (Անդրեևի անվան կոլխոզից), վոր առաջին անգամ եր լինում վորոշիլովցիների մոտ, Հավատալով Զափրոսյանի գովասանական խոսքին, մատեցավ յեղներին, խուզարկու աչքերով նայեց և շոշափեց նրանց առանձինառանձին։

— Ինչ ես փնտում, բարեկամ, — հետաքրքրությամբ հարցըց Սարգիսը Խըլիկյանին։

— Նա կասկածում ե, վոր մեզ մոտ յեղները նույնպես քոստ են, ինչպես իր բրիգադում, — Խըլիկյանի փոխարեն Սարգսի հարցին կատակով պատասխանեց բրիգադի թղթակից՝ Համազապը։

— Իսկ դու վորտեղից գիտես։

— Յես ձեր բրիգադում 10 որ առաջ եմ յեղել՝ թղթակցական ույշի ժամանակ, հիշեմ ես:

Բրիգադիր Խըլիկանն այլևս չխոսեց: Նա լոեց, իսկ գոմում հավաքածների մեջ առաջացավ աշխուժ ծիծառ:

* * *

Ստուգումը յեզների գոմերում ավարտվել եր, յերբ դրսում, շարքացանների մոտ, հանձնաժողովի անդամ՝ բրիգադիր Խիարխյան Սարգիսը («Սոցբաց» կոլխոզից) սկսել եր զրույցը վորոշիլովցիների հետ: Շարքացանի վրա աշխատող կոլխոզնիկ Ղազարի հետ վեճ եր առաջացել այն մասին, թե նա քանի ցենտները պետք ե ցանի ամեն մի հեկտարի վրա: Ղազարն անվստահ հայտնում ե, վոր մեկ հեկտարի համար յերկու և կես ցենտները բավական ե, իսկ բրիգադիր Խիարխյանը, նրան փորձելու համար, պնդում ե, վոր յերեք ցենտներ պետք ե ցանել ամեն մի հեկտարում:

Զրույցը գնալով ավելի յեր խորանում: Բրիգադիր Խիարխյանը հետաքրքրվելով արտադրական պլանով, այս անդամ հարց ե տալիս և 3 շարքացանի մոտ կանգնած կոլխոզնիկ՝ Հակոբյան Մրապիոնին — քանի՞ հեկտար և քո ողակի պլանը:

— Յերեսուն և հինգ:

— Իսկ վորքան ե ցանի որական նորման:

— Չորս և կես:

— Ուրեմն մոտ 9 որում պետք ե ավարտեք ձեր բրիգադի ցանքսը:

— Այո, բրիգադը պարտավորվել ե ուայոնի համար նախատեսված 11 որվա դիմաց հասկայինների ցանքսն ավարտել 9 որում:

* * *

Որն արդեն մթնել եր, յերբ վորոշիլովցիների մոտ ավարտվեց գարնանացանի պատրաստականության ստուգումը: Ստուգող հանձնաժողովը հանրագումարի բերելով ստուգման ընդհանուր արդյունքները՝ գտավ, վոր Վորոշիլովի անվան կոլխոզից Հուդույան Սարգսի բրիգադը ուայոնում մյուս բոլոր բրիգադներից լավ ե պատրաստվել գարնանացանին:

Վորոշիլովցիներն այդ յերեկո անհամբեր պասում եյին ստուգող հանձնաժողովի հեղինակավոր կարծիքին. նրանց հետաքրքրում եր, թե ոչ ե պատվավոր իրավունք նվաճողը:

Յերեկոյան կուսիրահանգչուհի ընկեր Պետրոսյանը կոլխոզնիկների առաջ հանրագումարի բերելով որվա աշխատանքները, կտրճ յեզրափակեց.

— Ռայոնի առաջավոր վեց բրիգադներում կազմակերպված նախամագումարային ստուգատեսի ընդհանուր արդյունքները ցույց են տալիս, վոր հարվածային կոլխոզնիկների Համամիութենական համագումարի պատգամավոր ուղարկելու իրավունքը մեր — Մյասնիկյան — ուայոնից նվաճում և Վորոշիլովի անվան կոլխոզի Հուդույան Սարգսի բրիգադը:

Դահլիճը դղրդաց բուռն ծափահարություններից, ուրախ և հպարտ բացականչություններից:

* * *

Այսորվա նման լավ հիշում եմ 1935 թվի փետրվարի 7-ը, յեր բրիգադիր Հուդոյան Սարգիսն ուրախ գեմքով ներս մտավ խմբագրություն: Բարեվելուն պես նա անձիջապես հայտնեց, վոր գոնում և Մոսկվա, սոցիալիստական դաշտերի հարվածայինների համագումարին մասնակցելու:

Ռայոնի այդ լավագույն բրիգադիրը, վոր անցյալում յերկար տարիներ ճնշվել ե կուլակների ձեռքի տակ, իր կաշվի վրա կը ել ե աղքատության դառնությունը, այսոր իրեն զգում ե բոլորից յերջանիկ. չե՞ վոր նա ապրում ե կոլխոզային ունեվոր և կուլտուրական կյանքի աճող շրջանում:

— Եսո ինձ հետ Մոսկվա յեմ տանում մեր կոլխոզնիկների թանկագին նամակն ընկեր Վորոշիլովին, — նամակը տալով ինձ ուրախ ասաց Սարգիսը:

«Թանկագին Կիւմենի Վարություն, — այդպես ե սկսվում վորոշիլովցիների նամակը:

«Եր կոլխոզը գտնվելով Ազով-Սեվաժովյան յերկրամասի Մյասնիկյան ուայոնի Նիսվիթա գյուղում, կրում ե Ձեր անունը, մեր հարազատ անհաղթ Կարմիր բանակի առաջնորդի անունը,

Պատահական չե, վոր մեր կոլխոզը Ձեր անունով ե կոչվում: Մեզնից շատերը տեսել են ձեզ անձամբ ընկեր Բուգրունու հետ՝ Կարմիր հեծելազորներին զեկավարելիս, յերբ գուք գտնվում եյիք Նիսվիթա և Մեծ-Սալա գյուղերի միջև, յերբ գուք, վճռական մարտից հետո, հաղթանակով արշավեցիք Ռոստովի վրա:

Պայքարում մենք նվաճեցինք իրավունք հպարտությամբ կը ելու Ձեր անունը և կոլխոզնիկների Համամիութենական համա-

գումարին ուղարկելու մեր լավագույն բրիգադիր Հո դոյշն Յարգսին, վորը Զեղ անձամբ տեսել է 1920 թվին:

Մեր ազգային հայկական ռայոնը, մեր գյուղը, մինչև կոլեկտիվացումը, համարվում եր ամենահետամնացը և աղքատու: Թանգագին Կիմենտի Վորօսիլով, կարիք կա արդյոք ապացուցելու, վոր ռուսական ցարիզմի և կուլակային իշխանների ձեռքում շարունակում եյինք ճնշվել, շահագործվել և ապրել կիսաքաղց ու անկուլտուրական:

Այս թագային իշխանությունը, բոլցիկյան կուսակցությունը, Լինինի և Ստալինի ղեկավարությամբ, փրկեցին մեղ ռուսական ցարիզմից, ավեցին մեղ հնարավորություն կենտրոնանալու կոլխոզում և մեղ համար ստեղծելու ունեվոր և լուսավոր կյանք:

Մենք վոչ միայն հասկացանք, այլև անձամբ զդացինք կոլեկտիվ տնտեսության կարեվորությունը:... Կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման սկզբնական շրջանում, ոգտվելով մեր թուրությունից, մի շարք կուլակներ ներս իցկեցին կոլխոզ, վորտեղակնական կազմակերպեցին իրենց կուլակային սարոտաժը:

Կուլակային սարոտաժի հետևանքով, 1932 թվի վերջին, մեր կոլխոզում (վորտեղ կան 350 աշխատունակ կոլխոզնիկներ) մնացին միայն չորս զույգ յեղներ, 1932 թվի ցանքաց կատարվեց 65 տոկոսվ, հացահանձնումը միանգամայն չկատարվեց. և, յեթե չլիներ քաղրածինը, մենք չեյինք կարողանա վոչնչացնել սարոտաժը:

Կիմենտի Վորօսիլով, մենք այժմ ունենք 64 գլուխ յեղ, 9 ձի և 5 ուղար. այդ ամբողջ լծկանն ամրացված ե կոլխոզնիկներին:

Դուք գիտեք, վոր 1934 թվին մեղ մոտ յեղավ չորային տարի, բայց մենք վերցրինք 2-3 անգամ ավելի բերք, քան սարոտաժի տարին, 1932 թվին: Հացահանձնումը և ՄՏ կայանի բնամթերքը լրիվ հանձնեցինք սեպտեմբեր ամսին,— չորս ամիս առաջ, քան 33 թվին:

Քաղրածնայինները, կուսակցության կողմից մեղ ուղարկված լավագույնները, գործով ողնեցին մեղ: Կազմակերպեցին սոցմրցում մեր և մեր հարևան ՀՀ կոմիսարներ կոլխոզների միջև: Մրցակցության մեջ մեր կոլխոզը գրավեց առաջնություն և նվաճեց իրավունք՝ մեր կոլխոզից կոլխոզնիկների համամիութենական համագումարին պատգամավոր ուղարկելու:

Կիմենտի Վորօսիլով, բոլցիկյան կոլխոզի և ունեվոր կյանքի համար մղվող պայքարում մեր առաջ կա դեռ շատ աշխատանք և շատ ինդիքներ: Այդ պայքարում մեր թշնամիները շատ անդամ

աշխատում են խանգարել մոզ: Բայց վոչ չի կարող կանգնեցնել մեր ունեվոր, կուլտուրական, սոցիալիստական կյանքի տառջապապությունը, վորովհետև մեզ ղեկավարում ե լենինյան կուսակցությունը, նրա քաջարի, մեզ բոլորիս սիրելի, մեր հարազատ և առաջնորդ ընկեր Ստալինը:

Ճանկանում ենք Զեղ, Կիմենտի Վորօսիլով, առողջություն և յերկար աշքիների կյանք»:

* * *

Փետրվարի 24-ին յերեկոյան հրավիրված եր «Վորոշիլով» կոլխոզի ընդհանուր ժողով: Կոլխոզի կուլտուրայի տունը, գիռ չմըթնած, լցված եր կոլխոզնիկներով: Ժողովին հագավագնեյին բոլորը: Նրանք յեկել եյին լսելու իրենց կոլխոզի առաջավոր բրիգադիրին՝ հարցածաւին կոլխոզնիկների յերեկորդ համագումարի պատգամավորին: Հավաքվածներից յուրաքանչյուրն անհամբեր սպասում եր լսելու Սարգսին, թե նա ինչ ե պատմելու համագումարի և Մոսկվայի մասին:

— Մեր Սարգսի վերադարձել և Մոսկվայից, նա նկարվել ե ընկեր Ստալինի հետ,— ասում եյին միմյանց կոլխոզնիկները:

— Ասում են Սարգսի սեղմել և ընկեր Վորոշիլովի ձեռքը և հանձննել ե մեր նամակը:

Դուքսն արդեն մթնել եր, յերբ կոլխոզի նախադահ՝ Խարագյանն ընդհատեց կոլխոզնիկների մտերմական ուրբախոսակցությունը:

— Հնկերներ, — ժողովը բացելով ասաց Խարագյանը, — այսորվա մեր ժողովում հարվածային կոլխոզնիկների համամիութենական յերեկորդ համագումարի արդյունքների մասին կգեկուցի համագումարի մեր պատգամավոր՝ Հուգույան Սարգսը, թե նա ինչ ե տեսել Մոսկվայում և թե ինչպես են Ստալինի հետ միասին քննել և ընդունել զյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրությունը:

Կոլխոզնիկների բուռն ու աղմկալից ծափահարությունների տակ համագումարի պատգամավոր Սարգսի բարձրանում ե բեմ:

— Հնկերներ, վարտեղից սկսել, վորը պատմել, — վոգեվորված սկսում ե իր խոսքը Սարգսիր: — Այս 15 որվա մեջ այնքան եմ տեսել, վոր յեթե պատմեմ, մի ամբողջ գիշեր այստեղ կմնաք:

— Պատմիր հերթով բոլորը, — ձայնում են տեղից կոլխոզնիկները:

— Լավ, կսկսեմ հենց սկզբից: Յերբ յես գյուղից գնացի Խոստով, այստեղ արդեն հավաքվել եյին մեր յերկրամասից մեկնող համարյա բոլոր պատգամավորները: Փետրվարի 8-ի առավոտյան Խոստովից մենք ուղեվորվեցինք զեպի Մոսկվա, իսկ ամսի 10 ին մենք արդեն գտնվում եյինք Մոսկվայում:

Համագումարին պատգամավորներ եյին յեկել յերկրի ամեն մի անկյունից, ամեն մի ազգությունից: Ու չնայած նրանք տարբերվում եյին միմյանցից իրենց հատուկ ազգային տարազով, բայց նրանք բոլորն ունեցին միասնական նպատակ: Այդ համագումարը հանդիսանում ե բոլշևիկների ազգային քաղաքականության փայլուն հաղթանակներից մեկը:

Առաջին որը մենք ավտոներով արձեցինք ամբողջ Մոսկվայում, յեղանք հեղափոխական թանգարանում, տիսանք Լենինի դամբարանը:

Մենք յեղանք նաև նորակառույց Մետրոպոլիտենում: Մետրոն—դա մի նոր աշխարհ ե մարմարե պատերով և գտնվում ե զետնի տակ: Այստեղ կառուցված են 12 հատ յերկնարկանի կայարաններ: Յեզ միշտ մի կայարանից մյուսն են սլանում ելեկտրական մարդատար վագոնները:

Յես արդեն գտնվում եյի վագոնում, բայց չեյի հավատում, զոր դա իրականություն եւ:

Մենք նոր եյինք նստել վագոնում, յերբ դուները փակվեցին և նա շարժվեց տեղից...: Ու այդպես Մոսկվայում գետնի տակով կարելի յե անցնել մոտ 12 կիլոմետր տարածություն:

Այդ հսկա շինարարությունը Մոսկվայի բանվորներն ավարտել են 11 ամսում:

Մետրոն մի չտեսնված հրաշալի շինարարություն ե, զորով պարծենում ե մեր յերկիրը:

Մոսկվայում կարելի յեր տեսնել ավելին, բայց մենք անհատ-բեր սպասում եյինք համագումարի բացմանը:

Վերջապես սոտեցավ մեր ցանկալի ժամը, փետրվարի 11-ի յերեկոյան ժամի 6-ն եր, յերբ հողժողկոմ ընկեր Զերնովը բացեց համագումարը:

Դահլիճում տիրում եր իրարանցում... դեռ ինչ-վոր մեկը չկար. վոչ միայն յես, այլ բոլոր պատգամավորներս սրտատրոփ սպասում եյինք տեսնելու մեկին՝ աշխարհի մեծ մարդուն—Մտալինին: Շատ չանցավ, մի քանի բոլով, և նա յերեաց բեմի վրա. Այդ հանդիպման ժամը մեզ պատճառեց չտեսնված յերջանկություն և

ուրախություն: Ընկեր Ստալինը բեմի վրա նկատվելուն պես զահլիճում հավաքված 1500 պատգամավորները մեկ մարդու նման վոտքի կանգնեցին և սարքեցին յերկարաժակ ովացիա:

Մեր մի շարք պատգամավորները կարծում եյին, թե Ստալինը համագումարին չպետք ե մասնակցի, չե վոր նա շատ մեծ գործերով ե զրադշա: Այդ ճիշտ ե, բայց նա ժամանակ գտավ ու մասնակցեց մեր համագումարին: Համագումարը տեղից 7 որ և այդ յոթ որն ել ընկեր Ստալինն ամբողջ ժամանակ մասնակցում եր համագումարին: Նա ուշադրությամբ լուսմ եր բոլորի յերջանկությունը: Կարենը մասերը գրի յեր առնում, իսկ հաճախ ժպատում եր և հավանություն տալիս:

Համագումարի ընդմիջումներին ընկեր Ստալինը նույնպես չեր հեռանում համագումարի դահլիճից, նա միշտ կոլխոզնիկների հետ եր: Այդ մեծ մարդին ամեն մի կուլտովնիկի հետ խոսում եր շատ հանգիստ և համոզիչ տոնով:

Յես աշխարհում ինձ համարում եմ յերջանիկ մարդ, վոր կարողացա տեսնել մեր սիրելի առաջնորդին, ընկեր Ստալինին... Այո, յես ինձ յերջանիկ եմ համարում, քանի վոր յես վոչ միայն տեսա, այլ և նկարվեցի ընկեր Ստալինի հետ:

Ընկերներ, յես տեսա և ընկեր Վորոշիլովին. Նկարվելուց հետո մտեցա նրան, սեղմեցի ձեռքն ու հանձնեցի նրան ուղղած նամակը:

— Այժմ, ընկերներ, մի քանի խոսք գյուղատնտեսական արտելի կանոնադրության մասին,—մի փոքր ընդմիջումից հետո Սարգիսը շարունակեց իր զեկուցումը: — Թերթերում արդեն կաշդացել եք և ձեզ հայտնի յե, վոր համագումարը հենց առաջին որը լսեց ընկեր Յակովլեվի զեկուցումը գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության մասին: Զեկուցումից հետո յերկրի ամեն մի հանրապետությունից, յերկրամասից, մարդից, աղային ուայոններից պատգամավորները յելույթ ունեցան: Նրանցից ամեն մեկը համագումարին պատմեց իրենց ձեռք բերած խոշոր նվաճումների, ամենորյա աշխատանքների հարուստ փորձերի մասին:

Համագումարի առաջին նիստից մենք ստացել եյինք գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության նախ գիծը: Յես այդ նախագիծն ամբողջությամբ կարդացի յերեք անգամ: Ինչքան ավելի եյի կարգում, այսքան ինձ պարզ եր լինում այն մեծ ճանապարհը, վորն անցել ենք մենք, և այն ուղին, վորը պետք ե անցնենք աղնիվ աշխատանքով:

Արտելի նոր կանոնադրության հիման վրա հողն ամրացվում
է կոլխոզին և այն վերջնականապես պատկանում է մեզ: Չի թույ-
լատրվում, վոր կոլխոզի հողամասն արենդով արվի: Կոլխոզի ամ-
բողջ հողամասը պետք է մշակվի աշխատունակ կոլխոզնիկների
միջոցով: Հողը պետք է մշակնք այնպես, վոր հողից ստանանք
հարուստ, առատ բերք:

Արտելի նոր կանոնադրության մեջ, ընկերներ, վճռականապես
դրված է կոլխոզները բոլշևիկյան, իսկ կոլխոզնիկներին ունեցո՞ր
դարձնելու խնդիրը: Մեզ անհրաժեշտ է այդ գործում ձեռք բերել
նոր և ավելի մեծ նվաճումներ: Այսոր, ինչքան ել մեծ լինի մեր
նվաճումը, բայց շատ են և մեր անելիքները:

Առաջմմ այսքան համագումարի և Մոսկվայի մասին, — վեր-
ջացնելով իր զեկուցումն, ասում է Սարգիսը, — իսկ մյուս անգամ
կյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրությունը մշա-
կելիս, կանոնադրության հետ կծանոթանանք ավելի մոտից:

* * *

Արտելի նոր կանոնադրության մշակման և ընդունման որը
Վորշիլովի անվան կոլխոզում նշանակված եր մարտի 14-ին: Այդ
որը, մինչև ժողովը սկսելը, կոլխոզնիկների մեջ մեծ աշխուժու-
թյուն եր առաջացել: Նրանք շատ տաք խոսում և իրենց կարծիքն
որին հայտնում կանոնադրության մասին:

Վերջապես ժողովը բացվում է և սկսվում կանոնադրության
ընթերցանությունը: Դահլիճում տիրում է լուսթյուն: Կոլխոզ-
նիկների մոտ գտնվում է մեկական որինակ կանոնադրություն:
Յուրաքանչյուրը հետեւում է ընթերցանությանը:

Կարդացվում է կանոնադրությունն սկզբից: — «Թյուղի աշխա-
տավոր գյուղացիությունը ստանիցայի, գյուղխորհրդի...»

— Դա ավելորդ ե — հանկարծ առաջին մասից լսվում է ձայն, —
ավելի շուտ հարկագոր ե գրել «Ազով-Մեծովյան յերկրամասի Մյաս-
նիկյան ուայոնի Նիսվիթա գյուղի աշխատավոր գյուղացիությունը
միանում է ընկեր Վորոշիլովի անվան գյուղատնտեսական արտե-
լի մեջ»:

— Դա ճիշտ չե, — ընդհատում է մի ուրիշը, — կանոնադրության
մեջ ասված է միանում են, այնինչ մենք դեռ չորս տարի առաջ
մեջ միացել:

Ուղղում ընդունվում ե:

Կանոնադրության կետերի ընթերցման հետ աճում է կոլխոզ.

նիկների ակտիվությունը, նրանք բոլորն ել ցանկանում են իրենց
հավանությունը տալ և հայտնել իրենց կարծիքը կանոնադրու-
թյան մասին:

Զայն և խնդրում Պետրոսյան Գեվորգը:

— Կանոնադրության առաջին կետում, — ասում է Պեվորգը, —
միաժամանակ ասվում է սահմանել ձիու լավ խնամք: Ինչու չի
կարելի գրել նաև յեզների լավ խնամքի մասին:

— Վոչ միայն յեզների, այլ և ուղտերի, չե վոր մեր կոլխոզում
կան նաև ուղտեր, — ավելացնում է Գեվորգի հարեւանը:

Սկսվում է կանոնադրության յերկորդ՝ հողի մասին յեղած
կետի ընթերցանությունը:

Հողի մասին Պետրոսյան կարապետը միանգամայն ճիշտ կեր-
պով նկատում է, վոր կոլխոզում սահմաններն արդեն հերկված են
և ամբողջ հողը ներկայացնում է կոլխոզի ընդհանուր զանգվածը,
ել ինչու գրել այդ հողերը միացնելու մասին. լավ չե լինի գրել,
վոր այդ հողերն արդեն միացված են:

Բաղդասարյան Լուկաշին հետաքրքրում է մի հարց. իրավունք
ունի արդյոք կոլխորդն իր հողամասից արենդով տալ ուրիշներին
մշակման համար: Այդ հարցին բացասական պատասխան են տա-
լիս հենց իրենք կոլխոզնիկները:

Մեծ աշխուժություն է առաջանում դահլիճում, յերբ կարդաց-
վում է կանոնադրության յերկորդ կետը — կոլխոզնիկներին ան-
հատական պարտեզի հող տալու մասին: Բոլորը վողջունում են
նախատեսությունը և այդ կետը խմբագրվում է այնպես, վորը
հնարավորություն է տալիս յուրաքանչյուր կոլխոզնիկի ունենալ
կես հեկտար պարտեզ:

Կանոնադրության առաջին յերկու կետերի մանրակրկիտ-
քննությունը մեծ յեռանդ առաջացրեց կոլխոզնիկների մեջ:

Այդ որը ուշ ավարտվեց կանոնադրության մշակման աշխա-
տանքը: Ժողովից հետո սկսեց նվազել կոլխոզի «որկեստրը», Նիս-
վիթայի զուռնան:

* * *

Մարտի 15-ին յերեկոյան շարունակվում է կանոնադրության
մշակումը: Ժողովը բացվում է ճիշտ ժամը 9-ին: Քննարկվում են
կանոնադրության յերեկորդ և հինգերորդ գործիքները:

Կանոնադրության 5-րդ գլխի քննարկումը յերկար ժամանակ
և խլում Խոսքը վերաբերում է կոլխոզնիկի անհատական տնե-

առնելիք չափերին։ Անդրանիկ Հարությունյանը հարցնում է՝ «Յես իրավունք չունեմ իմ հորթը մեծացնել յեզ դարձնել և կոլխոզում աշխատանքի տալ, թող աշխոր վաստակի»։

Այդ հարցը կոլխոզնիկների միջ աշխուժ ծիծաղ ե առաջացնում։ — Յերեկ Անդրանիկն ուզում ե յեղան վաստակած աշխորերով պարել, վոր ինքը վոչինչ չանի, — փսխում են առաջին շարքում նստածները։

Բայց շուտով Անդրանիկն ինքը համոզվում ե, վոր այդպես մտածել չի կարելի, վոր դա կոլխոզնիկի ուշագրությունը կթեքի կոլխոզային արտադրությունից։

Կանոնադրության չորսորդ և հինգերորդ գլուխներն արտելի և գարչության գործունեյության և անդամության մասին, ընդունվում են առանց փոփոխությունների։ Բոլորը հավանություն են տալիս և համոզվում, վոր կոլխոզի ընդհանուր ժողովը, դա բարձրագույն որգանն ե տվյալ կոլխոզի համար։

Կոլխոզնիկներին յերկար հետաքրքրում են կուլտուրական միջոցառությունը — կուլտուրական տուն, եկեկտրոֆիկացիա, բաղնիք, ծառատունկ — ահա թե ինչ են ուզում վորոշիլովցիները և այդ բոլորը նրանք արտահայտում են իրենց առաջարկությունների միջ։

Մարտի 16-ին, յերբորդ որը, վորոշիլովցիները շարունակում են մշակել և ընդունել ունեոր կյանքի Ստալինյան կանոնադրությունը։

ՄԱՆԱԾԸ

Փոքր ժամանակ Զինյան Մանաշը թեև մեծ ցանկություն ուներ սովորելու, թեև ձգտում եր դեպի դպրոց, բայց նրանք թույլ չտվին և ասացին.

— Անոթ ե, աղջիկը չի սովորում։

Իսկ հայրը պնդում եր.

— Մնա տանը և աշխատիր։

Յեվ նա մնաց տանն ու աշխատեց։

Ժամանութ տարեկան եր Մանաշը, յերբ նա ամսւանացավ։ Ամսւանացավինը նույնպես հոր նման ասաց։

— Աշխատիր, վոր հաց ունենանք։

Բայց մի անգամ, յերբ արդեն Մանաշն ուներ մի տարեկան սեաչյա աղջիկ, մոտեցավ իր ամուսնուն և ասաց.

— Գիտեմ, հիմա մեր գյուղում կազմակերպված են լիկայաններ, ուզում եմ սովորելու...

— Սովորելը քո բանը չի, յերեխայիդ նայիր, — պատասխանեց ամուսինը։

* * *

1930 թվին եր, համատարած կուեկտիվացման ժամանակ, յերբ սկսվեցին կազմակերպվել բոլշեվիկյան կոլխոզները։ Մանաշը հաղիպատակ համոզեց ամուսնուն և նրանք ընտանիքով մտան կոլխոզ։ Այն ժամանակ ամբողջ Թոփտին մի կոլխոզ եր։ Մանաշը, դրդված ինչ վոր բանից, համոզված եր, վոր կոլխոզում անպայման հնարավորություն կստանա և աշխատելու և սովորելու։

Վերջապես յեկավ այն ըոպեն, վորին Մանաշն սպասում եր անհամբեր։ Դա 1932 թվին եր։ Կոլխոզ յեկավ գյուղխորհրդի կուլտուրակցիայի նախագահը, հավաքեց բոլոր անգրագետ կիսագրագետ կոլխոզնիկներին ու կոլխոզնիկունիներին և ասաց.

— Հեկերներ, նոր կյանքի մարդիկ պետք եւ լինեն գրագե... Կազմակերպում ենք ձեր կոլխոզում լիկայան:

Սովորելու համար ցուցակագրվողների մեջ ամենից առաջի Մանաշն եր: Թեև նրա ամուսինը դեմյեղավ, բայց Մանաշը նրան առարկեց.

— Վոչ, ուզում եմ սովորել, ուզում եմ իմանալ, թե ինչ կա մեր լայնատարած աշխարհում...

* * *

Մանաշին դժբախտություն պատահեց. 1933 թվի ձմեռը մեռավ նրա ամուսինը: Սկզբում նա թեև տիրեց, բայց հետո մոռացավ իր տիրությունը, վորովհետև նրա ամենամեծ խինդը՝ կոլխոզը. որեցոր ծաղկում եր, աճում և ամրանում:

Մնացին չորս տարեկան աղջիկն ու ինքը: Աղջկան նա տարավ մանկահապարակ, իսկ ինքն ամրողովին նվիրվեց կոլխոզին: Ճերեկն աշխատում եր կալխողում, իսկ յերեկոյան հաճախում լիկայան:

Լինում եյին գիշերներ, յերբ տանը նա մինչև ժամի մեկը նստում եր մեծահասակների այբուբենի գրա և դժվարությամբ կարդում:

— «Լե-լենինն ասել-ասել ե՝ սովորել, սովորել ե, նու՞նորից սովորել...»

Իսկ յերբ հետեյալ որը լիկայանում նա լավ պատասխանեց դասը, լիկայանի ղեկավարն ասաց.

— Կեցցես:

Բոլոր ընկերունիները նայեցին նրան, հջամփեց նրա սիրտը և նա, ամաչկոտ հայացքով նայելով շուրջը, մտածեց. «Այուս անգամ պելի լավ պետք ե սովորեմ:»

* * *

Նա տեսնում եր, թե ինչպես իր աչքերի առաջ, [] կոլխոզում, որեցոր փոխվում ե կյանքը, փոխվում են մարդիկ, փոխվում ե ինքը՝ Մանաշը: Աշխատում ենա այդ կոլխոզի Մակար ձևագույյանի առաջավոր բրիգադում: Բրիգադիրը դեռ 1934 թվին տեսնում եր, թե ինչպես նա իր հարվածային աշխատանքով, նորմաների գերակատարումով բոլոր կոլխոզնիկների ու կոլխոզնիկունիների մոջ աչքի յե ընկնում:

Մի անգամ 1935 թվի գարնանը դաշտակայանում, յերբ Մանաշը պատրաստվում եր գնալ քաղնանի, Մակարը կանչեց նրան և ասաց.

— Վորոշել ենք քեզ նշանակել ողակավար, դեմ չես:

Մանաշը պատասխանի վոխարեն թեթևակի ժպտաց:

— Բացի դրանից, այսուհետեւ դու իմ ողնականն ես:

Մանաշը մի քիչ զարմացած հայացքով նայեց Մակարին:

— Միթե յես այդքան...

— Այո, դու աճում ես, — պատասխանեց կոմունիստ բրիգադիրն, ու նրանք բաժանվեցին:

Մանաշի ողակը բաղկացած եւ ութ կոլխոզնիկունիներից: Թե 1934 և թե 1935 թվերի ընթացքում նրանք բոլորն ել հարվածայնունիներն են: Ջլավուխյան Հոփիսիմեն, Անտոնյան Սավեթը, Նազարեթյան Փառանձեմը, Ոթառքարիյան Վարդուհին և ուրիշներն առաջին բրիգադի և Մանաշի ողակի լավագույն հարվածայնունիներն եյին: Քաղնանի ժամանակ նրանցից յուրաքանչյուրը քառորդ հեկտարի փախարեն քաղնանում եր կես հեկտար, հունձի ժամանակ ամբողջ ողակը չըրսի փոխարեն ձեռքով կապում և հավաքում եր վեց և ավելի հեկտար խուրձեր:

Յերեկվա ժրաշան աշխատանքից հետո Մանաշը հավաքում եր իր ողակի աղջիկներին և ասում:

— Իսկ հիմա [] նիւթենք, մեր քիչ թերթ կարդանք:

* * *

Մանաշը գյուղխորհրդի անդամ ե, և, վորպես խորհրդի պարտաճանաչ անդամ, նա կոլխոզում տանում ե հասարակական աշխատանք: Հավաքում ե կոլխոզնիկունիներին և բացատրում նրանց զանազան քաղաքացանութեական կամպանիաների մասին: Կոլխոզում նրան ճանաչում են բոլորը և մեծ հարգանք են ցույց տալիս: Իսկ կոլխոզի կուսկազմակերպիչ Խաչիկյանն ասում ե:

— Նա մեր ամենալավ կոլխոզնիկունիներից ե:

Յերբ այս տարվա ամառը [] կոլխոզի բրիգադի Մակար ձևագույյանին նշանակեցին Լարինի անվան կոլխոզի նախագահ, բրիգադը մնաց Մանաշի խնամքին: Մակար Մանաշն իրեն չկորցրեց, հավաքեց կոլխոզնիկներին և ասաց.

— Մեր բրիգադը, ընկերներ, առաջավոր ե, ընկեր Մակարի գնալուց հետո նույնպես պետք ելինի առաջավոր, չե վոր բրիգադի լավ անուն հանողները մենք ենք:

Իսկ հիմա այդ բրիգադի բրիգադիր ե նշանակված հարվածային կոլխոզնիկ Քոռմանուկյան Կարապետը: Հաճախ Մանաշը կարապետի հետ խորհրդակցում ե, վոր այդ բրիգադը նորից մինի առաջավոր:

* * *

Մանաշը, վորպես կուսակցության համակրող, պարբերաբար հաճախում ե քաղաքարապետունքները և ուսումնասիրում քաղգրագիտություն։

— Մի ժամանակ կարծում եյի, — ասում ե նա, — վոր յես կմամառունց սովորելու, սակայն այսոր յես արդեն գրագետ եմ և ծանոթանում եմ նաև յերկրի քաղաքական կյանքին։

Այն բրիգագը, վորտեղ աշխատում ե Մանաշը, ույսում ստացել ե ամենաբարձր բերքը, վորը Մանաշի և նրանման հարգածայինների աշխատանքի արդյունքն է։

Ամբողջ ժամանակ Զինյան Մանաշը մի քանի անգամ պարզեցարգել և թե կոլխոզի և թե գյուղխորհրդի կողմից, վորպես բարձր բերքի նախաձեռնողներից մեկը։

Հոկտեմբերյան տոնների նախորյակին նա կազմակերպեց իր ողակի աղջիկներին և զնաց կուլտուրական տեսք տալու առաջին բրիգադի դաշտակայանին։ Պարզեվատրված են նաև նրա ողակի անդամները կտորեղենով, փողով և այլն։

Մանաշն այսոր դարձել ե կուլխոզի պարձանքը։ Ցեղական մասին խոսք ե բացվում, նա ամաչկոտ ստում ե։

— Վոչ, յես ուղղակի կատարում եմ իմ պարտքը բոլորի հանգեց։ Այսոր ունեմ 210 աշխոր, կալխատեմ. վոր որեցոր ավելացնեմ նրանց թիվը և դառնամ ունեվոր։

— Ապա դու կարմիր ես լինել բրիգադիր, — հարցնում են նրան։

— Ինչու չե, յեթե կուսակցությունը հավատում ե և վստահում ե ինձ, յես կտանեմ նաև այդ աշխատանքը ԶԵ վոր յես խորհրդացին յերկրի գավառում։

Իսկ նրա վեց տարեկան աղջիկը յերգելով մոտենում ե մորն ու ասում։

— Մամա, այսոր յերգ սովորեցինք, — և սկսում ե յերգել։

Մայրը նայում ե իր աղջկան, ժպտուծ և ապա, շոյելով նրա գլուխը, պատասխանում ե։

— Կյանքը, սիրելիս, փոխվում ե. փոխվում ենք նաև մենք, Ցեղեկան քայլում կա կոլխոզ, յեթե ունինք այնպիսի մեծ ղեկավար, ինչպիսին ընկեր Ստալինն է, մենք և՛ յերգ կազմուենք, և ուրախ կապը ենք, և՛ ունեվոր։



Հենինյան ուղին կոլխոզի դաշտավարական բրիգադի բրիգագիր ընկ. ՔՈՍԵՑԱՆ ԿԱՐԱԳԵՏԸ, վորը 1936 թվին բերքատվության բարձրացման զործում ույսում գրավեց առաջնություն, տալով մեկ հեկտարից 28 ցենտներ աշնանացորեն։

ՄՐՑՈՒԹՅՈՒՆ

Կոլխոզնիկունի Սիրանուշը շատ հասարակ աղջիկ ե, հազիվ տասնկութ տարեկան։ Ամեն անգամ, յերբ նա իր ողակի հետ միասին աշխույժ քայլերով գնում ե աշխատանքի, նրա ածխի նման սես և աչքերում փայլում ե մի ինչ-վոր յերջանկություն, իսկ թուխ և կրոր դեմքի վրա թեթևակի խաղում ե նրա փոքրիկ բայց դուրեկան ժպիալ։

Քաղնանի զեռ առաջին որվանից Սիրանուշի ողակը մրցում եր հարեվան ողակի հետ։ Մրցակից ողակի ողակավար Կարապետը նայում ե Սիրանուշի աչքերին և հանաքով ասում։

— Թե իմ ողակը քոնից հետ մնա, Սիրանուշ, յես գետինը կմտնեմ։

— Գետինը մտնելու կարիք չկա, — պատասխանում ե Սիրանուշը, — միւնքույնն ե, յես կհաղթեմ։

— Կտեսնենք։

Նրանք նայում են իրար և թեթևակի ժպտում։ Նրանց ժպիտները հանդիպում են իրար և զարնան բացվող վարդերի պես փարթամանում։

Հետեյալ որը Սիրանուշն իր ողակի անդամների հետ միասին քաղնանի գործիքներն ուսերին դրած աշխուժ-աշխուժ շարժումներով, խոսելով գնում եր աշխատանքի։

— Գիտե՞ք, աղջիկներ, կարապետն ուզում ե հաղթել մեզ, նրա կարծիքով մենք պետք ե հետ մնանք…

— Բայց մենք պետք ե լարենք մեր ուժերը։

— Այո։

— Ծավալենք հարվածայնությունը։

— Յեզ այս ժամանակ կապացուցենք կարապետին, թե ուս ողակն ե առաջավոր, ումը հետ մնացող։

— Իսկ յեթե հանկարծ հետ մնանք, — կասկածանքով հարցնում ե Սոնան։

— Ինչու...

— Չե՞ վոր Կարապետի ողակն ուժեղ ե, նրանք բոլորն ել տղաներ են.

— Վոչինչ, —պատասխանում ե Սիրանուշը, — դա բոլորովին նշանակություն չունի... քաղանի աշխատանքը և տղաները և աղջկները կարող են իրար նման կատարել, այդտեղ ուժի բան չկա: — Բայց, չե՞ վոր...

— Վոչ մի բայց, միայն հարկավոր և աշխատանքի ցանկություն, աշխատանքի յեռանդ:

Սիրանուշի ողակը հասնում է արտերին: Սիրանուշը բրիգածի կողմից տրված որսկան նորման բաժանում է ողակի ութ նշանակությունից միջև և նրանք սկսում են աշխատել Սիրանուշը զավոր բարձրացող հասկերի արանքում վոչ մի սոլախոտ չմնա:

Ողակի բոլոր անդամների մեջ բոցավաված ե սոցմրցման և հարգածայնության հուրը: Ողակի ամեն մի անդամ մրցում է մեկ ուրիշի հետ, ամեն մեկը ձգտում է իր աշխատանքը կատարել վորակով բարձր և վորքան կարելի յե առաջ անցնել մյուսից և հեռվից, շատ հետվից կանչել.

— Սաթո, տես ուր հասա:
Յեկ կամ:

— Մարիամ, դու մինչեւ իրիկուն ել չարչարվես, իմ հետեւից չես հասնի:

— Կհամնես, —կպատասխանի Մանուշակը և նորից Սաթոն, Մարիամը, Սոնան, Մանուշակը, բոլորը, բոլորը միասին կաշխատեն, վոր ամբողջ ողակն իր որական նորման կատարի, գերակատարի և այդ բոլորը լինի վորակավոր:

Սիրանուշը նայում է հարեւան արտերի քաղհանողներին, Այս տեղ Կարապետի ողակն ե, թփով նրանք ել հավասար են Սիրանուշի ողակին: Սիրանուշը նայում է նրանց, նկատելով կարապետի ինչ-վոր շարժումներն ու մտածում:

— Ուզում ե անցնի, —ու նորից շարունակում ե արմատահան անել մոլախոտերը:

Սիրանուշը քաջալերում է իր ողակի աղջիկներին: Կարմրաթուշ կոլխովնիկուհիները մեջքերը ծուծ աշխատումնեն, ուրախ ուրախ քրքջալով խոսում աշխատանքի մասին և կամ յերգում:

Մոլախոտը մաքրենք արտից,
Վոր բերքը մեր հասուն լինի:

Սիրանուշն այս յերկտողի վրա բաց ե անում բերանը և սպիտակ ատամները ցույց տալով, ավելացնում:

Կարապետը մեռնի դարդից,
Թե պլանը չկատարի...

Աղջիկները բարձր ծիծաղում են:

Իսկ հարման արտերում կարապետի ողակն ամեն ջանք և թափում, վոր իր խոսքի տերը լինի:

— Մենք տղաներ ենք, —ասում ե նա, — աղջիկներից ել հետ մնանք, ամոթ ե, ընկերներ, խայտառակ կլինենք:

Այսպես կոլխողային յերկու ողակները լայնտաշարած արտերի կանաչ սալամնի վրա պայքարում են առաջնության համար: Նրանց մեկ-մեկ մոտենում ե բրիգածից կարդանը և խոսում ե ինչ-վոր թվերի ու նորմաների մասին և ապա, ուշագրությամբ զններով ողակների կատարած աշխատանքի վորակը, հեռանում դեպի մյուս ողակները:

Յերեկվա հանգստի և ճաշի ժամանակ կարապետն ու Սիրանուշը նորից բոնկվում են վեճերով, կապված քաղանի և սոցմրցման հետ: Նրանց ոգնության են գալիս յերկու ողակների անդամները և ճաշասեղանի մոտ կատարյալ շուկա յեն բաց անում:

— Բավական ե, կարապետ, — նկատողություն ե անում կոմյերիտական Մարտիրոսը, — շատ մի խոսեք, ավելի շատ գործ արեք, հազթանակն աշխատանքի մեջ ե, աշխատանքը կապացուցի, թե ով ե առաջավորը:

Ճաշից հետո կարապետը հավաքում է իր ողակի անդամներին և գնում հանգստանալու: Իսկ Սիրանուշն իր ողակի աղջիկների հետ միհասին անմիջապես գնում ե քաղանի վայրը:

— Մինչև նրանք հանգստանան, մենք կվերջացնենք, — ասում ե Սիրանուշը:

— Վոչ թե հանգստանան, այլ քնեն—ուղղում ե Սոնան:
— Նրանք սովոր են քնելու... թող քնեն, պլանները յերազներում կատարած կտեսնեն:

Բոլորը միանգամբից հոճացին:

Իսկ արեւը քաղանողների վրա կարծես հալած մետաղ ե լցնում և վառում նրանց մարմինը: Ամենից շատ վառվում ե Սիրանուշը: Նրա առանց այն ել թույս գեմքը, բաց թեվիրը, կուրծքը ներծծում են իրենց մեջ արեկի այրող ճառագայթները, վառում, և Սիրանուշն այդ կազդուրիչ ջերմությունից աշխատանքի մի նոր յե-

— Գետինը դու մտիր, — բարկանում ե Կարապետը և հեռանում:
Բոլորը հոհուում են նրա վրա:

— Տեսմք, Հաղթանակը մենք տարանք, — ասում ե Սիրանուշն
իր ողակի աղջիկներին և նրանց հետ միասին գնում ե հանգստա-
նալու:

— Իսկ յես կարծում եմ, վոր նրանք... — կմկմաց Սոնան:

— Թող, թող, — կտրում ե Սոնայի խոսքը Սիրանուշը: — Աղջիկ-
ներ, իսկ հիմա գնանք մի քիչ թերթեր կարգանք:

— Գնանք:

Իսկ յերբ գիշերն անցավ ու նորից բացվեց առավոտը, յերբ
Սիրանուշն իր ողակի հետ միասին գնում եր աշխատանքի, նկա-
տեց, թե ինչպես Կարապետի ողակն արդեն աշխատանքի վայ-
րումն ե:

— Յերեկվամ բացն եք ծածկում, — հարցրեց Սիրանուշը, անցնե-
լով Կարապետի ողակի մոտով:

— Թո բանը չի, գնա...

— Ժամանակ չունեք խոսելու, հա:

— Զունենք, — կարճ պատասխանում ե Կարապետը և ուժ տալիս
իրեն, վոր այսոր անպայման հաղթեն:

— Միւնույնն ե, չեք հաղթի

— Կտեսնենք, թե ով կնստի այս անգամ սավառնակի վրա:

— Կտեսնենք:

Սիրանուշի ողակը հեռացավ:

Յերբ նրանք սկսեցին աշխատել, արեք զեռ նոր եր բարձրա-
նում: Փչում ե հունիսյան զով քամին և զով անում քաղհանող-
ներին:

Սիրանուշը նորից նայեց սրտերի թափ կանաչներին, ծծեց
գաշտային մաքուր ողը և թափ ու յեռանդ տալով քաղհանող աղ-
ջիկներին, մտածեց:

— Մենք չենք իջնի սավառնակից, բայց մեր կողքին սավառ-
նակի վրա տեղ կտանք նաև Կարապետին և մյուս բոլոր ողակ-
ներին:

ԹԵ ԻՆՉ ՊԱՏՄԵՑ ՄՈՒՔԵԼ ՊԱՊԻՆ

Յես հաճախ ճանապարհորդություններ եմ կատարում մեր Մյասնիկյան ռայոնում, ծանոթանում եմ կոլխոզնիկների կենցաղի հետ, մի շարք ընտանիքներում գանաղան ոգտակար խորհություններ եմ տալիս: Չնայած իս յոթանասունյերկու տարեկան հասակին մեկ-մեկ հարգածային կոլխոզնիկների հարսանիքներում վեր եմ կենում և ջաճել յերիտասարդի նման պարում, պատմում եմ ու յերգում.

Ես բերքը բարին ե,
Ծիրանը ծառին ե,
Կյանքում այս ունեցոր
Ապրելու տարին ե:

Նման գեղքերը շատ, շատ են ուրախացնում ինձ: Յես ինձ ուղղակի քսան տարեկան եմ զգում, մկաններիս մեջ ուժ եմ հավաքում և ամբողջ եներգիաս ոգտագործում մեր նոր ու կուլտուրական կյանքի համար:

Անցյալ որ խելքիս փչեց և յես վեր կացա ու գնացի «Հեղալիք» կոլխոզը: Ինձ ընդհանրապես հետաքրքրում են կենցաղային հարցերը, կուլտուրան: Մատա կոլխոզի գրասենյակը:


1934 թվի աշունն եր:

Կոլխոզում, ինչպես և ամբողջ ռայոնում, անց եր կացվում կուլտուրական արշավ, ուրիշ խոսքով ասած՝ այնպիսի մի կարեվոր աշխատանք: Վարի իրագործման համար յես վոչ միայն ուժս ու հներգիաս, այլ նույնիսկ կյանքս կտամ:

Գրասենյակում հանդիպեցի կոլխոզի կուլտշտարի պետ Բառաշյանին: Հայտնեցի այցելության նպատակը:

— Խնդրեմ, խնդրեմ, — ասաց նա, — հիմա մեր կոլխոզի ամեն մի ընտանիքն ել մեծ ուրախությամբ կընդունի Մուքել պապուն:

Յես բարձրացրի աջ ձեռքս և ցույց տվի մի տուն:



Ռայոնի լավագույն վորակի տհուոչ ընկեր Թօֆուլ Յան Միքայելի

— Այ, այն տունը գնանք,—ասի:

— Միենույնն ե:

Յեվ յես Բառաշյանի հետ միասին զնացի այդ տունը: Դա կոլխոզիկ Մայկողույան Վարդանի տունն եր, վոր գտնվում է Ջենիսավանի ծայրամասում, Նրա տունը փոքրիկ ե և շատ գեղեցիկ, բլրի գլխին և նման ե թռչելու նախապատրաստվող սպիտակ աղավնու:

Յերբ մտանք բակը, պատշգամբի մոտ մեզ հանդիպեցին Վարդանի յերեք աղջիկները՝ Ազնիվը, Գայանեն և Զարուհին: Նրանք մեզ բարեվեցին պիոներների ձեզով, ապա զննական հայացքով նայեցին մեզ, յերեվի իմանալու համար, թե ովքեր ենք մենք և ինչու յենք յեկել:

Նրանց ժպտուն աչքերում յես խկույն նկատեց մեր նոր, ունեվոր կյանքի և սոցիալիստական դաստիարակության կնիքը: Նրանք հագնված եյին շատ մաքուր և ճաշակով:

— Հայրիկդ տանն ե,

— Վոչ, — պատասխանեց յերեխաներից ամենամեծը՝ Ազնիվը, — գնացել ե աշխատանքի:

— Իսկ մայրիկը:

— Ահա նա, մայրիկս, — ասաց նա և ցույց տվեց ներսից մեր ձայնը լսող և այդ բռպեցին գուրս յելնող թխաղեմ, բայց բավականին դուրեկան և գեղեցիկ կնոջը:

— Ներս համեցեք, — ասաց կինը բարակ ձայնով:

Մենք մտանք ներս:

Առաջինը, վոր գրավեց իմ ուշադրությունը, դա յերեխաների ձեռքով պատրաստված ընտանեկան լինինյան անկյունն եր:

Տան սենյակները զարդարված եյին շատ գեղեցիկ: Ողջ մաքուր: Պատուհանների մեջ կային միքանի ծաղկամաններ հոտավետ ծաղկներով:

Յես հետաքրքրվեցի այդ ընտանիքի կենցաղով: Ամենից առաջ հարցըրի, թե ինչպես եյին ապրում առաջ:

— ... Եդ մասին, պապի ջան, ել մի ասի. այստեղ ամենաթափթափված ապրողը մենք եյինք: Են ժամանակ վոր հստունը մտնեյիր, բոլորովին զատարկ եր, Վերջերս իմ ամուսինը, լսելով կուլտշտարի ցուցունքները, ասաց, վոր մի քիչ պետք ե կուլտուրական գառնալ, և մենք այնուհետև յերեխաներիս հետ միասին սկսեցինք գառնալ կուլտուրական, չգիտեմ, վորքան ենք այսոր կուլտուրականացել, այդ դուք ասեք:

- Դու կոլխոզում չե՞ս աշխատում:
- Աշխատում եյի, բայց մի ամիս առաջ հիվանդացա, բժիշկն ինձ արգելեց ծանր աշխատանք կատարել:
- Աշխոր շատ ունես:
- Ամուսնուս հետ միասին ունենք 270 աշխոր, գեռ ինչքան ել պետք ե ունենանք, իսկ անցյալ տարի ես ժամանակն ունեյինք միայն 170 աշխոր:
- Կարդալ գիտե՞ս:
- Վահ, եսպիսի կյանքում ապրող մարդն ել կարդալ չիմանաւ Այո, գիտենք, յես ու ասուսինս սովորում ենք մեծահասակների դպրոցում, յերեխաներից յերեքը նույնպես սովորում են. բացի դրանից, մենք ստանում ենք յերկու թերթ. մեր տունն եք սեսակ դպրոց եւ:
- Յերբ Վարդանի կինը տաքացած պատմում էր իրենց ընտանիքի մասին, այդ ըստեյին մոտեցավ նրան փոքրիկ Գայանեն, յերեխայրին կպավ մորը և հետո բաժանվելով մորից, մոտեցավ ինձ:
- Դու լավ աղջիկ ես,—փաղաքշեցի փոքրիկ աղջկանը:
- Պապի ջան, իմ մաման ինձ նոր շորեր ե առեր,—պատասխանեց նա իմ փաղաքշանքին:
- Միայն քեզ համար:
- Վոչ, Ազնիվի համար եւ Զարուհու համար ել...
- Իսկ յես,—ասաց Զարուհին,—պապայիս հետ պայմանավորվել եմ, վոր լավ սովորեմ, իսկ պապան՝ վոր շատ աշխորեր ունենաւ:
- Կեցցես,—ասացի յես և շոյեցի նրա գանգուր մազերը. Ապա վազելով գնաց Ազնիվի և Գայանեյի մոտ:

Վարդանի կինը՝ Աղավնին մեզ պատմեց իր յերեխաների մասին: Նրանք ամեն որ խելոք պարապում, դաս են սովորությենինյան անկյունում: Ազնիվը հաճախ դասերից հետո զանազան գեղեցիկ զույնզգույն նկարներ ե անում, ուզում ե նկարչուհի դառնալ, Գայանեն ամբողջ որը յերգում ե, իսկ Զարուհին պառւմ:

— Պատահում ե,—ասաց ամենավերջու Աղավնին,—վոր մարդ ու կին նստում ենք և յերեխաների «կոնցերտը» նայում:

Յերբ մենք կուրս եյինք զայիս տանից, Գայանեն վագեց, բռնեց փեղիցս և ասաց.

— Պապի ջան, ասա մամային վոր ինձ համար նվազելու գործիք առնի:



— Լավ, լավ, քո ժաման քեզ ճամար ամեն ինչ կառնի, — պատասխանեցի յես Գայանեն մոտեցավ Զարուհուն և նրա ական-ջին ինչ-վոր բան փափսաց:

— Լավ, յես այն ժամանակ ել ավելի լավ կպարեմ, — պատաս-խանեց Զարուհին և նրանք թուչկոտելով հեռացան դեպի բակի նորատունկ ծառերը, վորոնց միջև սարքավորված եյին փոքրիկ-փոքրիկ ծառուղիներ:

Բառաշանի հետ միասին նորից գնացինք կոլխոզի գրասեն-յակ: Այնտեղ նստած եյին մի քանի կոլխոզնիկներ:

Կոլխոզնիկներից մեկը վեր կացավ նստած աթոռից և ինձ հրավիրեց նստելու: Նա մոտ 35 տարեկան յերիտասարդ, ժրա-ջան մի մարդ եր: Նրա աչքերում վառվում եր յերջանկության հուրը:

— Վարդան, — ասաց Բառաշանն այդ մարդուն, — մենք քո տանն եյինք, Մուքել պապին ծանոթացավ կնոջդ և յերեխա-ներիդ հետ:

— Շատ շնորհակալ եմ:

Յերկու ժամ հետո դաշտային աշխատանքները վերջացան: Կոլխոզնիկները դաշտերից խմբերով գյուղ եյին գալիս: Յերեկո-յան կոլխոզի ակումբում կոլխոզնիկները մի փոքրիկ յերեկույթ սարքեցին: Նվազում եյին աշակերտները, յեկել եյին կանայք, աղջիկներ, ծերունիներ: Նվազում եյին, յերգում ու պարում:

Յես տեսնելով նրանց ուրախ տրամադրությունը, փոխեցէ միտքս, յերակներիս մեջ արյունը յեռաց, ուժս ու եներգիաս կրկնապատկվեցին: Մոտեցան վագողներին, ասի, վոր «լեզգինկա» Հնչեցնեն. Այդ յերեկո յես հեղալիքցիների մոտ պարեցի և յերգեցի.

Ես բերքը բարին ե,
Ծիրանոց ծառին ե,
Կյանքում այս ունեվոր
Ապրելու տարին ե:

ՀԱՆԳՍԻ ԺԱՄԸ ԲԲԻԳԱԴՈՒՄ

Սաստիկ շոգ եր:

Ոգոստոսյան վառ արեվը կարծես հուր եր մաղում յերկրի վրա՝
Դաշտում տարածվել ե Մեծ-Սալայի «Յերկրորդ հնդամյակ» կոլ-
խողի յերկրորդ բրիգադի դաշտակայանը:

Հանգատյան ժամ եր:

Կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհիներն ուրախ ծիծաղով ու
կատակով քերը արտերից քայլում եյին դեպի դաշտակայան,
Նրանցից մի քանիսը յերգում եյին: Առանձնապես լսվում եր
լավագույն հարվածայնուհի Չոբանյան Սաթենիկի ձայնը:

Նա յերգում եր.

Ուրախ յերգեր կան մեր սրտում,
Ամրանում ե կոլխոզը,
Ով յերգում ե և աշխատում,
Նա յե հիմա հերոսը:

Դաշտակայանում կային ժամանցի դանաղան կուլտուրական
միջոցներ, ստացվում են թերթեր, ժուրնալներ, կան լիգիզկուլտո-
գործիքներ, ուաղիո...

Եեվ ահա խոսում ե ուաղիոն, յերգում ե ուաղիոն, լնվագում ե
ուաղիոն...

Խոսում ե ուաղիոն...

Կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհիները լսում են լմայրաքա-
ղաք Մոսկվայից, լսում են Ռոստովից, լսում են աշխարհի տար-
բեր ծայրերից, լսում են մարդիկ և ուրախ բացականչում.

— Ո՞, ինչ լավ ե...

Ահա դաշտակայանի գլխավոր տան հովում նստել ե զառամյալ
ծերունի կոլխոզնիկ Լուսեղեն Դիմիրյանն ու խոսում ինքն իրեն։

— Ի՞նչ եյինք մենք առաջ, զնիվ եյինք, վտելի եյինք և վտելի
հասանք։ Առաջ մենք ուաղիոն ինչ եղածն ալ չիտեյինք, թերթալ



«Հ-ը հնդամյակ» կոլխոզի կուսականակերպչուհի ընկ. ՄԱՐԴԱՐՑԱՆ ՄԱՐԻԱՄԾԸ

չեր կարտայինք... Առաջ ջոկ-ջոկ եղած կը բանեյինք մեզի համար, շատ շատերը խաթի խարիբ եյին, մեծ կարիք ունելին և կարիքի մեջ ալ կմեռնեյին... Ժամանակը սալթը կերթար առչով և մեր կյանքը կենե չեր աղեկնար, ալայ յոռոլու քաղցածութին, տան-ջանք, դիմարութին...

Իսկ հիմա: Հիմա ամեն ինչ այլ ե: Թեկուզ հենց ինքը, զառամ-յալ ու ալիներ ծերունին, նա առաջ ինչ եր: Նա ինչ իմանար, թե ինչ բան ե այբուբենը, գիրն ու գրիչը: Խորհրդային որերում նա թերթ ե կարդում և ծանօթանում մեր յերկրում և վողջ աշ-խարհում կատարված անց ու գարձին:

Ահա մեկ ուրիշ տեղ, տան հովին նստել են հացահատիկ մա-ղող կոլխոզնիկունիներ Դոմբայան Հոփիսսիմին, Դոմբայան Մար-թան և կոլխոզի կուսկաղմակերպչունի Մարգարյան Մարիամը: Նրանք ևս մյուսների հետ միասին կազմակերպված կերպով լը-սում են ուղիղ, լսում են, թե ինչպես մեր յերկրում նորանոր մարդիկ հասնում են համաշխարհային ռեկորդների, թե ինչպես ամբողջ աշխարհում աճում ու ամրանում ե պրոլետարիատի ուժը...

Ծերունի Լուսեղենը նայում ե կանանց և, լսելով ուղիղոհաղոր-դագրությունը պարացյուտիստականներ Շիշմարեվայի և Պյասեց-կայայի նոր ռեկորդի մասին, նորից մտածում ե.

— Վազ եյին իդա կինմարթիքը: Մենք, երմարթիքս նացա մեր ետեղեն հասնելու և մեզի խատար գործ անելու իրավունք չեր տայինք, առաջ մինք նացա կսխմեյինք, համա ասոր ուղիոն ինչ կասե կինմարթոցը վրայով: Նաքայալ եղիլ ե երիմարթոցը հետ բարաբար երկինք ալ կելին, գետինին տակն ալ կըմուտնուն, ալայ տեղը կհաղթին: Ինչ հեռու երթալ, հանա մեր բրիգադի Մարթային ու Հոփիսսիմյին առնունք, հանա նաքա յալ կոլխոզին մեջը երմարթոցմեն հիշ չմնալե կը անին:

Նստած մասձում ե ծերունի Դեմիրյանը: Նա լսում ե ու-դիոն և ժպտում, այս անգամ արդեն բարձրաձայն ասում ե կոլ-խոզնիկունիներին:

— Ռադիոն խաթի հոչիս կուքա, բրիգադին մեջը ուղիո ունե-ցածներս խիստ աղեկ բան կերեվա:

— Պապի, ուղիոն նումայ կսիրիս,— հարցնում ե Մարթան:

— Հա, ուղիո կլսիմը, գիտիսքի ոյինավոր կըյաշանամ, գի-տիսքի ունեցած ուժու տամարդներուս մեջը խայնամիշ կլա, ադոր համար ալ շտե յես հիշ ձեզիմեն դեպետեվ մնալ չուղիմ:

Կոլխոզնիկները ծիծաղում են ծերունու խոսքերի վրա և հավանություն տալիս նրան: Իսկ Հոբիփոխմեն ասում են.

— Պապի, շուտով մեր գեղին մեջը ալային տունը ուաղիռ պիտլա:

— Եկեր լանը, առջի ուաղիռ առնողը յես պիտիլած, խաթի հավես իմ ադ բանին, — պատասխանում ե Լուսեղեն պապին ու գոհությամբ ժպտում:

Հանկարծ հնչում ե զանգը:

— Հայտը յելեք, կենե բանելու երթանք, — ասում ե ծերունին ե առաջինն ինքն ե վեր կենում տեղից ու շտապում աշխատանքի:

Նրա հետ միասին բոլոր կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհիները գնում են գեղի արտերը՝ շարունակելու դաշտային աշխատանքը:

Լուսեղեն պապին գնում ե ու մտածում այն մասին, վոր պետք ե շարունակել աշխատանքը, պետք ե աշխատել վոր ել ավելի հնչուն դառնան բրիգադի սաղիո ընդունիչի ձայները, վոր ինքը և իր նման բազմաթիվ ծերունիներ նոր սերնդի հետ միասին ձեռք բերեն ունեվոր ու յերջանիկ կյանք:



Թարոնի ստախանովական կոմբայնավար ընկեր ՅԱՎՌՈՒՑԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ, գործ
1936 թվի բերքահավաքին «Ստալինեց» կոմբայնով հավաքեց 882 հեկտար
հասկայիններ և արևածաղիկ:

ԿՈՄԲԱՅՆԱՎԱՐ ՀԱԿՈԲԸ

Սեպտեմբերի առաջին որերն եյին:

Մեքենա-տրակտորային կայանի դիրեկցիայի յերկնարկանի տան առաջ կանգնած եյին յերկու հոգի: Մեկը մեքենա-տրակտորալին կայանի դերեկտոր Յեփրեմ Հովհաննեսյանն եր, մյուսը զավագույն ստախանու վական կոմբայնավտր Հակոբ Յավրույանը: Նրանք դեռ նոր եյթ դուրս յեկել դիրեկտորի զրասենյակից, վորտեղ խոսում եյին Հակոբի նոր ոեկորդի և հետագա անելիքների մասին: Դուրս գալով նրանք դեռ շարունակում եյին այդ խոսակցությունը:

— Յեփրեմ Ավդեյիչ, — ասում եր Հակոբը դիրեկտորին, — յես վոչ մի դեպքում չպիտի հետ մնամ Բորինից:

— Շատ ուրախ եմ, — աշխատիր...

Ապա նա քայլերն ուղղեց դեպի ավտոմեքենան, վոր կանգնած եր քիչ հեռու: Նստեց ավտոմեքենան, մի անգամ ևս նայեց Հակոբին ու ասաց:

— Յես համատացած եմ, վոր դու քո խոսքի տերն ես, ցանկանում եմ հաջողություն:

— Յես միշտ ել իմ խոսքի տերն եմ, — պատասխանեց Հակոբը:

Շոփեր Թաշչյան Հակոբը հարցրեց:

— Ո՞ւր քշեմ:

— Սարաբաշյանի մոտ, — պատասխանեց դիրեկտորը: Հասնելով իր կոմբայնին, Հակոբն ուրախ ուրախ բարձրացավ նրա վրա և ասաց իր ոգնականին:

— Խաչատուր, աշխատիր այնպես անեւ վոր մեքենան չկանգնի:

— Լավ, — պատասխանեց նրա ոգնական Խաչատուր Շիրինյանը:

— Հաղթանակի գաղտնիքը պարապուրդներ չունենալն է, — շարունակեց դաշտային նավի կապիտան Հակոբը և հաճույքով նայեց արեվածաղկի դաշտին:

Արեվածաղկի հասուն և փիրուն գլուխները մեկը մյուսի հետեւից թափվում եյին կոնվեյերի վրա և կոնվեյերը նրանց մի ակնթարթում հասցնում էր կալսիչին: Հիանալով այդ հետաքրքիր տեսարանով, Հակոբը մեղմորեն ժպտաց և ակամայից ասաց.

— Հաղթանակը կլինի մերը...

Քիչ առաջ, յերբ Հակոբը գնացել եր մեքենա՝ տրակտորային կայան, «Մոլոտ» կոլխոզի մի կոլխոզնիկ Խաչատուրին տվեց ռայոնական թերթի այդ որվա համարը: Խաչատուրը, դիմելով Հակոբին, հարցրեց.

— Դու կարգացել ես «Կոմունարը». տես, մեր ազրեգատի անունն արդեն յերկրային պատվո տախտակին ե գրգած, — և ցույց տվեց Հակոբին ռայոնական «Կոմունար» թերթը:

Հակոբը վերցրեց թերթն ու կարդաց.

«Մեր ռայոնի լավագույն ստախանովական կոմբայնավարչնիկը Յավուրյան Հակոբը «Մտալինեց» կոմբայնով մինչև սեպտեմբերի մեկը հավաքել ե 632 հեկտար հասկայիններ: Ընկեր Յավուրյանը բարձրացել ե Ազգա-Մելքոնյան յերկրամասի բերահավաքման վարպետների պատվավոր շարքը»:

— Ո՞հ, ինչ լավ ե, — սրտի խորքից հրճվելով, ասաց Հակոբը և աջ ձեռքով ամուր խփեց Խաչատուրի ուսին ու շարունակեց, — յես այդպես ել գիտեյի:

Խաչատուրը ժպտաց ու, խոսք չգտնելով Հակոբին պատասխան տալու, շարունակեց ղեկավարել կոմբայնը: Իսկ Հակոբն ուրախությամբ գիտում եր ըրջապատող արեվածաղկի լայնատարած դաշտերը, վորտեղ արեվածաղկի հասուն գլուխները, սեպտեմբերյան մեղմ քամու տակ որորվելով, կարծես շնորհավորութեյին ստախանովական Հակոբին, կարծես վողջունում եյին առաջապար կոմբայնավարի նոր հաղթանակը:

— Չե, սա քիչ ե, սա գեռ չնչին հաղթանակ ե, — ասաց Հակոբը փոխարինելով իր ոգնականին, — յես անպայման պիտի հասնեմ Ազգվ. Մելքոնյան յերկրամասի առաջավար կամբայնավար կոստյա Բորինի սեկորդին, — վոգեվորվեց նա և, իր ամուր ձեռքերով ղեկավարելով կոմբայնը, շարունակեց, — գիտեմ, Խաչատուր, թե ինչ մտադրություն ունեմ:

— Ի՞նչ, — հարցրեց Խաչատուրը, փոքրիկ թիակով խառնելով բունկերի մեջ հավաքվող արեվածաղկի լեցուն սերմերը:

— Վարպեսողի Բորինի տարած հաղթանակը յեկող տարի մերը լինի, մենք քեզ հետ միասին պարտական ենք ել ավելի սովորել:

— Համաձայն եմ, — պատասխանեց Խաչատուրը գոհունակությամբ:

— Դե ուրեմն տուր ձեռքդ և խոսք առւր, վոր մենք յերկուսով այս ձմեռ պետք ե գերազանցորեն սովորենք ու յեկող տարի մեր յերկրամասում բռնենք ամենաառաջին տեղը:

— Տղամարդու պես կտանենք մենք այդ մեծ հաղթանակը, — նորից պատասխանեց Խաչատուրը:

Ու նրանք, Հակոբ Յավուրյանն ու Խաչատուր Շիրինյանն աշխատանքի այդ ամենայեռուն ժամին յերդվեցին ել ավելի ծագալված թափով շարունակելու պայքարը բարձր բերքատվության ու չտեսնված ունկորդների համար:

Խաչատուրն արագա-արագ քայլերով ներքեվ իջավ կոմբայնից՝ ստուգելու համար, արդյոք արեածաղկի սերմերը չեն մնում արեվածաղկի կալսված գլուխների վրա:

Փնչում եր տրակտորը, առաջ տանելով Հակոբի կոմբայնն աշնան խոնավ հողի վրայով: Որական մոտ քսան ժամ առանց կանգ առնելու առաջ եր շարժվում տրակտորը, կոմբայնը հավաքում եր կոլխոզյան առատ բերքը և նրա բունկերը մեկը մյուսի հետեւից լցվում եր արևածաղկի սերմերով, վորը դատարկում եյին սայլերի մեջ, նորից առանց կանգ առնելու:

* * *

Մյասնիկյան ռայոնի ականավոր կոմբայնավար Հակոբ Յավուրյանը պարծանքով ե հիշում իր հաղթանակի ուղին:

— Հին կյանքը, սովի, կիսամերկության, ստորացման և բարակության դառն որերն այլևս հետ չեն վերադառնալու, — ասում ե Հակոբը, — կյանքը հիմա ուրախ եւ Աշխատելը, պայքարելն ու հաղթանակ տանելն այսոր հերոսության ու պատվի մեծ գործ եւ:

— Ֆես հիմա գոհ եմ կյանքից, — ասում ե Հակոբը, — ապրում եմ լավ ու յերջանիկ, յես սիրում եմ աշխատանքը. մեր հաղթանակը մենք ձեռք ենք բերում մեր մեծ առաջնորդ Մտալինի անշեղ ղեկավարությամբ:

Յերեք տարի առաջ, 1933 թվին, Յավուրյանը, վորպես լավագույն տրակտորային բրիգադիր, առաջին իր մեծ հաղթանակը

տանելով, արժանացավ քաղբաժնի կարմիր գրքին: Դրանից յերկու տարի անց նա առաջ քաշվեց վորպես մեքենա-տրակտորային կայանի տնտեսավար: Սակայն այդ աշխատանքը նրան չբավարարեց: Նա ձգտում էր զեպի արտազրություն, նա սիրում էր անմիջապես աշխատել տրակտորի կամ կոմբայնի վրա:

— Չե, չե, — ասում էր նա ամեն անգամ, — յես մեքենայից չեմ կարող բաժանվել, մեքենան իմ շունչն ու հոգին ե, յես նորից աշխատելու յեմ տրակտորի կամ կոմբայնի վրա:

Հունվարյան մի ցուրտ որ Հակոբ Յավրույանը բաց արավ մեքենա-տրակտորային կայանի դիրեկտորի գրասենյակի դուռն ու համարձակ քայլերով մտավ ներս:

— Կարելի՞ յե, — հարցրեց նա:

— Խնդրեմ, խնդրեմ, — պատասխանեց Յեփրեմ Հովհաննեսյանը Ժպանությունում:

— Մի խնդիր ունեմ, — ասաց Հակոբը, նստելով ազատ աթոռներից մեկի վրա, — յես ուզում եմ նորից աշխատել մեքենայի վրա:

— Ի՞նչ մեքենայի:

— Ուզում եմ լինել կոմբայնավար, յես սիրում եմ աշխատել անմիջապես արտազրության մեջ:

Դիրեկտորը մի բոպե մտածեց, ապա ինչ-վոր բան գրելով, պատասխանեց:

— Լավ, քեզ կուղարկենք կոմբայնավարների կուրսերը: Թե ուզում ես՝ հենց վազգանից:

Հակոբի գեմքին փայլեց մի ուրախ ժպիտ:

— Ուրախությամբ կզնած այդ կուրսերը, — ասաց նա, — և կավարտեմ գերազանց գնահատականներով:

Յեվ նա զուրս յեկավ գրասենյակից:

Իսկ մի քանի որ հետո նա արդեն գտնվում էր Տագանրոգի կոմբայնավարների կուրսերում, իր տված խոստման համաձայն հաջող ավարտեց այդ կուրսերը և պարզեց վերադարձավ նորից ուայոն:

Ահա Հակոբի համառոտ կենսագրությունը, վորը ցույց ե տալիս, թե ինչպես նախկին բատրակը և կիսագրագետը, բոլշևիկներն կուսակցության դաստիարակությամբ, դառնում և առաջավոր մարտիկ:

Յավրույանի ընտանիքը յերբեք այնպիսի կյանք՝ չեր տեսել, ինչպես այսոր: Այդ ընտանիքն այսոր վայելում ե ունեվոր ու յերջանիկ կյանք, նրանց սեղանից վոչ մի որ չի պակասում

սպիտակ հայլ, պանիրը, կարագը, կաթը, յուղը, միսը և զանազան սթերքներ:

Յերբ խոսք ե լինում նոր կյանքի մասին, Հակոբն ասում ե.

— Ինչպես ընկեր Ստալինն ե ասել, կյանքը մեր յերկրում ուրախ գարձավ: Հիմա յես իմ աշխատած փողերով վերանորոգելու յեմ իմ տունը, գնելու յեմ կան կարասի, Յես ունեմ շատ գրքեր, կարգում եմ թիգթեր, գնելու յեմ նաև Ռոտրովսկու «Ինչպես եր կոփիում պողպատը» և Ֆուրմանովի «Զապայեվ» գրքերը: Մի խոսքով ապրելու յեմ ինժեների նման, — ավարտում ե իր խոսքը:

Այդպիս ե ապրում հերոսը:

Կյանքից, աշխատանքից, Խորհրդային Միության կարգերից միշտ գոհ, միշտ ուրախ, և այդ կյանքի համար մարտնչող կուսակցական կոմբայնավար ստախանովական Յավրույան Հակոբը շարունակում ե իր պայքարը նորանոր հաղթանակներ ձեռք բերելու համար:

ՄԵՐ ՍԿՍՆԱԿՆԵՐԸ

ՀԵՐՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրով նվիրում եմ Մյասնիկյան
Մեքենատրակտորային կայանի
Լենինյան շքանշանակիր տրակտորիս՝
Մարտիրոս Սարգսյանին:

I

Նրա սրտի խորքում վառված արև կա մի,
Ժողկլտում ե հա հար՝ վորպես դեղին քուրա,
Վողջունում ե կյանքը վորպես բարեկամի,
Ու վարդեր են բացվում ջահել դիմքի վրա:

Նա քայլում է ուրախ, յերգն և ասում կյանքի,
Հուլունքների նման նրա խինդն և փայլում,
Նա հերոս ե դարձել հզոր աշխատանքի,
Կուռ ու հաստատ դեպի կոմունիզմ ե քայլում:

II

Ո՛, սիրելի ընկեր, Մարտին Սարգսյան,
Հերոս յեղար դու մեծ ու հաղթանակ տարար,
Ինքը, Յերկերը մեր, վորպես բացված շուշան,
Շքանշան տվեց հաղթանակիդ համար:

Շքանշանն այդ դու բարձր ես պահում,
Վորպես առաջնորդի մեծ պարզեն անգին,
Վորի մեջ կա և կյանք, և գովասանք անհուն,
Ու փառքը կա անմար, հզոր աշխատանքին:

Կյանքը պայքար ե մեծ, մարդիկ՝ պայքարողներ,
Վոր յեռում են անդուլ կյանքի յերակներում,
Դու յել պայքարում ես, իս սիրելի ընկեր,
Շարքում հերոսների դու յել անվերջ յեռում:

Քշիր, քշիր կրկին քո տրակառըն առաջ
Ու տար քեզ հետ մեկտեղ անթիվ հերոսների,
Վոր դաշտերից անծիր մենք բերք առնենք առաստ,
Թոշենք համատարած հերոսությունք արի:

1936 թ. հունիս, Զալթը

ՅԵՐԳ ԿՈՄԲԱՅՆԻ

Դեղնավուն արտերի ծովում,
Դաշտերի շոգենավ վորպես,
Կոմբայնը սարքել ե հանդես
Դեղնավուն արտերի ծովում:
Կոմբայնը հնչում ե, լողում
Դաշտերի շոգենավ վորպես,
Դեղնավուն արտերի ծովում
Կոմբայնը սարքել ե հանդես:

Կոլխոզի արտերում անծիր,
Դեմքերիս յերշանիկ ժպիտ.
Մենք բերք ենք հավաքում վճիռ
Կոլխոզի արտերում անծիր:
Հրկիզող արևը կարմիր
Մեզ ուժ ե ներշնչում փթիթ,
Կոլխոզի արտերում անծիր
Մենք բերք ենք հավաքում վճիռ:

Չի կորչում և վոչ մի հատիկ
Կոլխոզի արտերի միջից,
Թշնամուն յերբեք չենք զիջի
Կոլխոզի և վոչ մի հատիկ:
Բանում են յերշանիկ մարդիկ,
Յերգում են ու բանում նորից,
Չի կորչում և վոչ մի հատիկ
Կոլխոզի արտերի միջից:

Հատիկը վոսկի յե ու գանձ,
Ժպիտն և ունեսը կյանքի,
Կոլխոզի դիրքերում անթիվ
Հատիկը վոսկի յե ու գանձ:
Բացել ենք դռներն անանց,
Հոսում և հեղեղը բերքի,
Հատիկը վոսկի յե ու գանձ,
Ժպիտն և ունեմոր կյանքի:

2936 թ. հունիս, Զալթը

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ ԿԱԼՍՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեքենան բանում և արագ,
Կոլխոզի ցորենը կալսում,
Ժպտացող բերքի պես հասուն
Մեքենան բանում և արագ:
Հատիկի հեղեղը վարար
Կալսիչից պարկերն և հոսում,
Մեքենան բանում և արագ,
Կոլխոզի ցորենը կալսում:

Յեռանդուն դեմքերը խոսուն
Փոյլում են արեվի նման,
Բանում են նոր կյանքի համար
Յեռանդուն դեմքերը խոսուն
Խուրձերը թոշում են, հոսում,
Վոր գեղին հատիկներ դառնան
Յեռանդուն դեմքերը խոսուն
Փայլուն են արեվի նման:

Կոմսոմոլ Սիրանեն ժպտուն
Բանում և, խոսում ու յերգում,
Կոլխոզի գեղնավուն բերքում
Փայլում և Սիրանեն ժպտուն:
Խուրձերի կապերը քանկում
Յեռանդուն ձեռքերով յերկու,
Կոմսոմոլ Սիրանեն ժպտուն
Բանում և, խոսում ու յերգում:

Ամեն մի խուրձի մեջ դեղին
Սիրանեն տեսնում ե պայքար,
Ժպտում ե արևը պայծառ
Ամեն մի խուրձի մեջ դեղին:
Հատիկներ կան վորքան անգին
Ունեփոք մեր կյանքի համար,
Ամեն մի խուրձի մեջ դեղին
Սիրանեն տեսնում ե պայքար:

Հերոսի պես կայտառ, հատու
Սիրանեն տեսնում ե մեկին,
Իր սիրած կոմսոմոլ տղին
Հերոսի պես կայտառ, հատու:
Բոլորը միասին արթուն
Կալսում են խուրձերը դեղին,
Հերոսի պես կայտառ, հատու
Նոր կյանք են բերում նոր գյուղին:

ՅԵՐԿՈՒ ՅԵՐԳ ՅԵՐԿՈՒ ՄԱՐՈՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Նկարեցի մի աղջկա...»
Խ. ԴԱՇՏԵՆՅ

1.

Նա նկարեց այն աղջըկան,
Սիրեց նրան, բայց նա գնաց,
Նրա համար Մարոն չկա,
Յեվ ինքը շատ տիսուր մնաց:

Այն որերին կոիվ կար մի,
Կովում եյին յերկու բանակ,
Հանկարծ արյան ծովում կարմիր
Այն աղջիկն ել ընկավ անահ...

Սուր գնդակը խոցից նրան,
Յեվ նա կոչեց — միս, յես մեռա...
...Հետո որեր, որեր անցան,
Մեր բանակը հաղթեց նրանց:

Յեվ նա նորից հիշում ե դեռ
Իր նկարած այն աղջկան,
Թղթի վրա գրում յերգեր
Ու նկարում նորից նրան...

2.

Ճանաչում եմ յես պայքարուն
Ուրիշ Մարոն՝ ժիր ու կայտառ,
Նա ապրում ե մեր որերում
Յեվ աշխատում կյանքի համար:

Աշխատում ե նա կոլխողում,
Սովորում ե, կարդում ե գիրք,
Հաղարների հետ ե խոսում
Հերոսի պես կայտառ ու ժիր:

Յերեկ նրան նկարեցի,
Իսկ նկարը տվի թերթին,
Տակին յերեք բառ գրեցի՝
«Սա Մարոն ե հարվածային»:

Այսոր թերթի ճերմակ եջից
Նա ժպտում է վարդը դեմքին,
Յեկ հայացքում նրա վճիտ
Փայլուն ե վառ հուրը կյանքի:

3.

Յերկու աղջիկ, յերկու Մարոն,
Մեկը մեռավ զոռ պայքարում,
Մյուսն ապրում ե նոր հույզերով
Կյանքի հասուն մեր որերում:

ԻՄ ՍԵՐԸ

Այն, վոր ամառվա արեվի շողից
Կոլխոզի արտերն են հասկերով լցվում
Ու վողջունելով ծագող արեվին
Զեփյուների հետ ուրախ փսփսում,
Այն, վոր կեսորվա կիզիչ շողերից
Յեռանդի հուրն ե մարդկանց գրավում,
Ուշք չդարձնելով թափող քրտնքին
Կոլխոզի արտում ուրախ աշխատում,
Յես այն եմ սիրում:

Այն, վոր խուրձկապի յերկաթե ճանկից
Պատրաստ խուրձերն են թռչելով թափվում
Ու գլուխ տալով ննձվող արտերին
Լեցուն հասկերը ծովի պես ծփում,
Այն, վոր արակտորի ուրախ փնչոցից
Կոլխոզի յեռուն մարտիկն ե ժպտում,
Բարձրացնում կուրծքն ուրախությունից,
Բերրի հասկերն ե արտից հավաքում,
Յես այն եմ սիրում:

Այն, վոր կալսիչի բերանում ազան
Անթիվ, անհամար խուրձեր են լեցնում
Կուշտ հատիկները հոսանքով վոսկե
Հեղուկի նման պարկերն են թափվում,
Այն վոր ամառվա կիզիչ որերին
Բրոնզագիմ մարդիկ անդուլ աշխատում,
Պետության պլանն են կատարում լրիւ
Հարվածայնության հուրը սրտերում,
Յես այն եմ սիրում:

Կ Ի Ն Ը

Գենսուրախ ես ու տոկուն,
թեև տարիք ես տռած,
Չես խնայում ուժերըդ,
աշխատում ես նվիրված,
Սոցիալիզմի մեր յերկրում
դու դարձել ես քաջ մարտիկ,
Ու կերտում ես կյանքը նոր,
Խաթլամաջյան Գեղեցիկ:

Հետամնաց ու խավար
մի կին եյիր անցյալում,
իսկ այսոր դու ծաղկում ես,
նոր կյանքի մեծ պայքարում:
Այն որերն անց կացան
ու խորտակվեց կյանքը հին,
Յեվ դու դարձար պայքարող
ու կառուցող ազատ կին:

Յեվ ծնվում են ու կոփում
քեզ նմաններն անհամալ,
Գործով ձեռք են բերում նոր
հերոսություն ու պատիվ:
Սոցիալիզմի այս յերկրում
դու յել վորպես մի մարտիկ,
Կառուցում ես կյանքը նոր,
Խաթլամաջյան Գեղեցիկ:

ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒՅՆԻ ՎԱՐԴՈՒՇԸ,
ԳՈՐԾԱԼՔՈՂՆ ՀԱՅԿԱՆՈՒՇԸ

Հարվածայնուհի Վարդուշը
Զգտում ե գեղ ունեվոր կյանք,
Զի խնայում վերջին ուժը,
Գործադրում ե ամեն ջանք,
Վոր միշտ ու միշտ գործի պահին
Հետ չմնա, առաջ անցնի,
Մյուսների հետ հարվածային
իր կոչումն արդարացնի:

Գործալքող Հայկանուշը
Սուտ հիվանդ ե միշտ ձևանում,
Այսոր գլուխն ու ականջը,
Վաղն ատամներն ե ցավում,
Մյուս որ կաբագ ու մածունով
Դեպի քաղաք ե շտապում,
Յեվ այդպիսով նրա վոսկի
Ժամանակն ե իզուր անցնում:

Յեվ յերբ յեկավ բերբի աշուն,
Փշեց քամին շուրջը բոլոր,
Հայկանուշը չուներ մածուն
Կաթ չեր տալիս կոմի որեցոր:
Իսկ վարդուշն ուրախ ժպտուն
Յերեք հարյուր աշխոր ունի,
Նա ձմեռվա ցուրտ որերին
Յեվ կուշտ, և տաք պիտի լինի:

Յերք կոլխողը ցորեն տվեց,
Աշխորերի դեմ փայ արավ,
Մեր վարդուշը մի կառք բերեց,
Մի սայլաքեռ ցորեն տարավ:
Հայկանուշի աշխորերի
Փայն ընկավ մի կոտ ու կես.
Տեսած հիմա, Հայկանուշ ջան,
Թե աշխատես, դու յել կուտես:

ՅԵՐԳ ՔԱՂՋԱՆԻ ՀԵՐՈՍՈՒՅՆՈՒՆ

Мы,
Все сорные травы
вычистим,
Весь бурьян,
что зовется —
кулак.

А. Безыменский

Բացվում ե չքնաղ այզը մայիսյան
Մեր ծաղկող յերկրի դաշտերում համակ,
Ու կանաչում են արտերը գարնան,
Հնչում են յերգեր վորպես հաղթանակ:

Կոլխողնիկները քաղհան են անում
Կանաչ արտերում մեր կոլխողների,
Վորպես պայքարի հզոր արձագանք.
Զիլ յերգն ե հնչում մեր հերոսների:

Թաղհան են անում խմբերը կանանց,
Յեռում ե խինդն ամենի սրտում,
Իսկ քո ողակը ժիր ու փառապանձ
Միշտ առաջինն ե հաղթական մարտում:

Յեվուկ աչքերդ փայլում են զվարթ,
Ինչպես վառ գարնան արեվը պայծառ.
Դու քաղհանում ես, նայում ես հպարտ,
Հերոսուհու պես աշխուժ ու կայտառ:

Արտի պես գարնան կանաչ ես ու թարմ,
Յերակներում քո արյունն ե յեռում,
Պայքար ես մղում լավ բերքի համար,
Ժպտում ես դու կուշտ, արտերն ես մաքրում:

Կառուցող մեր մեծ բանակում հիմա,
Արտերի նման մեր կանաչազարդ,
Դարձել ես սիրվող, տոկուն ու անահ,
Հերոս ես գարձել յերկրում մեր ազատ:

Ամեն մի տղա և ամեն մի կին
Ուզում ե քեզ հետ կոփվել, պայքարել,
Տոն տալ ունեվոր մեր ուրախ կյանքին,
Ուժ տալ արտերին ու հաղթանակիլ:

Պայծառ գարուն ե... իսկ դու յերջանիկ
Աղջիկների հետ կոլխողի արտում,
Վորպես մի նվեր որերին գալիք,
Բերքի համար ես անահ պայքարում:

Ո՛, դու կոլխողի ժապտագեմ աղջիկ,
Մեր ծաղկող յերկրի արտերում համակ,
Դու յերգ ես ասում զիլ ու անուշիկ,
Հնչում ե յերգդ վորպես հաղթանակ:

1936 թ. Կարմիր Թոփտի

ԼՈՒՍԻԿ

Ինձ հետ միասին, կողք-կողքի նստած,
Սիրուն մազերդ խնամքով սանրած,
Հայացքդ վճիտ ջրերի նսան
Տիրապետում ես բարձունքն ուսման:

Խորհրդային մեր ուրախ դպրոցում,
Յերջանիկ կյանքի պայծառ գարբնոցում,
Դու սովորում ես մեզ հետ միասին
Ու գրքեր կարդում նոր կյանքի մասին:

— Մենք ընդունակ ենք, — ասում ես դու ինձ,—
Պտուղներ քաղել գիտություններից,
Նրանք վորքան ել աճեն, մեծանան,
Մենք կսովորենք, հաղթող կդառնանք:

Յես հավանում եմ քո այդ խոսքերին,
Տիրապետում ենք գիտություններին,
Մենք սովորում ենք, նոր ուժ ենք առնում,
Ունեվոր կյանքի մարդիկ ենք դառնում:

Առաջ աղջկերք չեյին սովորում,
Տառապում եյին նրանք խավարում,
Առաջ կար ստոր ու դաժան մի կարգ,
Մութ եյին նում առաջ մեր կանայք...

Իսկ հիմա, Լուսիկ, մեր վառ որերում
Մեր աղջկներն ուրախ ու յեռուն
Տղաների հետ աշխուժ ու համառ
Պայքարում են սիշտ նոր կյանքի համար:

Յեվ զու ել ահա, իմ ընկերուհի,
Վորպես ժպտագեմ պիոներուհի,
Ինձ հետ միասին ուրախ դպրոցում
Ժիր ու համարձակ առնում ես ուսում:

Ոգնում ես դու միշտ քո ընկերներին
Յեվ սովորում ես միշտ հարվածային,
Ասում ես — անվերջ ուսում ստանանք,
Լենինի ճամբով մենք տուաչ գնանք:

Մեծ Ստալինի ցույց տված ճամբով
Միշտ առաջ գնանք, ապրենք լավ կյանքով,
Վորքան ուրախ ենք, վորքան յեռանդուն,
Ալ վարդի նման միշտ թարմ ու խնդուն:

Ո՛, ընկեր Լուսիկ, ուրախ դու աղջիկ,
Արագ աճում ես կյանքում յերջանիկ,
Դու սովորում ես ինձ հետ սիասին
Գրքեր ենք կարդում նոր կյանքի մասին:

1936 թ. Զալթը

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Դու շուտ արի, Հոկտեմբեր,
Մեր խանդավառ տոնը քեր,
Ազատության տոնը մեր
Ինչ սիրուն ես, Հոկտեմբեր,

Սպասում ենք անհամբեր
Մենք սեծ տոնին կենսաբեր,
Վոր վոնց հեղեղ մեր սրտում
Վարարում ե ու հորդում:

Լավ ենք ապրում մենք հիմա
Կյանքում այս վառ ու հմա,
Աշխատավոր մարդը մեր
Գործ ե անում, աճում վեր:

Մեր հայրերը քեզ համար
Պայքարել են անդադար,
Ու պայքարի դիրքերում
Թափել կարմիր վառ արյուն...

Դասակարգը մեր ուժեղ,
Պայքարելով միշտ անշեղ,
Հաղթանակեց յերկրուս մեր
Ու հաստատեց Հոկտեմբեր:

Ունենք մենք մեծ առաջնորդ՝
Ստալինը կրակոտ,
Նա մեր հայրն ե հանճարեղ
Նա մեզ հետ ե ամեն տեղ:

1936 թ. Զալթը

ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐԸ

Վորքան սիրուն ե գաղնան գիշերը,
Լուսինը կաթ ե հորդում լուսաշող,
Գիշերը փռած կապույտ փեշերը,
Հողն ե համբուրում ինչպես մարդ շնչող...

Գարնան գիշեր ե... դուրս յելա մենակ,
Յերկինքը բաց եր, աստղերը փայլուն,
Վորքես պայքարի մի մեծ հաղթանակ
Մի յերդ լսեցի զոհ ու վարարուն:

— Դու առաջ գնա, արակտոր իմ ուժեղ,
Վարիր սե հողը, խոպանը հերկիր,
Մենք գրոհում ենք հաստատ ու անշեղ,
Մենք միշտ ուրախ ենք յերկրում մեր կարմիր:

Այդ հերոսներն են մեր կոլխոզների,
Վոր յերգում են մեր կյանքը յերջանիկ,
Յերգն ե դա անահ տրակտորիստների,
Վոր հողն են հերկում յերկրում անվանի:

Տրակտոր ու մարդիկ կոլխոզի դաշտում
Գարնան աստղագարդ պայծառ գիշերին,
Յերգ եյին ասում, վար ու ցան անում,
Աշխատում եյին թունդ հարվածային:

Ու լսեցի յես կոլխոզի դաշտում
Կենսուրախ մարդկանց յերգը գիշերվան:
Կոլխոզնիկը մեր ուրախ ե յերգում,
Վորքան սիրուն ե գիշերը գաղնան:

ՅԵՐԳ ԳԱՐՆԱՆ ՄԱՍԻՆ

Դաբուն ե, ջմն, կրկին գարուն,
Մեր կոլխոզում սովետական,
Գարնանային թափով յեռուն
Մեծանում ենք բարգու նման:

Մեծանում ենք, հասակ առնում,
Դնում գործի, աշխատանքի,
Մկանների ուժով հանուր
Խինդը կերտում մեր նոր կյանքի:

Լանատարած մեր գաշտերում
Աշխատում են մեքենաներ,
Նրանք հողին թափ են ըերուժ
Մի կենսավառ ու աներեր:

Դեկավարն ե առաջնորդում
Մեր աշխարհում հատու, անշեղ,
Ու պայքարի նման հորդուն
Մենք աճում ենք, դառնում ուժեղ:

Մասսաների թափով արի
Մենք քայլում ենք դեպի գարուն,
Հերոսության ու պայքարի
Այս նորակերտ մեր աշխարհում:

ՇՈՖԵՐ ԳԵՎՈՐԴ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻՆ

Շոֆեր ես դու հմուտ, դիտուն,
Աչքերդ միշտ հառած հեռուն,
Դեկը ձեռքիդ ամուր բռնած.
Քո ավտոն ես քշում առաջ,

Դու կրում ես կոլխոզների
Վոսկեհատիկ բերքը բերքի,
Սլանուժ ես ճամբանեցով
Լայնատարած մեր դաշտերով:

Ճամբաներով սահուն ու հարթ,
Քո յեռանդով յերիտասարդ
Դու կոլխոզի բերքն ես կրում
Ամբարները մեր վարարուն:

Շոֆեր ես դու հմուտ, դիտուն,
Աչքերդ միշտ հառած հեռուն,
Դեկը ձեռքիդ ամուր բռնած.
Սլանուժ ես դեպի առաջ:

1936 թ. Նիսվիթա

ԽԻՆԴ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ

Ցես պիտոներ եմ ուրախ, զվարթ,
Դպրոց գնում, սովորում եմ,
Ժամանակ մի վորպես մի վարդ,
Կյանքի ուժ կա ձեռքերում իմ:

Ծնողներս կոլխոզնիկ են,
Հարվածային, գործով արթուն,
Մենք ունենար ընտանիք ենք
Խորհրդային մեր աշխարհքում:

Ընտանիքում, թե դպրոցում,
Աշխատանքի յեռուն ժամին,
Մի նոր կյանք եմ յես կառուցում
Ծնողներիս հետ միասին:

Անգրագետ եր իմ մայրեկը,
Զեր իսանում զրել, կարգաւ
Բակ այսոր մեր ընտանիքը
Ստանում ե թերթ ու ժուրնալ:

Մայրեկս թարմ թերթ ե կարգում,
Իսկ հայրեկս զրում նամակ,
Վոր աճում ե հիմա արթուն
Դրագետների մի նոր բանակ:

Մենք գնում ենք թատրոն, կինո,
Կամ կոլխոզի ընթերցարան,
Կառուցում ենք աշխարհ մի նոր,
Ունեվոր ու կուլտուրա՝ լան:

Ու նորից յես ուրախ, զվարթ,
Դպրոց գնում, սովորում եմ,
Ժպտադեմ եմ վորպես մի վարդ,
Յեվ նոր ուժ կա ձեռքերում իմ:

Սուլթան Սալտա

ՏԻՐԱՑՈՒՅԱՆ ՎԱՐՍԵՆԻԿ

Առավոտվա վաղ ժամին, արեվ վառ լույսի տակ,
Դու կանգնել ես ծիծաղուն մարգերի մոտ վոնց պահակ,
Ու յերգում ես մի զել յերգ, յերգիդ ձայնը գեղեցիկ
Փակում ե թարմ ողի մեջ, Տիրացույան Վարսենիկ:

Բաղուկներդ դու պարզած՝ աշխատում ես մարգերում,
Վառ ժամիտ վորպես վարդ, վոր բացվում ե ու բուրում,
Քաղճանում ես անընդհատ, հաղթանակում վոնց մարտիկ,
Չես ել հոգնում դու յերբեք, Տիրացույան Վարսենիկ:

Վորքան յեռանդ կա քո մեջ աշխատելիս հանդերում,
Վորքան ուրախ հնչյուն կա եղ քո յերգած յերգերում,
Բարձրանում ե քո գործը յեռանդովդ գեղեցիկ,
Հարվածային աշխատող, Տիրացույան Վարսենիկ:

Դու մարտիկ ես կոլխոզի ու նոր կյանքի ունեվոր,
Պայքարում ես ու ձգտում զեպ աշխատանք ամեն որ,
Յերկու հարյուր քան ութ աշխոր ունես բերքով լիք,
Յեվ աշխատում դեռ ելի, Տիրացույան Վարսենիկ:

Քո ունեխոր կյանքը ճոխ, բերքով լիցուն, փառափոր
Մոտենում ե ժամ առ ժամ հաղթանակով մի հզոր,
Իսկ դու լցված խնդությամբ, մաքուր ու պարզ, վոնց հատիկ,
Կյանքի յերգն ես ասուժ նոր, Տիրացույան Վարսենիկ:

ՄԵՐ ԴԱՇՏԵՐՈՒՄ

Այսոր ինչքան հորդ աշխատանք,
Քրտինք և ուժ, ճիգ ու լարում,
Աշխատանքի ինչքան յեռանդ,
Ինչքան խինդ կա մեր դաշտերում:

Այսոր ինչքան հաղթ կոմբայներ
Մեր դաշտերը յելան մարտի,
Վորպես տանկեր կուռ մարտերի,
Վորպես նշան հաղթանակի:

Այսոր ինչքան հոծ մասսաներ,
Կազմ ու պատրաստ յելան հունձի,
Մրտով արի ու աներեր,
Դիրքերն անցան բերքհավաքի:

Այսոր ինչքան խնդուն սրտեր,
Ճոխ հասկերի բերքով արբած,
Կարկաչում են զվարթ յերգեր,
Մեր դաշտերում համատարած:

Այսոր ինչքան հորդ աշխատանք,
Քրտինք և ուժ, ճիգ ու լարում,
Վորտեղ մարդն ե կոփում հոր կյանք,
Կոլխոզական լայն դաշտերում:

ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒՅՈՒՆ

Յերբ առավոտյան արևն ե ծագում
Յեզ վոսկե հուրը նետում գաշտերին,
Յերբ սիրով անուշ, յերգերով բազում
Շուրջզար և բռնում թովն արտերի,
Դու այն ժամանակ աշխուժ յիռանդով
Կարմիր լաշակը կառած քո գլխին,
Դեմքդ բաց արած ու նոր յերգերով
Գնում ես հանուր դու աշխատանքի:

Շողում ե զեմքիդ արշալույսը վառ,
Յեզ գու յերգում ես յերգը նոր կյանքի,
Հարվածայնության թափով կինսավառ
Հյուսում ես գովքը քո աշխատանքի,
Նոր կյանքի մասին, կինցաղի, թափի,
Նշում քո անցած պայքարի ուղին,
Արտերի զավակ, ժրաջան ու ժիր
Իմ ջան ու ջանել հարվածայնուհի:

Մըցման ես կանչել դու ընկերոջի,
Վոր աշխատանքիդ վրբակն աճի,
Վոր բարձր բերքի ստալինյան կոչը
Ուղենից դառնա գործում վառ ու ջինջ
Յել ամին մի քո շարժումը տոկուն
Ունեվոր կյանք և բերքում նոր գյուղին,
Սոցիալիստական արտերի մարտիկ,
Իմ ջան ու ջանել հարվածայնուհի:

ԻՄ ՅԵՐԳԸ

Քնար իմ, յերգիր կոլխոզները մեր,
Ու հերոս սարդկանց մեր կոլխոզների,
ԶԲ վոր մեր յերկրում կան շատ հերոսներ,
Դու յերգն ասա մեր հերոսների:
Դու հաղթանակը յերգիր մեր տարած
Յեվ առաջնորդին անահ ու տոկուն,
Յերկիրը լսի թող համատարած
Այն վառ յերգերը, վոր կա իմ հոգում:

Մեր ստալինյան այս հզոր գարում
Յեվ կոլխոզներում մեր բոլշևիկյան,
Վորպես կենսաբեր մի ուրախ գարուն
Կյանք կա ունեղոր ու գովք հաղթական:
Կուսակցությունը մեր ամեն մի ժամ
Մեզ ուժ ե տալիս, տանում ե առաջ,
Մեծ Ստալինը, վորպես բարեկամ,
Դեկավարում ե գործերը մեր քաջ:

Ստախանովական ուժեր կան անթիվ
Մեր կոլխոզներում ու քաղաքներում,
Աշխատանքը մեր դարձել ե պատիվ
Յեվ հերոսության գործ ե մի յեռուն:
Յես եւ, վորպես մի ուրախ կոլխոզնիկ,
Վորպես մասնակից մեր մեծ պայքարի,
Յերկրի մարդկանց հետ կազմած ընտանիք,
Յեվ աշխատում եմ, և յերգում արի:

Վատ եյի ապրում ցարիզմի որով,
Մեզ ճնշում եյին, պատժում, հալածում,
Յեվ աշխատեցնում շատերին զոռով,
Բանտարկում եյին ու անվերջ ծեծում...
Բայց հինը մեռավ, ու նորը ծնվեց,
Մեր դասակարդը հաղթեց թշնամուն,
Զքավոր մարդկանց ուրախ կյանք տվեց
Ու զենք տվեց նոր՝ լենինյան ուսմունք:

Հիմա ապրում ենք ուրախ, յերջանիկ
Յեվ սովորում ենք անվերջ, անլազար,
Ուրախ ե հիմա ամեն ընտանիք
Դյուղերում մեր նոր գաշտերում դալար:
Մարդիկ ենք զարձել մենք կուլտուրական,
Առաջ ենք քայլում հնգամյակներով,
Յեվ կոլխոզներում մեր բոլշևիկյան
Կաղը եր են աճում բյուր հազարներով:

Կարմիր բանակն ե պահպանում մեզ միշտ,
Վորոշիլովը մեր քաջ ու զորեղ,
Դեկավարում ե նա հաստատ ու ճիշտ
Ստալինի հետ մեծ և հանճարեղ:
Թող իժ յերգերը լսվեն ամենուր,
Թող աշխատանքը յերգեմ կենսուրախ,
Մեր կյանքը լավ ե, ուրախ ու աճուր,
Իմ յերգը մեծ ե, հաստատ ու անվախ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

եջ

Հարազոտ, սիրելի իռութիվ Վիսարիոնովիչ (նամակ ընկեր Սաալինին)	3
Համ Կ(բ)կ Կենակոմ ընկեր Ստալինին	8
Աղով. Սեծովյան յերկրամասի Մյասնիկյան ռայոնի տնտեսական և կուլտուրական շինարարության մասին (Խ-Մթնչ ժողովրդական կոմիսարների խորհրդի վորոշումը)	9
Մ. Ցեղիազարյան.—Պայքարի և հաղթանակի տաս տարին	12

Ծանօթակիրներ

Ա. Հովհաննեսյան. — Մարտինը	35
Վ. Վարդանյան. — Անդրանիկ Կուսուղյան	49
Զարքար Կուլբիբայյան	65

Ռայոնի անվանի մարդիկ

Ս. Վարդանյան. — Սարգիսը և նրա գործերը	79
Թեոդոր Ֆոն. — Մանաշը	91
Մրցություն	95
Թե ինչ պատմեց Մուրել պատին	100
Գարեգին Զորանյան. — Հանգստի ժամը բրիգադում	104
Վարդերես Զալիախյան. — Կոմբայնավար Հակոբը	107

Մեր սկսնակներ

Թեազար Ֆոն. — Ներսություն	115
Յերգ Կոմբայնի	117
Տրիունիսել կալողոների մասին	119
Յերկու յերգ յերկու Մարոների մասին	121
Յէ. Հայլամազյան. — Իմ սերը	123
Կինը	124
Հարվածային Վարդուշը, գործակը Հայկանուշը	125
Դանիել Թոփտենց. — Յերգ քաղնանի հերոսունուն	127
Սիմոն Բարյան. — Լուսիկ	129
Հոկտեմբեր	131
Կյուրեն Բարյան. — Գարնան զիշերը	132
Ա. Փիկիվանյան. — Յերգ գարնան մասին	133
Գեվորգ Մկրտչյան. — Շոփեր Գեվորգ Վարդեվանյանին	134
Արտաշես Գյալըյան. — Խինդ պիոներական	135
Մ. Խաչիառազյան. — Տիրացույան. Վարսենիկ	137
Մերժաւառուցյան. — Մերացույան. Վարսենիկ	138
Մերժ Թաշյան. — Մեր դաշտերում	139
Յեյյա Դույյան. — Հարվածային	140

Ответственный редактор *Ա. Բ. Սաֆյան*
Тех. редактор *Դ. Մ. Ջինիբալայն*

Уполномочил № О-2107. Формат А 5. Сдано в набор 16 ноября
1936 г. Подписано в печать 27 декабря 1936 г. Объем 9 печат-
ного листа. Заказ 597. Тираж 700.

Типография краевого армянского издательства „ГРО“
Ростов н-Дону, Ворошиловский пр., № 27

«Ազգային գրադարան



NL0203948

ՀՀ Ազգային գրադարան



NL0203948

30.020

ԳԻԱՅ
Цена 2 լուր.
р.у.б.

4271

На армянском языке
СЛАВНОЕ ДЕСЯТИЛЕТИЕ

СБОРНИК
посвященный десятилетию
Мясниковского района

Издательство газеты
„КОММУНАР“
Мясниковского района